

ՄԱՐԶԻԳ

ՀԱՇՎ

Մարզիկ

Մճղը ՐԵԱՅԻՆ ՏՃԵՐԻՆԵ
ՏՎԵՐԻՄ ԴՄԵՆԻ ԵՍՄԵՆՏԻ ՍԵՐՏ

marzig

SPORTS MAGAZINE

33Դ ՏԱՐԻ, 2014, ԹԻԻ (388-390) 10-12 VOL. XXXIII N# 10-12 ԻճԵՐ ՈՒՄ 10-12 ԻճԵՐ ՈՒՄ 10-12



ՉԱՓ ՈՒ ՄԱՀՄԱՆ

ԱՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԵԱՆԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Թղթակից
ՊՈՒՐԾ ՅԱՄՈՒՏ

14 Մարտ 2015-ի յետմիջօրէին, Հ.Մ.Ը.Մ.Ի Պուրճ Համուտի կեդրոնատեղին այցելեց Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան, ընկերակցութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեանի:

Կեդրոնատեղիի շէնքին առջեւ, նախարար Յակոբեան դիմաւորուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական վարչութեան, Լիբանանի Շրջանային վարչութեան դիւանի անդամներու եւ Պուրճ Համուտի մասնաճիւղի սկաուտներուն կողմէ:

Կեդրոնատեղի այցելելով նախարար Յակոբեան ծանօթացաւ Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ կառոյցը ղեկավարող գրասենեակներուն եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրատան:

Այս առիթով իր արտասանած խօսքին մէջ, Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան բարի գալուստ մաղթեց Սփիւռքի նախարարին ու դեսպանին՝ կարեւոր նկատելով Սփիւռքի նախարարութիւն-Հ.Մ.Ը.Մ. գործակցութիւնը: Ան նշեց, որ Հայաստանի մէջ առիթ կը ստեղծուի յաճախակի հանդիպումներու, սակայն Սփիւռքի նախարարին եւ Հայաստանի դեսպանին առաջին պաշտօնական այցելութիւնն է այս Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնատեղի:

Եղբ. Մկրտիչեան աւելցուց, որ Սեպտեմբերի սկիզբը



Հայաստանի մէջ պիտի գումարուի միութեան 11-րդ Պատգամաւորական ժողովը, որուն ներկայ պիտի գտնուին Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ ընտանիքի ներկայացուցիչները: Այս առիթով ան հրաւիրեց Սփիւռքի նախարարը ներկայ գտնուելու ժողովի բացման հանդիսութեան:

Իր կարգին, նախարար Հրանոյշ Յակոբեան կարեւոր նկատեց Սփիւռքի նախարարութիւն-Հ.Մ.Ը.Մ. գործակցութիւնը: Ան իր ուրախութիւնը յայտնեց այս այցելութեան համար եւ նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ականները արդէն իսկ ամէն տարի Հայաստանի մէջ բանակումներով կամ մարզախաղերով իրենց ներկայութիւնը կը փաստեն ու կը գիտակցին, թէ իրենք միշտ կապուածութիւն մը ունին հայրենիքին նկատմամբ:

Շարունակելով, Հրանոյշ Յակոբեան կեդրոնացաւ Հ.Մ.Ը.Մ.Ի նշանաբանին եւ գանազան առիթներով որդեգրուած Հ.Մ.Ը.Մ.ական նշանաբաններուն վրայ, որոնք կարճ եւ դիպուկ են՝ պատասխանատուութեամբ եւ հայրենասիրութեամբ լեցուն:

Սփիւռքի նախարարութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի միջեւ վերջերս կնքուած համաձայնագիրին անդրադառնալով՝ նախարար Յակոբեան նշեց, որ նմանօրինակ գործակցութիւններ յաւելեալ փաստեր են համագործակցութեան եւ կապուածութեան: Ան յայտնեց, որ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ գումարուած Հայաստան-Սփիւռք 5-րդ խորհրդաժողովի արձագանգը եղած է դրական:



ԱՅՍ ԹԻԻԲ

33րդ ՏԱՐԻ, 2014, ԹԻԻ 10-12 (388-390)
www.Homenetmen.org



Մարզական ամսաթերթ
Հրատարակություն՝
Հ.Մ.Ը.Մ.Ի
Կեդրոնական Վարչություն

ԽՄԲԱԳԻՐ
Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Սեդա Պէշլեան-Սաղպազարեան,
Մարո Քէշիշեան (Արեւմտեան
Մ. Նահանգներ), Յակոբ
Խաչատուրեան (Արեւելեան
Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Գրիգորիս Պողարեան
Պատրիկ Կիւլպէնկեան
Աբօ Մոսիկեան

ԹԵՔՆԻԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Separation - Photogravure
Paklayan

Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ՀԱՍՅԷ

Պուրճ Համուտ, Նոր Մարաշ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 00961 1 248043, 260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud,
Lebanon

marzig
SPORTS MAGAZINE

ՅՐԻՈՒՄ-ՎԱՃԱՌՔ

Լիբանանի մէջ թերթին
ցրումը կը կատարուի
յատուկ ցրուիչով (71/ 239209):
Տարեկան բաժանորդագրութեան
սակ ճշդուած է՝ Լիբանան \$32
Միջին Արեւելեան եւ
Եւրոպական երկիրներ \$70,
Մ. Նահանգներ եւ Աւստրալիա \$75

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.Ի Սեկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:



20

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Պատգամ 5
- Դէմքերու հետ 7
- Անդրադարձ 10
- Մեր Տեսակցութիւնները 15
- Պատմութիւն 17
- Ակնարկ 25
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 28
- Մեր Կորուստները 68



32

ԲԱԺԻՆՆԵՐ

- Համահայկական Խաղեր 3
- Դաստիարակչական Հոգեր 20
- Միջազգային 26
- Մանկապատանեկան 70
- Տարբեր Հայեացքով 72



48



36-37

ՓԱՏՏԱԲՈՒՂԹ



Խ
Մ
Բ
Ա
Գ
Բ
Ա
Կ
Ա
Ն

ՉԱՓ ՈՒ ՍԱՀՄԱՆ

Բնութեան օրէնքով ամէն բան ունի իր չափն ու սահմանը: Ամէն ինչ իր չափին ու սահմանին մէջ հաճելի է, օգտակար է: Սակայն երբ չափն ու սահմանը կը խախտին, ամէնէն օգտակար նկատուած բաներն անգամ կը դառնան վնասակար:

Բնութեան օրէնքը կիրարկելի է նաեւ մարդոց համար: Ամէն տարիքի, ամէն խաւի ու դիրքի մարդիկ ունին, պէ՛տք է ունենան չափի ու սահմանի իրենց զգացողութիւնը, որ պիտի կանոնաւորէ մարդկային յարաբերութիւնը: Կրտսեր մանուկը չի կրնար շրջանցել ծնողքին սահմանը եւ կատարել բաներ, որոնք մեծահասակներու միայն կրնան արտօնելի ըլլալ: Մարզիկն ու սկաուտը չեն կրնար ներկայացնել անսահման պահանջներ եւ ակնկալել, որ պատասխանատուները ընդառաջեն իրենց:

Պետութիւններ, միութիւններ եւ հաստատութիւններ ունին իրենց օրինագիրքերը, որոնք կը ճշդեն իւրաքանչիւր անհատի իրաւունքներուն եւ պարտաւորութիւններուն չափն ու սահմանը: Շրջանցողները կը նկատուին կանոնազանց ու կ'ենթարկուին համապատասխան տնօրինումի:

Այս բոլորը ընդունուած եւ ընդհանրացած երեւոյթներ էին մինչեւ մեր մօտիկ անցեալը, երբ տակաւին գոյութիւն չունէր ընկերային հաղորդակցութիւններու մերօրեայ աշխարհը: Մինչեւ երանելի այն օրերը, երբ ամէն ինչ կը մնար ժողովական, ակմբային սեղմ շրջանակի մէջ: Երբ մարդիկ հեղինակութիւններ կը ծանչնային ու հանգամանքներ կը յարգէին: Մեծերէն կ'ակնածէին, փոքրերուն հաշիւը կ'ընէին: Չըլլա՞յ, թէ մեծերը վրդովէին, իսկ փոքրերը սխալ օրինակ տեսնէին:

Երանելի այդ օրերուն ամէն մարդ

գիտէր իր չափն ու սահմանը, ըսուելիքը եւ չըսուելիքը, նաեւ՝ այդ բոլորը ո՞ր ըսելը եւ ինչպէ՛ս ըսելը: Մարդիկ տասը կը մտածէին եւ մէկ կ'արտայայտուէին: Խօսքը արժէք ունէր, խօսքը պատասխանատուութիւն կ'ենթադրէր:

Այսօր աշխարհը տարբեր է: Չափ ու սահման չի ծանչնար: Մարդիկ ընկերային հաղորդակցութեան միջոցներու մէջ իրենց խօսքը, նկարն ու տեսանիւթը կը փոխանցեն սանձարձակ ազատութեամբ: Ամէն մարդ ինքզինքին իրաւունք կու տայ արտայայտուելու ամէն ինչի մասին, առանց մտածելու, թէ ըսելիքը, տեղն ու ձեւը կը պատշաճի՞ն իր հանգամանքին: Վարժապետը դաս կու տայ վարչապետին, անառակը՝ կղերականին, նորեկ մարզիկը՝ վարչական պատասխանատուին, միութենէն հեռացուածը՝ միութենականին եւ շարքը երկար է:

Կարելի չէ շարունակել այսպէս, անհաշիւ ու անպատասխանատու մօտեցումով: Պէտք է վերադառնալ մեր բնական չափերուն եւ սահմաններուն: Ընկերային հաղորդակցութեան միջոցները չեն կրնար փոխարինել ժողովական քննարկումները: Առօրեայ դժուարութիւնները չեն կրնար բեմ գտնել միլիոնաւոր մարդոց դիմաց: Ժամանակն է, որ մարդիկ՝ ֆէյսպուքահայեր գիտնան, թէ ո՞ր ի՛նչ կրնան ըսել: Ամէն մարդ ամէն մարդու հաշուետուութեան չի կըրնար կանչել հանրային քննարկումով: Հաշուետուութեան տեղը ուրիշ է: Հասցէն ծանօթ է, կարգը՝ նոյնպէս:

Չափ ու սահմանի խախտումէն ոչ ոք կ'օգտուի: Բոլո՛րը կը վնասեն: Իսկ մեծագոյն վնասողը կ'ըլլայ բարոյական արժէքներու մեր համակարգը, առանց որուն կը դադրինք կազմակերպ հաւաքականութիւն եւ ազգ ըլլալէ:

Կը դադրինք սերունդներու տէրն ու ծառան ըլլալէ:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ 6-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԸՆԹԱՆԱՆ ՄԵԾ ԹԱՓՈՎ

Այս ամառ, 2-13 Օգոստոսին, համահայկական 6-րդ մարզախաղերը անգամ մը եւս իրենց վրայ պիտի հրաւիրեն աշխարհասփիւռ հայութեան ուշադրութիւնը, երբ պիտի համախմբեն հայ մարզասէր երիտասարդութեան ըստ-լար «բանակը», 17 մարզաձեւերու բազմահազար մարզիկներով եւ անոնց ընկերակցող պատուիրակութիւններով:



ուութեամբ այն պարագաներու, որոնք ճշդուած են տուեալ մարզաձեւի մը միջազգային ֆետերասիոնին կողմէ:

Համահայկական 6-րդ մարզախաղերուն պիտի բաժնուին 315 մետալներ (105 ոսկի, 105 արծաթ եւ 105 պրոնզ) 30 տարբեր ճակատումներու ընթացքին: Ճակատումները պիտի ընդգրկեն հետեւեալ մրցումները.- աթլէթ (տղաք եւ աղջիկներ), պատմիւթըն (տղաք եւ աղջիկներ), բազկամարտ (տղաք եւ աղջիկներ), պասքեթպոլ (տղաք եւ աղջիկներ), կոլֆ (տղաք եւ աղջիկներ), թենիս (տղաք եւ աղջիկներ), լող (տղաք եւ աղջիկներ), ծովափնեայ վոլիպոլ (տղաք եւ աղջիկներ), հէնտպոլ (տղաք), հեծելարշաւ (տղաք եւ աղջիկներ), հրաձգութիւն (տղաք եւ աղջիկներ), մինի ֆուլթպոլ, ճատրակ (տղաք եւ աղջիկներ), փինկ-փոնկ (տղաք եւ աղջիկներ), մարզական պարեր, վոլիպոլ (տղաք եւ աղջիկներ) եւ ֆուլթպոլ:

Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին զուգահեռ պող այս մարզախաղերը, անկասկած, պիտի ըլլան մեծագոյնը, գեղեցկագոյնը եւ լաւագոյնը: Հայրենի մարզական պատասխանատուներ ամիսներէ ի վեր լծուած են տենդագին պատրաստութիւններու՝ մարզախաղերը անմուռանալի իրադարձութեան մը վերածելու համար:

Ինչպէս նախորդ մարզախաղերուն, այս մարզախաղերուն եւս կրնան մասնակցիլ քաղաքներու հաւաքական խումբեր եւ անհատ մարզիկներ: Մասնակիցները կրնան իրենց քաղաքը ներկայացնել, եթէ հայկական ծագում ունին մօրը եւ հօրը կողմէ, միայն մօրը կողմէ, միայն հօրը կողմէ եւ կամ՝ ամուսնութենէ ետք ստացած են իրենց հայ ամուսինին մականունը: Մասնակցութեան տարիքի սահմանափակում չկայ, բացա-

րով (տղաք եւ աղջիկներ), հէնտպոլ (տղաք), հեծելարշաւ (տղաք եւ աղջիկներ), հրաձգութիւն (տղաք եւ աղջիկներ), մինի ֆուլթպոլ, ճատրակ (տղաք եւ աղջիկներ), փինկ-փոնկ (տղաք եւ աղջիկներ), մարզական պարեր, վոլիպոլ (տղաք եւ աղջիկներ) եւ ֆուլթպոլ:

Համահայկական խաղերուն բաժակներ պիտի շնորհուին ֆուլթպոլի, մինի-ֆուլթպոլի, հէնտպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, ծովափնեայ վոլիպոլի, փինկ-փոնկի, դրօշարշաւի եւ 4x100 մետր լողի ախոյեան խումբերուն:

Յատուկ բաժակներու կ'արժանանան մարզախաղերու լաւագոյն պատուիրակութիւնը, արդար խաղ ցուցաբերող խումբը, մարզական ոգի եւ համբերութիւն ունեցող խումբը եւ համահայկական խաղերու յայտնութիւնը նկատուող խումբը: Կը կատարուի նաեւ համահայկական խաղերու գեղուհի ընտրութիւն:

Մարզախաղերու բացման հանդիսութեան, Սփիւռքէն մարզիկ մը եւ Հայաստանէն իրաւարար մը մասնակից մարզիկներու եւ իրաւարարներու անունով կը կատարեն հետեւեալ երգումը.-

«Բոլոր մասնակիցներու անունով կ'երգնում, որ համահայկական խաղերուն կը մասնակցինք՝ յարգելով եւ ենթարկուելով մարզական գործող կանոններուն, համաձայն մարզական ոգիի, յանուն մարզական պատուի, մասնակից քաղաքներու, հայ ժողովուրդի եւ մեր հայրենիքի՝ Մայր Հայաստանի փառքի»:





«Բոլոր իրաւարարներու անունով կ'երդնում այս խաղերը դատել լիովին անկողմնակալ՝ յարգելով եւ ենթարկուելով մարզական գործող կանոններուն, համաձայն մարզական ոգիի, յանուն մարզական պատուի, մասնակից քաղաքներու, հայ ժողովուրդի եւ մեր հայրենիքի՝ Մայր Հայաստանի փառքի»:

Ստորեւ՝ կիրարկուելիք մարզախաղերուն ցանկը մասնակիցներու ճշդուած թիւերով:

- **Ֆուտբոլ**- 21 մասնակից, 18 մարզիկ եւ 3 պատասխանատու:
- **Մինիֆուտբոլ**- 15 մասնակից, 12 մարզիկ եւ 3 պատասխանատու:
- **Պասքեթբոլ**- 15 մասնակից, 12 մարզիկ եւ 3 պատասխանատու:
- **Վոլիպոլ**- 15 մասնակից, 12 մարզիկ եւ 3 պատասխանատու:
- **Ծովափնեայ վոլիպոլ**- կը կատարուին խմբային խաղեր, իւրաքանչիւր խումբ կը բաղկանայ 2 խաղացողէ:
- **Աթլէթ- նկատի առնուած են 25 տեսակ մրցումներ, 12-ը աղջկանց, իսկ 13-ը տղոց համար:**
 - **Աղջիկներ՝** վազք 100 մ., 200 մ., 400 մ., 800 մ., 1500 մ., 4x400 մ., 4x100 մ. դրօշարշաւ, մէկ քայլ ոստում, երեք քայլ ոստում, գունտ նետել, նիզակ նետել, սկաւառակ արձակել:
 - **Տղաք՝** վազք 100 մ., 200 մ., 400 մ., 800 մ., 1500 մ., 5000 մ., 4x400 մ. եւ 4x100 մ. դրօշարշաւ, մէկ քայլ ոստում, երեք քայլ ոստում, գունտ նետել, նիզակ նետել, սկաւառակ արձակել:
- **Թենիս**- կը կատարուին տղոց եւ

աղջկանց անհատական եւ գոյգի մրցումներ:

- **Ճատրակ**- կը կատարուին տղոց եւ աղջկանց անհատական մրցումներ: Մրցումներու մասնակիցները հարկ է միջազգային ընդհանուր դասաւորման մէջ ունենան 2300-էն նուազ կէտ:

- **Պատմինթըն**- կը կատարուին տղոց ու աղջկանց անհատական եւ գոյգի մրցումներ:

- **Լող- նկատի առնուած են հետեւեալ մրցումները-**

- **Աղջիկներ՝** ազատ ոճ 50 մ., 100 մ., պրաս 50 մ. եւ 100 մ., ազատ լող 4x50 մ.,

- 4x100 մ., 4x200 մ., համակցուած լող 4x100 մ., թիթեռնիկ 50 մ. եւ 100 մ., կռնակի վրայ լող 50 մ. եւ 100 մ.:

- **Տղաք՝** ազատ ոճ 50 մ., 100 մ., 200 մ., պրաս 50 մ. եւ 100 մ., ազատ լող 4x100 մ., թիթեռնիկ 50 մ. եւ 100 մ., կռնակի վրայ լող 50 մ. եւ 100 մ.:

- **Մարզական պարեր**- կը կատարուին խմբային եւ անհատական մրցումներ: Նկատի առնուած պարերն են՝ եւրոպական եւ լատին ամերիկեան 10 պարեր. դանդաղ եւ արագ վալս, թանկօ, արագ ֆոքստրոտ կամ քուրք սթէփ, սամպա, ռումպա, չաչա, փասատուպլէ եւ ճայֆ:

- **Կոլֆ**- կը կատարուին անհատական մրցումներ:
- **Հէնտպոլ**- կը կատարուին խմբային մրցումներ, իւրաքանչիւր խումբ կը բաղկանայ 7 մարզիկէ:
- **Բազկամարտ**- կը կատարուին անհատական մրցումներ (աջ ու ձախ ձեռքերով):

- **Հեծելարշաւ**- կը կատարուին անհատական եւ խմբային մրցումներ. 15 քլմ. (Ակնայ լիճ) անհատական, 45 քլմ. (11 շրջան 4 քլմ.ով) խմբային:

- **Հրաձգութիւն**- կը կատարուին անհատական մրցումներ:

- **Աղջիկներ՝** ատրճանակ 10 մ. 40 կրակոց, հրացան 10 մ. 40 կրակոց:

- **Տղաք՝** ատրճանակ՝ 10 մ. 60 կրակոց, հրացան 10 մ. 60 կրակոց:



ԾԱՌԱՅԵԼ ԳԱՂՈՒԹԻՒՆ, ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի 100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Կեանքի մէջ միշտ առաջինը տարբեր եղած է: Մանուկի մը առաջին թոթովանքը, առաջին քալուածքը, պատանիի մը առաջին փորձութիւնը, առաջին ուրախութիւնը, երիտասարդի մը առաջին վկայականը, առաջին սէրը, առաջին զաւակը, տարբեր արժէք եւ նշանակութիւն ունին, անկասկած:

Առաջինը ըլլալ կը նշանակէ միշտ առաջինը մնալու մարտահրաւէրը ունենալ: Տեւական ջանք թափել առաջինը մնալու, լաւն ու լաւագոյնը ըլլալու համար:

Առաջինը ըլլալ կը նշանակէ նաեւ անդրանիկը ըլլալ: Բարոյական պարտաւորութիւնը ունենալ մնացեալէն աւելի հասուն եւ փորձառու ըլլալու: Մնացեալին օրինակ դառնալու եւ առաջնորդի դեր ստանձնելու:

Սա պահուն, այս բոլոր մտածումները մեր միտքը կու գան, որովհետեւ մենք պարտականութիւնը ունինք ողջոյնի խօսք փոխանցելու Հ.Մ.Ը.Մ.ական մասնաճիւղի մը մասին, որ պատիւը ունի առաջիններէն ըլլալու միութեան պատմութեան մէջ: Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ», Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամբ»ին հետ, միութեան աշխարհասփիւռ մեծ ընտանիքի 106 մասնաճիւղերու առաջիններէն է, որ 2014-ին կը բոլորէ իր հիմնադրութեան 100-ամեակը:

Անծանօթներու կրնայ անհասկնալի թուիլ, թէ ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը գոյութիւն ունեցած է նախքան Հ.Մ.Ը.Մ.ը, որովհետեւ միութիւնը հիմնուած է 1918-ին, մինչդեռ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ը ստեղծուած է 1914-ին:

Պատասխանը շատ պարզ է. Հ.Մ.Ը.Մ. իբրեւ մտածողութիւն, մտայնութիւն եւ ապրում, գոյութիւն ունեցած է նախքան Հ.Մ.Ը.Մ.ական կառոյց եւ կազմակերպութիւն ըլլալը: Իսկ ատոր պատիւը կ'երթայ Գահիրէի մեր սքանչելի գաղութին, որ անհրաժեշտութիւնը, բայց մանաւա՛նդ հեռատեսութիւնը ունեցած է մարզական եւ սկստական գործունէութիւն ունենալու՝ նախքան Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր-կանոնագիր գոյութիւն ունենալը:



Ի վերջոյ ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ.ը, դրօշա՞կ, քայլեր՞ք, կանոնագի՞րք թէ այդ բոլորէն առաջ ապրում, գործ եւ առաքելութիւն:

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» եղած է Հ.Մ.Ը.Մ.ական ապրումի, գործի եւ առաքելութեան առաջին ջահակիրներէն, որովհետեւ ան ջահը ստանձնած է Ազգային Գալուստեան վարժարանի շուրջ բոլորուած խումբ մը նուիրեալ մարզասէրներէ, առաջնորդութեամբ վարժարանի տնօրէն Մինաս Ծալեանի եւ մարզանքի ուսուցիչ Հայկ Նալճեանի: Անոնց կողքին մեծ եղած է երախտիքը Ստեփան Ամիրայեանի, «Հայկական Ֆուլթայրի Տորք քլիւպ»ի եւ «Հայկական Մարզական ակումբ»ի անդամակցած տղոց, որոնք մինչ այդ օտար ակումբներու մէջ մարզուող Գահիրէի երիտասարդութիւնը աստիճանաբար

փոխադրած են հայկական միջնորդութիւն:

Մեծերու սերունդ մը կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի առաջին սերունդը, որուն արժանի յաջորդները ըլլալը կ'ենթադրէ անոնց ազգային-մարմնակրթական աւանդին ու ժառանգութեան տէր ըլլալ: Հայ մարմնակրթութեան արժէքներուն եւ սկզբունքներուն պահպանը ըլլալ:

Ու անվարան պէտք է հաստատել, որ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» անցնող մէկ դարուն եղաւ ու մնաց հայ մարմնակրթութեան յիշատակին արժանաւոր տէրը: Ան սկստական գործունէութիւն ծաւալեց, երբ գաղթաշխարհի այլ շրջաններ գաղափար իսկ չունէին սերնդակերտ այս շարժումին մասին:

Ան մարզական հոյակապ շարժում ծաւալեց, երբ հայ թէ օտար շրջանակներ հազիւ համեստ քայլեր կը նետէին այս ուղղութեամբ:

Իսկ ամէնէն կարեւորը, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» Գահիրէի գաղութին ճամբով եգիպտահայութեան եւ ամբողջ Սփիւռքին տուաւ հոյ մը դէմքեր, որոնք ազգային ինքնութեան եւ դաստիարակութեան ախոյեանները հանդիսացան տասնամեակներ շարունակ:

Հայ մարզական պատմութեան ոսկեմատեանը հարուստ է Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի անուանի մարզիկներու անուններով: Ո՛վ պիտի չ'ուզէր հպարտանալ լսելով անունները Անտոն

Յովսէփեանի, Թումիկ եւ Սիմոն Սետէֆճեան եղբայրներու, Հայկ Ասատուրեանի, Թորոս Խաչատուրեանի, Տիգրան Յովսէփեանի, Արշակ Տէիրմէնճեանի, Յակոբ Սեմէրէճեանի, Արթին Յակոբեանի, Յարութիւն եւ Կարպիս Օհանեաններու, Յակոբ Ղազարեանի, Գրիգոր Նիզիպլեանի, Վարուժան Զուրիկեանի եւ պասքեթպոլի յաջորդական կազմերու ոսկեայ տղոց:

Կարելի՞ է գլուխ չխոնարհել վաստակին դիմաց սկառուական այն մեծ առաջնորդներուն՝ Անդրանիկ Արթինեանին եւ Հայկ Պէյլէրեանին, որոնք շնորհակալ գործ կատարեցին տասնամեակներ շարունակ:

Տակաւին, պէտք է յիշել այս բոլորը համադրող, կազմակերպող ու առաջնորդող վարչականները՝ Յարութիւն եւ Ստեփան Ամիրայեանները, Շամլեան եւ Սետէֆճեան եղբայրները, Ստեփան Խանճեանը, Անդրանիկ Արթինեանը, Երուանդ Թումայեանցը, Վրէժ Քէօհնէլեանը, Կարպիս Ֆրունճեանը, Վարդան եւ Վարուժան Գազանճեանները, տոքթ. Սուրէն Պայրամեանը եւ ուրիշներ:

Ու ներեցէք, եթէ անգամուան մը համար խախտենք ընդունուած կարգը եւ ողջունենք ու գնահատենք նաեւ պատնէշի վրայ եղողները, որոնք 100-ամեակի այս հանդիսութիւնը կը կազմակերպեն, մասնաճիւղը ոտքի կը պահեն եւ համայն հայութեան ազգային գոյատեւման լաւագոյն պատգամները կ'ուղղեն Գահիրէէն:

Կ'արժէ անգամ մը ծափահարել անոնց համար:

Այս ծափերով, յարգելի ներկաներ, դուք կը գնահատէք 100-ամեայ վաստակ մը եւ անոր անսակարկ ծառայողները:

Այս ծափերով դուք նաեւ խթան կը հանդիսանաք կրտսերներուն, որպէսզի անոնք ընթանան այսօրուան պատասխանատուներուն ճամբով:

Յարգա՛նք իր 100-ամեակը բոլորող Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ին եւ վարձքը կատար անոր հին ու նոր բոլոր երախտաւորներուն, ըլլան անոնք այստեղ, թէ պայմաններու բերումով, աշխարհի տարբեր անկիւնները սփռուած:


Հ.Մ.Ը.Մ.ի այս դարաւոր կաղնին, այսօր, իր թեւերը տարածած է բաւական լայն եւ իր բարիքները սփռած է հոն, ուր կ'ապրին մեծ թիւով նախկին եգիպտահայեր: Ասիկա հպարտալի երեւոյթ է Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ:

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի 100-ամեակին առիթով, արդար հպարտութեամբ մը կը հաստատենք, որ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ով ու Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ով սկիզբ առած Հ.Մ.Ը.Մ.ը այսօր դարձած է ողջ հայութեան երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը, իր 106 մասնաճիւղերով տարածուած աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ:

Նոր 100-ամեակի սեմին, մեր մաղթանքն է, որ Հ.Մ.Ը.Մ.ականի առողջ ոգին անպակաս ըլլայ «Աշխարհակալ» Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի բոլոր անդամներուն մօտ, որպէսզի անոնք շարունակեն իրենց սիրելի միութեան ճամբով ծառայել իրենց պատկանած գաղութին, հայրենիքին ու հայութեան, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու նախապայմանն է այդ:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ը:

Կեցցեն՝ յաւերժական հայութիւնն ու Հայաստանը:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg. Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ՄԵՐ «ՔՈՉ»Ը՝ ԵՂԲ. ԺԱԳ ՊՈՅԱԾԵԱՆ

Սելլա Գահվեճեան-Թնճուկեան
ՖՐԱՆՍԱ



Տեսակ մը ազգային սովորութիւն կամ տուրք եղած է կուսակցականի մը կամ միութենականի մը վաստակը ներկայացնել յետ մահու, երբ այդ անձը վերջնականօրէն հեռացած է մեզմէ: Թէեւ մեր դաստիարակութեան մէջ չունինք նոյնիսկ մահէն ետք ազգային գործիչ մը գովասանքներով ողողելու սովորութիւնը, այլ ընդհանրապէս կը գրենք այդ անձին ծառայութեան եւ փոխանցած դաստիարակութեան մասին: Իսկ ինչո՞ւ չգրենք, երբ անձ մը ողջ-առողջ է, երբ խնդրոյ առարկայ անձը իր աշակերտներու, մարզիկներու, գործակիցներու, նոյնիսկ սերունդի մը տպաւորութիւններէն կրնայ տեղեակ ըլլալ եւ առնուազն հոգեկան փոքր գոհացում մը ստանալ:

Պարտք կը զգամ յարգանքի այդ զգացումը այստեղ տալ իմ երէց եղբօրս՝ պասքեթպոլի տարիներու «քոչ»իս, երբ ան այսօր դադրած է խումբեր մարզելէ:

Պարտինք նախ վերաքաղ մը ընել մարզիչի իր վաստակին, ինչ որ երախտագիտութեան նուազագոյն խօսքս կրնայ ըլլայ երկարամեայ իր նուիրումին:

1960-ականներու սկիզբը եղբ. Ժագ (Յակոբ) Պոյաճեան Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց պասքեթպոլի խումբին պատասխանատուն՝ «քոչ»ը նշանակուեցաւ. ան իր պաշտօնը ստանձնեց՝ փոխարինելով աւելի երէց «քոչ» եղբ. Ժագ (Յակոբ) Գատեանը, որ երկար տարիներու ծառայութենէ ետք որոշած էր հանգստեան կոչուիլ: Եղաւ կարճ շրջան մը, երբ երկու «քոչ»երը միեւնոյն ժամանակ ներկայ կ'ըլլային ակումբ, եւ յաճախ շփոթ կը ստեղծուէր, թէ ո՞ր Ժագին կամ Յակոբին մասին է խօսքը: (Հետաքրքրական է, որ Հ.Մ.Ը.Մ.ի իրարու յաջորդած բոլոր «քոչ»երը Ժագ կամ Յակոբ կը կոչուէին՝ շարունակելով կարծես Յակոբներու վերապահուած աւանդութիւնը: Մեր սերունդէն անմիջապէս ետք դարձեալ երկու Յակոբ-Ժագեր յայտնուեցան իբրեւ «քոչ»՝ նախ Ժագ Նալպանտեան եւ աւելի ետք բոլորիս ծանօթ՝ Յակոբ Խաչերեան, որոնք նոյնքան հաւատարմօրէն ստանձնեցին աղջկանց խումբի մարզիչի պաշտօնը):

Գատեանին մեկնումէն ետք «քոչ» Ժագ Պոյաճեան շարունակեց մարզել մեր խումբը եւ կարողացաւ կարճ ժամանակի մէջ Գատեանի խումբին մակարդակով երիտասարդ մարզիկներու նոր սերունդ մը մէջտեղ բերել:

Աղջկանց նախկին անուանի խումբին փոխարինող այս պատանի խումբը եղաւ անոր կեանքի նպատակներէն մէկը, աչալուրջ եւ չափազանց ուշադիր հետեւեցաւ խումբի անդամներուն առօրեային, կենցաղին՝ ե՛ւ իբրեւ մարզիչ, ե՛ւ իբրեւ հոգատար ընկեր:

Հանդարտ ու խաղաղ օրեր կ'ապրէր Լիբանան այդ շրջանին. այդ օգնեց, որ երկար ժամանակ Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց պասքեթպոլի խումբին պատասխանատուութիւնը մնայ եղբ. Ժագ Պոյաճեանի ուսերուն եւ ան կարենայ հեզասահ կատարել «քոչ»ի մը բոլոր պարտականութիւնները:

Ի հարկին, ան ստիպուած՝ երբեմն ստանձնեց տղոց խումբն ալ եւ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն անցան փաղանգ մը փայլուն մարզիկներ, որոնք անմոռանալի յաղթանակներ արձանագրեցին այդ տասնամեակին:

Ակումբի դաշտի պայմանները համեստ էին այդ օրերուն: Կարմիր աւազէն ժամանակ մը ետք, դաշտին գետինը պատեցաւ փոքր քառակուսիներով կազմուած կարծր սալաքարով, որ յաճախ մեր ծունկերը կը վիրաւորէր եւ վէրքերուն սպիանալը անկարելի կը դարձնէր: Թէեւ այսօրուան հասկացողութեամբ նախնական, բայց բազմապատիւ հինին՝ դաշտը ներկայանալի կերպարանք մը ստացաւ, կոկիկ ու դիմացկուն: Առաւելագոյնը երկու-երեք հին գնդակներ կ'իջնէին դաշտ, նորերը վերապահուած էին պաշտօնական խաղերու, սակայն այդ բոլորը մեզի համար ի՛նչ փոյթ: Խումբը կը յառաջդիմէր «քոչ»ին շնորհիւ, հպարտ էինք մեր կարմիր շապիկներով, մոլի էինք գնդակին, Հ.Մ.Ը.Մ.ի վարկն ու պատիւը ծանրացած էր մեր ուսերուն եւ ակումբը դարձած էր մեր տունը:

Քաղաքի ակումբը եռուն կեանք մը ունէր, ինչպէս այսօր՝ «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային կեդրոնը: «Քոչ»ը խումբին շարունակականութեան համար աչալորջօրէն նոր ու երիտասարդ ուժեր փնտռեց, աղբիւրները ձե-



1962. Յ.Ս.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի աղջկանց առաջին խումբը:

մարանն ու Հ.Մ.Ը.Մ.ի արենոյշներն էին: Ան օտար շրջանակներէ հայ մարզիկ-մարզիկուհիներ առաջնորդեց դէպի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերը եւ յաջողեցաւ տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց պասքեթպոլի խումբին համբաւը բարձր պահել: Իր տնօրինումով շաբաթավերջերու միջ-ակմբային մրցումները բազմապատկուեցան, Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց եւ տղոց խումբերը Լիբանանի բոլոր մրցաշարքերուն փայլուն ներկայութիւն դարձան եւ սկսան դարձեալ ախոյեանութիւններու տիրանալ: Այդ քաջալերեց եղբ. Ժազ Պոյաճեանը՝ հրաւիրելու բազմաթիւ տեղական խումբեր եւ կազմակերպելու համաշխարհային մակարդակի մրցաշարքեր եւ ճամբորդութիւններ:

Երբ յետադարձ ակնարկ մը նետեմ մեր խումբին մարզական կեանքին վրայ, ակամայ քանի մը պատկերներ ու դէպքեր կ'ուրուագծուին յիշողութեանս մէջ: Կ'ուզեմ վերյիշել քանի մը օրինակներ՝ պարզապէս հիներուն միտքը թարմացրնելու եւ նորերուն փոքր օրինակներ տալու համար:

Շաբաթը երեք անգամ երկու ժամ վերապահուած էր աղջկանց փորձերուն, իսկ մրցումները տեղի կ'ունենային շաբաթավերջերուն: Զպատահեցաւ, որ ան օր մը իսկ բացակայէր կամ մեզմէ ուշ ակումբ հասնէր: Նախքան ճշդուած ժամը գնդակները եւ փորձի բոլոր կազմածները դաշտին կեդրոնը գետեղած՝ կազմ ու պատրաստ մեզ կը սպասէր: Պէյրութի ամպոտ ու մուսլ օրերը բոլորիս թշնամին էին, կը հսկէինք երկինքին՝ աղօթելով, որ չանձրեւէ, իսկ ինք նոյնիսկ անձրեւոտ օրերուն կ'ակնկալէր, որ դաշտ ներկայանայինք: հապա՞ եթէ անձրեւը դադրէր: Փորձերը պաշտօնական խաղերուն չափ լուրջ հանգամանք ունէին: Ան բաւական բարձր վարժութիւններ պատրաստած կ'ըլլար, կանոնաւոր կերպով կը կիրարկէինք ցատկել, վագել, նախապատրաստական մարզանքներ, որոնք կը նպաստէին մեր տոկոսներուն: Ունէինք պաշտպանողական եւ յարձակողական հիմնական ձեւեր եւ հնարներ, հմուտ տեղափոխութեան օրէնքներ, զորս յաճախ գործադրել կու տար ան: Մասնաւորապէս կը պահանջէր խմբային գեղեցիկ խաղարկութիւն եւ գնդակի խելացի փոխանցում:

- Ոտքերուն «փաս» չեն տար, կուրծքի բարձրութեամբ

հասցուցէք գնդակը, որպէսզի խաղակիցդ կարենայ բռնել,- կը կրկնէր անընդհատ:

Արգիլած էր հակառակորդ մարզիկներու գլուխներուն վրայէն երկար փոխանցումները: այս մէկը շատ անգամ մատնանշած եւ շեշտած էր: Պէտք չէր, որ ի գուր այդ երկար փոխանցումին պատճառով գնդակը հակառակորդ խումբին ձեռքը անցնէր:

- Ամէն մէկ գնդակի կորուստ կէտ չնշանակելու համազօր է,- կը կրկնէր:

Արգիլած էր նաեւ մեզ արտաքին վարժութիւններու կամ հաճելի որոշ զբօսանքներու հետեւիլ: Ամառները, փորձերու օրերը, նոյնիսկ արտօնուած չէր մարզիկներուս ծով երթալ, սակայն կը պատահէր, որ փորձութեան մատնուէինք,

փախուստ տայինք եւ ծով երթալու գրաւիչ առիթի մը տեղի տայինք... ու դաշտ ներկայանայինք յոգնած եւ արեւէն այրած այտերով: Անկարելի էր, որ «քոչ»ը չնշմարէր, ան սովորութիւն չունէր մեզ յանդիմանելու, իրեն յատուկ ազդարարութեան գլխու երերումը բաւարար կ'ըլլար անհնազանդը կամ ուշացողը զգաստացնելու, որպէսզի աճապարէ գգեստները փոխելու: Կը վագէինք հանդերձարան եւ կը փորձէինք մենք մեզ արդարացնելու համար այդ օր աւելի լաւ խաղ ցուցաբերել:

Ծխելը բոլորովին աններելի էր, իսկ ձմեռները բացարձակապէս կ'արգիլէր վտանգաւոր դահուկարշաւը, զոր պասքեթպոլի թշնամին կը նկատէր: Պէտք էր որ խումբին հաւաքական շահերուն նախապատուութիւն տայինք եւ հասունութիւնը ունենայինք առաջնահերթութիւն տալու մեր ընտրած մարզախաղին:

Մրցումներու օրերը, խաղերէն ժամեր առաջ կու գար եւ կը պահանջէր, որ մենք եւս կանուխ եւ պատրաստ ներկայանանք դաշտ: «Քոչ»ը կը գրաւէր մեր խումբին յատկացուած նստարաններուն կողմը եւ պատերազմի մեկնող զօրավարի լրջութեամբ կը սկսէր վերջին հրահանգները արձակել, դիրքերու ցուցմունքներ տալ, հակառակորդ խումբին տկար եւ զօրաւոր կէտերը մատնանշել, օրեր շարունակ մարզուած եւ թուագրուած զանազան «քոմպիւն»ները վերյիշեցնել: «Քոմպիւն»ներ, զորս պէտք էր կիրարկէինք իր մէկ ազդանշանով, այս կամ այն պարագային:

Երեք կէտի օրէնքը չկար այդ շրջանին, ուստի աւելի կէտ վայելելու հաճոյքը չունեցանք, հակառակ անոր որ մասնաւոր ժամանակ կը տրամադրէր հեռուէն կողով ապահովելու վարժութեան: Մեր մրցումները կ'աւարտէին 60-ի մօտ արդիւնքներով, ինչ որ այսօր շատ աւելի բարձր պիտի ըլլար... Յաղթանակները վայելելու հաճոյքը երկար չէր տեւեր, որովհետեւ բնական եւ յաճախակի երեւոյթ կը նկատէինք, սակայն կը պատահէին նաեւ հազուադէպ պարտութիւններ, եւ այդ ճախող մրցումներուն հետեւանքները աւելի խոցելի եւ անմոռանալի կ'ըլլային, քան յաղթանակները: Բնաւ չեմ մոռնար այն օրը, որ փոքր տարբերութեամբ կարեւոր մրցում մը կորսնցու-

ցինք: Այդ գիշեր Պէյրուսի գիշերային վայրերէն մէկուն մէջ պարանցիկ մը տեղի կ'ունենար. տղոց խումբի մարզիկները մեր տրամադրութիւնը փոխելու համար մեզ հոն հրաւիրեցին: Երիտասարդութեամբ խճողուած երեկոյ մըն էր, ուր բարձր երաժշտութիւնը եւ պարը հասած էր իր գագաթնակէտին: Մենք երեք «սգակիր» մարզիկներս, սպառած ջիղերով չկարողացանք դիմանալ այդ թոհ ու բոհին, այդ ուրախ մթնոլորտը մեզի անտանելի թուեցաւ: Տղոցմէ խնդրեցինք, որ անմիջապէս մեզի էշրէֆիէ՝ «քոչ»ին տունը տանին ու ա՛լ մեզի չսպասեն: Կէս գիշերը անց Պոյաճեաններուն դուռը թակեցինք անփափկանկատ կերպով. հակառակ անոր որ ուշ գիշեր էր, սակայն առանց վարանելու արթնցուցինք «քոչ»ն ու իր կինը: Պարտուած էինք այդ օր եւ միայն իրեն հետ կրնայինք բաժնել մեր զգացումները, մնացինք հոն երկար՝ միսթարական, քաջալերական խօսքեր լսելու: Առաւօտեան կանուխ ժամերուն «քոչ»ը ստիպուած՝ մեզ մէկ առ մէկ մեր տուները ընկերացաւ:

Երկար տարիներու ժրաջան փորձերու, մրցումներու, ճամբորդութիւններու յիշատակներէն այժմ միայն բեկորներ կը սեղմուին այս փոքր գրութեանս մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի բաց դաշտին մէջ մարզուեցանք ցուրտին, անձրեւին, խոնաւ ու հեղձուցիչ տաքին: Քրտինք թափեցինք, յաղթանակներ եւ պարտութիւններ ունեցանք, ցնծացինք ու լացինք, երբ օրեր ու տարիներ դաշտն ու ակումբը իր եւ մեր կեանքին անբաժան մէկ մասնիկը դարձան:

Այժմ կը գիտակցիմ, թէ կեանքը որքա՛ն կարճ ու անցողական է, վստահ եմ, որ «քոչ»ին դէմքին փոքր ժպիտ մը պիտի ուրուագծուի, երբ այս տողերը կարդայ եւ ինք եւս վերյիշէ այն երկար տարիները, որոնք թռան ու անհետացան, եւ հաւանաբար զարմանայ, որ իր կրկնած օրէնքները տակաւին թարմ մնացած են մտքիս մէջ, եւ ինչպէս ինք պատուիրած էր՝ հաւանաբար բոլորին ականջին օղ դարձած:

Այսօր, ի տես Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի աղջկանց խումբերու վերելքին, վստահաբար եղբ. Ժազ Պոյաճեան որքա՛ն հպարտ զգացումով կը տոգորուի եւ որքա՛ն հրճուանք կ'ապրի անոնց արձանագրած յառաջդիմութեամբ:

Իսկապէս որ պատշաճ էր Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի աղջկանց բաժակի ախոյեանութեան յաղթանակի հանդիսութեան արժեւորել ու պատուել նաեւ նախկին «քոչ»ը՝ եղբ. Ժազ Պոյաճեանը եւ իր երբեմնի մեծ վաստակը: Պատշաճ է նաեւ եղբ. Ժազ Պոյաճեանը մասնակից դարձնել աղջկանց Ա. եւ Բ. խումբերու յաջողութիւններուն:

Հունտերը, զորս ցանած ես, «քո՛չ», կը շարունակեն արդիւնք տալ, քու ձագուկներդ կամ անոնց զաւակներն են, որ այսօր բարձր կը պահեն Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի ջահը:

Շնորհաւորութիւններս, «քո՛չ», անցեալի վարձքդ կատար:

Շնորհաւորութիւններ աղջկանց զոյգ խումբերուն

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand, La Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio WICKEN 2005 PARIS

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ. ԽԱԺԱԿ ԵՒ ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆՆԵՐ

Նանէ Աւագեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Տո՛ւր ինձի, Տե՛ր,
ուրախութիւնն անանձնական,
ճրագներու պէս զայն բոցեմ
բազմաստեղնեան՝
Խաւարին մէջ ամէն երդ
ու խրճիթներու:



Մեծարեցի այս ոգեշնչումն ունէին
Խաժակ եւ Ժիրայր Սարգիսեանները,
որ ծնունելով Լիբանանում եւ ապրելով
Ամերիկայում, հայրենիքն ու ազգն են
մշտապէս կրել սրտում կեանքի իրա-
քանչիւր փուլն իմաստաւորելով ազգա-
յինում ներդրում կատարելով: Անշնուիրութեան եւ բացառիկ
հայրենասիրութեան օրինակ առ այն, որ ինքնութեան պահ-
պանումն ու հայրենիքի զաղափարը վեր է ամէն ինչից: Այս
հաւատքն էր ուժ փայլա Սարգիսեան եղբայրներին, համա-
խոհների հեպ միասին նուիրումով ու մեծ համբերութեամբ
օտար ափերում սրեղծելու ազգային ինքնութեան հիմնա-
սիւնները պահպանող կենսորոններ՝ ազգային վարժարան,
մշակութային, հասարակական, քաղաքական կառոյցներ:
Այս ամէնի շուրջ էր, որ պիտի համախմբուէր հայութիւնը, եւ
քանզի զաղափարը վեհ էր, իրականացաւ նպատակը՝ շեւա-
ւորուեց Սան Ֆրանսիսքոյի կուռ համայնքը:

Սարգիսեան եղբայրներն իրաւամբ առաքեալներ են, ով-
քեր երբեւէ չեն շեղուել ուղուց՝ վկայելով, որ անհնարինը
հնարաւոր է, եթէ կայ զաղափար: Նրանց առաջնորդել է մեր
ազգի յարատեւութեան համար ի վերուստ փրուած լոյսը,
նրանց էլ փրուած էր յաւերժի կանթեղը օտարութեան մէջ
վառ պահելու շնորհը: Կանթեղ, որ լուսաւորել է փասնամե-
տակներ շարունակ՝ սերունդների սրտերում բոցավառելով ու
պահպանելով ազգայինը: Սարգիսեան եղբայրներն իսկա-
կան են, քանզի պատմութիւն են կերպել՝ հաւատարմով իրենց
փեսայականին, եւ իրենց գործով ոգեշնչել են նաեւ շրջապա-
րին: Շուրջ չորս փասնամետակ նրանց յաջողուել է քաջալերել
եւ ուղղորդել սերունդների:

Խաժակ եւ Ժիրայր Սարգիսեանների հեպ հանդիպումը
կեանքում պատահած անմոռանալի ակնբարթներից է, երբ
զգացողութիւններն անհրական են թում: Նրանք մարմնաւոր-
ում են հայի ոգին ու էութիւնը, կրում են մեր նախնիների
շունչն ու յարատեւելու մեր անկոտրում կամքը: Սարգիսեան
եղբայրները ճառագում էին յոյսով ու հաւատով առ մեր լու-

սաւոր ապագան, եւ նրանց խօսքն է, որ որպէս պատգամ
պէտք է առաջնորդի մեզ, յուշի մեր առաջնահերթութիւնները,
քանզի նրանք մեր պատմութիւնը կերտողներից են:

Խաժակ եւ Ժիրայր Սարգիսեանների հեպ հարցազրոյցս
փեղի է ունեցել Նապա հովտում, որպէս մեզ ուղեկցել էր Սան
Ֆրանսիսքոյի իմ գործընկերը, համայնքի վաստակաշատ
ներկայացուցիչ Նուպար Տէմիրճեանը: Երկու ժամում ամ-
փոփուած մեր հանդիպումն այնքան լիցքեր ու ոգեւորութիւն
պարգեւեց, որ այսօր, պատրաստելով զրոյցը, կրկին նոյն
զգացողութիւններն ունեմ եւ ուժեղ եմ եւ կարող ու հաւա-
տում եմ իմ ազգի յարատեւութեանը...

Սկիզբը...

Խաժակ եւ Ժիրայր Սարգիսեանները ծնունել են Պէյրու-
թում: Ազգային միջավայրում է անցել նրանց մանկութիւնը,
պատանեկութեան շրջանում շեւաւորում է հայրենասէրի
ոգին: Սարգիսեան եղբայրները յաճախում են Կենսորոնա-
կան Բարչրագոյն Վարժարան, Հայկազեան Քոլէճ: Մանկուց
սնդամակցում են Հ.Մ.Լ.Մ.ին, այնուհետեւ Հ.Յ.Դաշնակցու-
թեանը: «Մենք ունեցել ենք լաւ ուսուցիչներ, ովքեր մեզ ուղ-
ղորդեցին ու կրթեցին ազգային գիտակցութեամբ», երախ-
տագիտութեամբ նշում են եղբայրները: Հայաստանումն
ու հայկական հարցերի արժարժունը դառնում է Սարգիս-
եանների կեանքի անբախտելի մասը նաեւ Միացեալ Նա-
հանգներում, որպէս նրանք գրկելով համախոհներ՝ սկսում
են սրեղծարար գործունէութիւնը: Նրանք ակտիւօրէն մաս-
նակցում են Սան Ֆրանսիսքոյում հայ համայնքի շեւաւորմա-
նը, միաժամանակ՝ փարբեր միջոցներով աջակցում են Հա-
յաստանին: Երկու եղբայրների պատմութիւնը Միացեալ Նա-
հանգների արեւմտեան այս շրջանում հայ համայնքի շեւա-
ւորման ու ինքնակազմակերպման պատմութիւնն է նաեւ:

Համայնքի ձեւաւորումը:

ԽԱԺԱԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ.- Սան Ֆրանսիսքո եկայ ուսման նպատակով, եւ USF համալսարանում սովորելուն զուգընթաց աշխուժօրէն սկսեցի առնչուել այն ժամանակ դեռ փոքրաքանակ հայ համայնքի հետ՝ շարունակելով այն, ինչ անում էինք Լիբանանում, ձեռնամուխ լինելով նոր աշխատանքների: Տարբեր երկրներից հաւաքուած ուսանողների երեսուն հոգինոց խմբով հիմնեցինք Սան Ֆրանսիսքոյի «Նիկոլ Աղբալեան» ուսանողական կոմիտէի թիւերը 1974-ին, եւ նոյն խմբով ձեռնամուխ եղանք համայնքում կազմակերպչական այլ գործերի: Նախաձեռնեցինք մեր շրջանում առաջին շաբաթօրեայ դպրոցը, որ գործեց շուրջ 15 տարի, որին յաջորդեց Գոուզեան-Ջաքարեան-Վասպուրական վարժարանի հիմնադրման ծրագիրը: Սա համարում եմ մեր փոքր համայնքի ամենամեծ իրագործումներից, որ իրականացաւ բարերարների եւ անշուշտ համայնքի աջակցութեամբ: 30 տարուց աւելի գործող այս դպրոցի շրջանաւարտները կարողացել են իրենց բարձրագոյն կրթութիւնը շարունակել լաւագոյն համալսարաններում, եւ ամենակարեւորը՝ մասնակիցն ու շարունակողն են դարձել մեր գործի: Գաղափարակից ընկերների ջանքերով մեր կոմիտէն մասնակցեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու շինութեանը, Համազգային հայ մշակութային ու կրթական միութեան մասնաճիւղի հիմնադրմանը, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի ստեղծմանն ու տարբեր աշխատանքներով նպաստեց մեր համայնքի կազմաւորմանն ու բարգաւաճմանը: Ես անձնապէս մասնակից եմ եղել նշուած բոլոր ձեռնարկումներին:

Մեր կոմիտէի թիւերը նախաձեռնեց նաեւ Հայ Դատի յանձնախմբի ստեղծումը, որ ամէնաաշխոյժներից էր Արեւմտեան շրջանում: Ես՝ կենտրոնական, շրջանային եւ տեղական յանձնախմբերի անդամ եմ եղել, քանի որ հաւատում էի այս գործին: Օրինակելի կազմ ենք ունեցել, քաղաքական մեր կապերով մշտապէս Հայ Դատի հարցերը ներկայացրել ենք հանրութեանը՝ թէ՛ հայերին, թէ՛ օտարներին: Ուրախ եմ, որ այսօր Հայ Դատի յանձնախմբերում ներգրաւուած են երիտասարդներ, ովքեր աշխուժօրէն շարունակում են գործունէութիւնը, նոյն եռանդով, ինչ մենք 40 տարի առաջ, երբ հիմնեցինք Ուաշինկթընի գրասենեակը, շրջանային յանձնախմբերը: Դժուար պայքար է, բայց չպէտք է ընկրկենք եւ շարունակենք այն թափով, որ սկսել ենք եւ վստահաբար կը հասնենք բաղձալիին:

Հայութեան առջեւ ծառայած մարտահրաւէրները, ռազմավարական առաջնահերթութիւնները:

ԽԱԺԱԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ.- Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը համայն հայութեան օրակարգի առաջնահերթութիւններից է:



Ինձ համար այս օրերին ամենամտահոգիչը Հայաստանի իրավիճակն է: Մենք այլընտրանք չունենք, բացի մեր հայրենիքին զօրավիգ լինելուց, մեր երկիրը մեր վերջին կայանն է: Ես անկեղծօրէն չեմ հաւատում, որ Սփիւռքը երկար կեանք ունի, պատմութիւնն է դա մեզ փաստել, մեր շուրջն ենք տեսնում դա՝ օրէ օր ձուլումը, լեզուի, մշակոյթի կորուստը: Լոս Անճելոսում դեռ համայնքային կեանքն աշխոյժ է, ինչը չես ասի այլ քաղաքների մասին, օրինակ՝ Սան Ֆրանսիսքոյի, որ սրանից 50 տարի առաջ բաւական կենսունակ էր, մինչ այսօր իրավիճակն այլ է: Անկեղծ պէտք է լինենք՝ որպէս ազգ եւ ժողովուրդ, մեր փրկութեան յոյսը Հայաստանն է, ուստի պէտք է խորհենք, թէ ի՞նչպէս պէտք է օգտակար լինել, ի՞նչպէս անել, որ մարդիկ չհեռանան Հայաստանից: Այստեղ, մենք ազգային վարժարան մէկ հայ աշակերտ բերելու համար տարբեր գոհողութիւնների ենք գնում, իսկ հայրենիքից շարունակում են հեռանալ: Դժբախտաբար մենք հարցեր ունենք այսօր Հայաստանում, որ մենք մեր ձեռքով ստեղծեցինք. «այսպէս ասած» դեկավարութիւնը ստեղծեց մի իրավիճակ, երբ պետութիւն-ժողովուրդ կապը խզուած է, եւ արդիւնքում մարդիկ լքում են երկիրը: Կարծում եմ, հարիւրամեակի նպատակը պէտք է լինի Հայաստանի ապահովութիւնն ու զարգացումը եւ միայն այս կերպ կարող ենք ասել, որ կանք ու կը լինենք: Իւրաքանչիւր հայ պէտք է պարտաւորութիւն ունենայ հայրենիքի հանդէպ: Սա է մեր ազգային առաջնահերթութիւնը:

Սան Ֆրանսիսքոյի հայ համայնքն այսօր:

ԽԱԺԱԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ.- Սան Ֆրանսիսքոյի համայնքն առաջիններից էր, որտեղ բոլոր կազմակերպութիւնները՝ դպրոցը, եկեղեցին, կուսակցութիւնները ու տասնեակ միութիւններ համերաշխ համակեցութիւն ստեղծեցին տարիների ընթացքում: Տարածայնութիւններ երբեմն եղել են, սակայն կարողացել ենք յաղթահարել, ինչի շնորհիւ բազմաթիւ իրագործումներ են եղել: Դրանց թւում, ամէնաազդեցիկ ձեռնարկներից էր Տէյվիտսըն լեռան վրայ 37.39 մեթր բարձրութեամբ խաչ-յուշակոթողի տեղադրում՝ նուիրուած Հայոց Յեղասպանութեանը: Սան Ֆրանսիսքոն լինելով տարբեր փոքրամասնութիւնների ու այլախոհների քաղաք շատ բազմատարր է ու զբաղուած, սակայն երբ խօսքը վերաբերում է ազգայինին՝ համախմբուած ենք: Մեր ձեռքբերումներից է Պրոքլի հեղինակաւոր համալսարանում նուիրեալների աջակցութեամբ հայագիտական ամպիոնի բացումը, որի տնօրէնն է Ստեփան Աստուրեանը: Մեր համայնքի վառ ներկայացուցիչներ Ստեփան Գարամարտեանն ու Արմէն Տէր Կիւրեղեանը Հայաստանի Ամերիկեան համալսարանի համա-

հիմնադիր անդամներն են: Այս հաստատությունը, որ բնույթով միակն է տարածաշրջանում, ինքնին հրաշք էր, եւ այսօր պրոֆեսոր Տէր Կիւրեղեանը, ով դասախօսում էր Պրոֆիտի համալսարանում եւ նշանակուել է նաեւ որպէս համալսարանի նախագահ: Մեր համայնքում է գործում նաեւ ԲԱՖԱ (BAFA) բարեսիրական կազմակերպութիւնը, որը տարիներ շարունակ մեծապէս օգնում է Հայաստանին՝ հոգալու կարիք ունեցողների առողջապահական, կրթական եւ ընկերային կարիքները:

Սերնդափոխութիւն:

ԽԱԺԱԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ.- Ես, եղբայրս, մեր սերունդը ջանում է ամէն կերպ օգնել եւ ուղղորդել երիտասարդներին: Դժուարութիւններ ի հարկէ կան, բայց դրանք բոլորի համար են, կարելորը, որ կարողանանք չկորցնել մեր նպատակակէտը եւ ինքնակազմակերպուած շարունակենք աշխատել:

«Մեր ուժը յոյսն է: Առանց յոյս ունենալու ոչինչ չենք կարող անել», գրոյցին է միանում ժիրայր Սարգիսեանը: Սան Ֆրանսիսքոյի համայնքի ակնառու գործիչներից լինելով, նա նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ նուիրեալ է, ով հաւատում է, որ օրինակելի հայ առաջնորդն է թրծում ազգային գիտակցութիւն ու ապագայի տեսլական ունեցող սերունդ:

ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ.- Իմ պատմութիւնն ու Խաժակի պատմութիւնը նոյն ծագումն ունեն: Մայրս, երիտասարդ հասակում այրիանալով, այդուհանդերձ ջանք չի խնայել, որ մեծանանք հայկական միջավայրում: Ինքն էլ լինելով Հայ Օգնութեան Միութեան անդամ եւ հայ եկեղեցու հետեւորդ, մշտապէս քաջալերել է մեզ մաս կազմելու ազգային կառոյցների, քանզի հաւատում էր, որ միայն առողջ միջավայրում է անհատ թրծւում: Իմ հետաքրքրութիւնը միշտ առաւել ուղղուած է եղել Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեանը: Սկսած տակաւն տարածք մանկութիւնից հրապուրել է ինձ: Սկսած տակաւն տարածք հետեւ դարձաւ իմ կեանքի ուղիներից: Տարիների ընթացքում սկսած տակաւն եւ մարզական տարբեր պատասխանատուութիւններ եմ ստանձնել, եղել եմ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգների Շրջանային Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ, փոխ ատենապետ: Այս կազմակերպութիւնը գործով է ապացուցել կոչումը՝ դաստիարակել հոգով եւ մտքով առողջ, ազգային գիտակցութեամբ երիտասարդներ, նաեւ՝ ապահովել արժանի սերնդափոխութիւն: Այս առումով հրամայականներից է ունենալ հաւաքատեղիներ, մարզասրահներ, որոնք կը ծառայեն նաեւ որպէս ազգային միջավայր մեր երիտասարդների համար: Այս առումով, Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղը միշտ եղել է առաջատար՝ ազգային ոգին բարձր պահելով տասնամեակներ շարունակ:

Տեղեկանք.- Ժիրայր Սարգիսեանի նուիրատուութեամբ հնարաւոր է դարձել Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆրանսիսքոյի «Մասիս» մասնաճիւղի նոր մարզադաշտի կառուցումը, որը կրում է «Ժիրայր Եւ Սրբուկ Սարգիսեան» անունը:

«Երանելի է մանաւանդ տալը, քան՝ առնելը»:

ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ.- Երիտասարդութիւնն իր խօսքն ունի ասելու, եւ նրանց համար հնարաւորութիւններ ստեղծելն անհրաժեշտութիւն է: Ինչպէս մեր դէպքում, թէեւ չունէինք մեծ հաւաքատեղիներ, սակայն ունէինք հոգածու դեկավարներ, ովքեր մեզ ճանապարհ ցոյց տուեցին: Առանց նրանց մենք չէինք լինի այն, ինչ կանք: Թերեւս անձնապէս կը յաջողէինք, բայց ազգային հաւաքական հարցերում չէինք լինի: Չպէտք է գոհանանք նրանով, ինչ ունենք, այլ հնարաւորութիւններ պէտք է ստեղծենք, որ նոր սերունդներն իրենց խօսքն ասեն: Այս դէպքում, ոչ թէ տալիս, այլ առնում ես իրենցից, մեր մանուկներից ու պատանիներից: Ստեղծելով նրանց համար պայմաններ, միջավայր, որտեղ միասին կը մեծանան, մենք ենք ստանում աւելին:

Դա հաւաքական ներքին բաւարարուածութիւն է բերում նաեւ, առանց որի մարդ արարածը կը դառնայ անձնակենտրոն եւ կը մաշուի օտարութեան մէջ: Այդ մաշումը հնարաւոր կը լինի կանխել կամ զսպել մեր կազմակերպութիւններին մօտ լինելու միջոցով՝ դպրոց, եկեղեցի, կուսակցութիւն, միութիւններ, որոնք միասին մեր էութիւնն են կազմում:

Որպէս վերջաբան...

ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ.- Հայութիւնը պէտք է համախմբուի Հայաստանի շուրջ, եւ դա պէտք է դառնայ մեր նպատակը: Կարողանալ հայրենիքին հոգեպէս, ֆիզիքապէս, տնտեսապէս ամէն ձեւով օժանդակել եւ կապը պահել: Դրանից բացի, չեմ կարծում, որ ցանկալի այլ հեռանկար կարելի է ապահովել համայն հայութեան համար:

ԽԱԺԱԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ.- Եթէ Հայաստանն ուժեղ լինի, կարողանայ Սփիւռքին շունչ տալ եւ Սփիւռքը գուցէ եւս որոշ ժամանակ գոյատեւի, բայց կարելորը հայրենիքի բարօրութիւնն է: Հասկանալի է, որ բազմաթիւ մարտահրաւէրներ կան, բայց միասին կարող ենք ոտքի հանել մեր հայրենիքը դժուար կացութիւնից, որպէսզի մենք էլ ուժ ստանանք, քանզի եթէ չկայ ազգային պահպանման ձգտումը յանուն Հայաստանի՝ անիմաստ է դառնում ամէնը: Մեր միակ փրկութիւնը հայրենիքն է, եւ պէտք է համախմբուենք այն գարգացնելու համար, եւ սա ամենահրատապ խնդիրն է, չենք կարող այս հարցի շուրջ մտածել նոյնիսկ երկու տարի յետոյ, քանզի ուշ կը լինի: Կամ հիմա՛, կամ երբե՛ք...



ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԻՆ ԿԸ ԶԳԱՍ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՇՈՒՆՉՆ ՈՒ ՀՈԳԻՆ



«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԵՆ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՊԵՐՃ ԵՒ ՔՐԻՍՏԻՆ ՊԵՏՈՅԵԱՆՆԵՐ

Լոս Անճելլոս ապրող խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ականներ մօտաւորապէս տարի մը առաջ կ'որոշեն բարձրանալ Արարատի գագաթը, ամրապնդելու համար իրենց ուխտը հանդէպ հայութեան ու Սրբազան լեռան: Այս նպատակով ալ անոնք կը կազմեն յանձնախումբ մը, կազմակերպելու եւ գործնականացնելու համար իրենց ծրագիրը: Խորհրդակցութիւններէ ետք, անոնք կը դիմեն մարզումներու եւ լեռնագնացութեան յատուկ վարժութիւններու:

Ժամանակի ընթացքին, սակայն, խումբը ինչ-ինչ պատճառներով կը նօսրանայ ու կը մնան չորս անդամներ, որոնք ամէն գնով կը փափաքին յաջողցնել ծրագիրը: Վարժութիւն ձեռք ձգելու համար, նախքան Արարատ բարձրանալը, անոնք Մ. Նահանգներու երկու այլ լեռներ կը բարձրանան, դիմագրաւելիք դժուարութիւններն ու հաւանական մարտահրաւէրները աչքի առջեւ ունենալու համար:

Հետագային, չորս հոգինոց խումբը աւելի եւս նօսրանալով կը մնան Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ իրարու ծանօթացած եւ ամուսնացած տէր եւ տիկին Պերճ եւ Քրիստին Պետոյեանները, որոնք անդրդուելի կը մնան Արարատը ամէն գնով նուաճելու իրենց հաստատակամութեան մէջ: Անոնք կը մեկնին Պոլիս, ուր երկու օր մնալէ ետք կ'անցնին Վան, Պայագիտ, իսկ այնուհետեւ՝ Արարատ: Անոնց կ'ընկերակցի քիւրտ լեռնագնաց մը, որ իր տասնչորս տարուան փորձառութեամբ

քաջածանօթ էր ճամբաներուն եւ Արարատ հասնելու միջոցներուն:

Լեռնագնացութիւնը կը տեւէ չորս օր: Առաջին օրը Պետոյեան զոյգը կը հասնի 3200 մետր բարձրութեան: Երկրորդ օրը անոնք 3200 մետրէն կը բարձրանան 4200 մետր: Երրորդ օրը 4200 մետրէն կը բարձրանան 5600 մետր բարձրութիւն: Չորրորդ օրը անոնք կը նուաճեն Արարատը:

Իւրաքանչիւր օր, անոնք կը քալեն 5-6 ժամ: Յաճախ կը մագլցին: Այս միջոցին կ'անձրեւէ, փոթորիկ կը սկսի, կարկուտ կը տեղայ, սակայն աննկուն կամքով անոնք կը յամառին շարունակել ճամբան դէպի գագաթ:

Չորրորդ օրը, երբ գագաթ հասնելու 80-90 մետր կը մնայ, Ֆիզիքական տկարութիւնը կը սկսի դժուարութիւններ յառաջացնել, սակայն անոնք աննահանջ կերպով կը շարունակեն բարձրանալ, մէկը միւսին ուժ տալով: Ֆիզիքականէն աւելի զգացական յոգնութիւնն է որ կը զգան անոնք: Լեռան վրայ քիւրտին կը պատմեն Արարատի մասին, հայութեան համար ունեցած անոր կարեւորութեան մասին: Քիւրտը հարց կու տայ, թէ ինչո՞ւ Արարատը սուրբ լեռ է հայերու համար:

Արդէն իսկ գագաթն են. տարիներու երազի մը իրականացման գոհունակութիւնը կը զգան երկու Հ.Մ.Ը.Մ.ականները: Արարատի գագաթին անոնք կը կոթողեն այն միութեան դրօշակը, որուն ճամբով սորված էին սրբազան Արա-



րատ լեռան մասին: Գագաթին, սրտի գոհունակութեամբ անոնք կը կատարեն լեռնագնացներէն եղբ. Պերճի հօր ուխտը՝ աճիւնները թաղել Արարատի կատարին:

Եղբ. Պերճ եւ քոյր Քրիստին իրենց զգացումներուն մասին խօսելով «Մարզիկ»ին կը վկայեն. «Արարատի գագաթը բարձրանալը անբացատրելի քաղցր զգացում մըն էր մեզի համար: Արարատի գագաթը բարձրանալը ունեցաւ դաստիարակչական նպատակ, որով աւելի փաստեցինք, թէ Արարատը պայքար մըն է իւրաքանչիւր հայու համար, անցեալին, ներկային եւ ապագային: Պատիւ է ոտքերդ դնել այն լեռան գագաթին, որուն մասին դասագիրքերու եւ երգերու մէջ հանդիպած ենք, տեսած ենք անոր նկարները հեռուէն, իսկ այժմ

Ֆիզիքապէս կոխած ենք անոր վրայ, սակայն մեր հոգիները հոն չեն, այլ՝ աւելի վեհ ու վեր գաղափարներով լեցուած են: Մեզի համար Արարատէն բաժնուիլը դժուար էր: Դժուար էր զգալ ու մտածել, թէ Արարատը մերն է, սակայն միաժամանակ մերը չէ, կը գտնուի թրքական սահմանէն ներս...: Հայաստանի կողմէ դիտուած, գեղեցկօրէն գծուած լեռ մըն է Արարատը, սակայն թրքական կողմէ դիտուած գեղեցիկ չլծուեցաւ ան մեզի»:

«Հազիւ լեռան գագաթը հասած, կայծակի արագութեամբ մեր միտքը եկան բանաստեղծին բառերը. «Պիտի հասնի՞նք կատարիդ»: Եւ հասանք սրբազան կատարին», կը շարունակեն անոնք:



«Ամէն հայ, իբրեւ ուխտագնաց, պէտք է բարձրանայ Արարատի գագաթը: Տակաւին մեր բերաններուն մէջ կը մնայ Արարատի ջուրին քաղցրութիւնը: Արարատի գագաթին է, որ իրապէս հայութեան իսկական շունչն ու հոգին կը ըզգաս, պահ մը դուն քեզի կարող կը զգաս անկարելի բաներ ընելու. միտքէդ հազար ու մէկ գաղափարներ, խօսքեր կը տողանցեն, սակայն բերնէդ ոչ մէկ բառ դուրս կու գայ: Հոն մէկը միւսին չի նայիր, այլ՝ աչքերը կը սեւեռէ դէպի հեռուն, ամբողջութեամբ իր աչքերով գրկելու համար Հայաստանը: Հոն կ'ուզես մնալ, եթէ կարելիութիւն ըլլայ ապրիլ այնտեղ ու երբեք չվերադառնալ աշխարհ, մնալով այդ դրախտային ու երազային սպիտակութեան մէջ, - կը շեշտէ Պետոյեան զոյգը ու կ'աւելցնէ, - Արարատէն բաժնուելէ ետք, անոր կարօտը օրէ օր աւելի կը ըզգանք մեր կեանքին մէջ»:

ԿԱՌՉԱԾ ՄՆԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ

ԿԸ ԹԵԼԱԴՐԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ
ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ ԵՂԲ. ՃՈՐՃ ՏԱՌԻԼԷ (ԽԱՆՃԵԱՆ)

Հարցազրույցը վարեց՝
Եղբ. Արմեն Քեօշկերեան
ՀԱԼԷՊ


**Եղբ. Ճորճ, ինչպէ՞ս մաս կազմեցիք
Հ.Մ.Ը.Մ.ին, նախ՝ Գամիշլի, ապա Հալէպ:**

- Ծնած եմ Գամիշլի, 1943-ին: 13 տարեկանիս անդամակցած եմ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն կազմին, իբրեւ պասքեթպոլի եւ թենիսի մարզիկ: 15 տարեկանիս եղած եմ Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան ատենադպիր: Այնուհետեւ փոխադրուած եմ Հալէպ, գործունէութիւնս շարունակելով Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն կազմէն ներս, ուր ծանօթացած եմ երէց եղբայրներ Սահակ Տօնիկեանի, Աբրահամ Աւրնեանի, Յովսէփ Տէր Մանուէլեանի եւ այլոց:

Հալէպի մէջ մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթպոլի յանձնախումբին: 1968-ին ստացած եմ ճարտարապետութեան համալսարանական վկայական: Իսկ 1968-1970 կրկին վերադարձած եմ Գամիշլի՝ շարունակելով միութենական կեանքս, ուր ներդրում ունեցած եմ երկու լաւ մարզիկներ ուղարկելով Հալէպ՝ եղբ. Յովսէփ եւ եղբ. Վազգէն, որոնք հետագային դարձան Հալէպի լաւագոյն ֆուլթպոլ խաղացողներէն:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական, երկար տարիներ վարած էք վարչական պաշտօններ, տեղական թէ շրջանային վարչութեանէն ներս: Կրնա՞ք յիշել ձեր կատարած մարզական աշխատանքները:

- Զինուորական ծառայութիւնս կատարեցի Դամասկոսի մէջ: Ծառայութիւնս աւարտելէ ետք վերադարձայ Հալէպ եւ լծուեցայ աշխատանքի: Զիս նշանակեցին Հալէպի մարզական գերագոյն մարմնի անդամ եւ դարձայ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչը՝ յաջս պետութեան:



1991-ին ստանձնեցի Հ.Մ.Ը.Մ.ի տեղական վարչութեան ատենապետութիւնը: Այդ շրջանին Հ.Մ.Ը.Մ.ի



ֆուլթպոլի խումբը զարթօնքի շրջան մը կ'ապրէր: Խումբը այցելեց Լիբանան, Յորդանան, Իրան, Հայաստան եւ լաւ արդիւնքներով վերադարձաւ Հալէպ: Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի աղջկանց խումբը տիրացաւ Սուրիոյ ախոյեանութեան: Թենիսի տղոց եւ աղջկանց խումբերը, որոնց մէջ՝ Դաւիթ Դաւիթեան, Մարի Մուրատեան եւ Արչօ Նահապետեան, տիրացան Սուրիոյ ախոյեանութեան:

Ձեր գլխաւոր աշխատանքը Հ.Մ.Ը.Մ.ի մարզական հողաչերտին գնման եւ շինարարութեան մէջ կը տեսնենք: Կը խնդրենք ամփոփ տեղեկութիւն մը տաք այս մասին:

- 1975-ին, պետութիւնը մարզական կառուցման համար հողաչերտ մը տրամադրեց մեզի Ազգային գերեզմանատան մօտ, եղբ. Լեւոն Էսմէրեանի ատենապետութեան շրջանին, բայց դժբախտաբար, զանազան պատճառներով ծրագիրը յաջողութիւն չգտաւ: Տարիներու մեր երազն էր ունենալ անձնական հողաչերտ մը եւ շնորհիւ իմ եւ եղբայրներ Յարութ Պարսումեանի, Կարպիս Թովմասեանի եւ Նշան Օղիկեանի ջանքերուն, ինչպէս նաեւ Հալէպի քաղաքապետարանի անդամներուն աջակցութեան, կարողացանք նոր հողաչերտ մը ապահովել Հալէպի Պոսթան Փաշա շրջանին մէջ, Հայ Ծերանոցին կից, եւ անմիջապէս անցանք գործի, բայց դժբախտաբար օրուան պայմանները արգելք հանդիսացան ծրագրի գործնականացման:

Մեծ աշխատանք տարինք Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի բանակավայրին առնչութեամբ: Հետո գործեցին եղբայրներ Սուրէն Նազարեանը, Ալեքսան Իսկէնտէրեանը, Միսաք Տէիրմէնճեանը եւ Քեսապի մեր ազգայիններէն եղբ. Աբրահամ Աչըգեանը: Շէնքը վերջապէս ամբողջացաւ:

Ինչպէ՞ս կ'արժեւորէք Հ.Մ.Ը.Մ.ի այսօրուան վիճակը:

- Ընդհանուր վիճակը, դժբախտաբար, այսօր մտահոգիչ է՝ օրուան պայմաններուն բերումով: Բայց շնորհիւ գիտակից եւ յանձնառու կարգ մը նուիրեալներու, մարզական եւ սկստական գործունէութիւնը գնահատելի է: Հ.Մ.Ը.Մ.ականներ իրենց անկարելին կ'ընեն՝ պատիւ բերելով Հ.Մ.Ը.Մ.ի

«Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանին:

Կը մաղթեմ, որ մեր ծնողները իրենց զաւակները վստահին Հ.Մ.Ը.Մ.ին եւ ապաւինին միայն իրենց սեփական ուժերուն եւ ոչ օտարներուն:

Կարելի՞ է խօսիլ Հալէպի աւանդական տողանցքներուն մասին:

- 1978-ին, իբրեւ Շրջանային Վարչութեան անդամ, ես, եղբ. Գէորգ Ապահունի եւ վարչական բոլոր ընկերները մեծ ջանքեր ի գործ դրինք, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի տողանցքը իրականանայ, եւ իսկապէս ալ տողանցքը տեղի ունեցաւ: Այդ օր ես անարժանաբար օրուան առաջին խօսնակն էի, իսկ բազմահազար ժողովուրդին աչքերէն ուրախութեան արցունքներ կը հոսէին:

Եւ այսպէս, յաջորդաբար, ամէն տարի տեղի կ'ունենային հոյակապ դաշտահանդէսներ: 2008-ին արաբերէնով հրատարակեցի գրքոյկ մը, որ կ'ընդգրկէր 1924-1946 տարիներու Հ.Մ.Ը.Մ.ի փառաւոր պատմութիւնը, որ կը սկսէր Պոլիսէն



ու կը հասնէր մինչեւ Հալէպ՝ մայր գաղութ:

Հ.Մ.Ը.Մ.ի 75-ամեակին առիթով զիս գնահատեցին Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով, ձեռամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան օրուան ատենապետ եղբ. Միսաք Արզումանեանի:

Ինչպէ՞ս կ'ուզէք եզրափակել այս հարցազրոյցը եւ ի՞նչ պատգամ կը փոխանցէք Հ.Մ.Ը.Մ.ի այսօրուան տղոց:

- Առաջին հերթին շնորհակալութիւն ձեզի, որ չէք մոռնար

մեր վեթերան միութենականները: Նաեւ իմ լաւագոյն մաղթանքներս «Մարգիկ»ին, որ առիթ կու տայ նման հարցազրոյցներու:

Կոչ կ'ուղղեմ ներկայ երիտասարդներուն կառչած մնալու Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեան եւ հեռու մնալու Հ.Մ.Ը.Մ.ի հեզասահ գործունէութիւնը խանգարող հարցերէ եւ մանրուքներէ:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.

The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ (Բ. ՇՐՋԱՆ, 1931-1940)

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, Ժ. ՄԱՍ

«**Հ**այֆայի նորակազմ մասնաճիւղի առժամեայ վարչութեան ատենապետ տոքթ. Մահսէրէճեան հիւրաբար քաղաքս գտնուելով, մասնակցեցաւ Շրջանային Վարչութեան նիստին եւ բացատրութիւն տուաւ Հայֆայի մասնաճիւղի կազմութեան եւ յարակից աշխատանքներու մասին, հաղորդեց նաեւ մասնաճիւղին տարած աշխատանքները կառավարութենէն վաւերացում ստանալու մասին եւ խնդրեց Շրջանային Վարչութեան բարոյական օժանդակութիւնը մասնաճիւղին սկզբնաւորութեան շրջանին:

Ուրախութեամբ լսելով տրուած բացատրութիւնը որոշուեցաւ ի պատասխան իրենց բերանացի դիմումին, նամակով մը վաւերացնել Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, խոստանալով նեցուկ ըլլալ միշտ (Ատենագրութիւն, 30 Օգոստոս 1933):

Լաթաքիան 27 Օգոստոս 1933 թուակիր նամակով կը յայտնէ իր նորընտիր վարչութեան կազմը՝ Պ. Ուղուրլեան, Գ. Շիրրտրմեան, Հ. Ղազարեան, Ի. Թորոսեան, Գ. Զպուքճեան, Կ. Սերայտարեան, Մ. Ալպոզանեան: Հոմս եւս իր նորընտիր վարչութեան կազմը կը յայտնէ 29 Օգոստոս 1933 թուակիրով. Հոմսի վարչականներն են՝ Լ. Թոքաճեան, Մ. Երկաթունի, Ա. Վարդանեան, Գ. Գնունի (Գ. Պաղտասարեան), Հ. Երկաթունի: Իսկ Պէյրութի նորընտիր վարչականներն են Վահան Թորոսեան, Վահան Արսէնեան, Ֆերտինանտ Քեհեայեան, Վահրամ Պէօճէքեան, Օննիկ Փիլիկեան, Արտաւազդ Հաճեան, Բիւզանդ Մխաւեթիքեան:

Պէյրութի մասնաճիւղի սկաուտները Օգոստոս 10-ին շոգեկառքի ճամբով կը մեկնին Զահլէ: Զահլէի մէջ կը հիւրասիրւին վարչութեան կողմէ, «Մեր արիները Զահլէի ճամբուն վրայ - Սոֆար. վարիչ՝ Կարապետ Մեծմօրուքեան. 22 օրէ ի վեր կը շրջին Լիբանանի զանազան ամարանոցները ու գեղատեսիլ վայրերը» («Ազդակ», թիւ 959): Իսկ Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ականներուն տարեկան արշաւը վարչութիւնը կ'որոշէ կազմակերպել դէպի Սաննին՝ 27 Օգոստոս 1933-ին:

Սուրիոյ եւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պատգամաւորական ժողովէն ետք, Հալէպ եւս կը գումարէ ընդհանուր անդամական ժողով եւ կ'ընտրէ նոր վարչութիւն: Օգոստոս 18 թուակիրով կ'ենթարկուի վաւերացման: Վարչական նոր կազմը՝ Միսաք Պրժեան, Կոպեռնիկ Մանսուրեան, տոքթ. Ատուր Գապաքեան, Յարութիւն Պազարպաշեան, Լեւոն Աբգարեան, Յարութիւն Խաչատուրեան, Նշան Թիւսիւզեան: Նորընտիր վարչութեան առաջին գործը կ'ըլլայ յանձնախումբերու կազմութիւնը՝ սկաուտական եւ ակումբի, մարզական եւ ֆուտպոլի, թենիսի եւ դաշտի քարոզչութեան:

1933-ի Հալէպի սկաուտական արշաւը, Լեւոն Աբգարեանի պատասխանատուութեան տակ, տեղի կ'ունենայ Քեսապ-Պիթիաս ուղղութեամբ:

Սկաուտները կը մեկնին Անտիօք, անցնելու Քեսապ: Անտիօքի մէջ կը դիմաւորուին տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ականներուն կողմէ: Կ'անցնին Քեսապ, բանակատեղին կ'որոշեն ու վրանները կը լարեն:

«Բնութեան ծոցին մէջ, կը գրէ սկաուտական տեղեկագիրը, ուրախ կեանքի մը սկզբնաւորութիւնն էր, պահակները իրենց դիրքերուն վրայ, խոհարարները իրենց գործերուն, խմբական պտոյտներ իրենց կարգին: Շատ ուրախ էինք: Առաջին անգամը ըլլալով գուտ հայաբնակ գիւղի մը մէջ կը գտնուէինք, հիւրասէր եւ նահապետական... Օգոստոս 14-ին, առօրեայ զբաղումները կատարելէ ետք, երեկոյեան խա-



րուկահանդէս սարքեցինք: Բանակավայր փութացին նաեւ քեսապցիները: Եղան արտասանութիւն, երգ, պար, այս վերջինին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ գիւղացիները:

«Մեր վերջին օրը Քեսապի մէջ, էքիզ Օլուք պտոյտ մը կատարելէ ետք, դարձանք գիւղ խանդավառ մուտքով՝ թմբուկի ու փողի առաջնորդութեամբ: Նոյն իրիկունը «Դոլմի վաճառականը» եւ այլ զաւեշտներ ներկայացուցինք: Կէս գիշերին ճամբայ ելանք դէպի Պիթիաս:

«Լուռ ու մութ գիշեր է: Օձապտոյտ ճամբաներէ կը յառաջանանք: Պարան մը, առաջնորդէն մինչեւ վերջին սկառտը իրարու միացուցեր է: ... Արեւածագը ուրախութեամբ ողջունեցինք. ազատութիւն բերաւ, կրնայինք առանց պարանի քալել: Մեզմէ շատերուն համար անսահման ուրախութիւն էր ծովը որ տեսանք... յառաջացանք գետափ, նախաճաշեցինք, շարունակեցինք մեր ճամբան ու հասանք Խտրրպէկ: Հոս, հսկայ ծառի մը տակ իջեւանեցանք: Գիշերը դպրոցին մէջ անցուցինք: Առաւօտուն շարունակեցինք մեր ճամբան դէպի Հաճի Հապիպլի եւ անկէ անցանք Պիթիաս, ուր փողով ու թմբուկով փառաւոր մուտք գործեցինք: Առաջնորդուեցանք եկեղեցի: Հանգստանալէ ետք, վրանները լարեցինք: Յաջորդող օրերուն մեր պտոյտները կատարեցինք՝ Ջաղլաջան, ուր տիկ. Աղաւնի Ապաճեան այժ մը նուիրեց: Իջանք Չիֆթլիկ ու լոգցանք: Իրիկունը ունեցանք մեր խարուկահանդէսը: Յաջորդ օր, Օգոստոս 25-ին, երեկոյթ մը սարքեցինք, ներկայացուցինք «Թիւ հինգ խելագարը»: Ժողովուրդը մեծապէս գնահատեց: Մեկնեցանք Սոուզ Օլուզ: Հետաքրքրական էր ճամբան... մանաւանդ Պէյլանի բարձունքը, կիրճը, ապա Սոուզ Օլուզ:

«Գիւղին արեւմտեան կողմը Գնալը Տէփիին վրայ որոշուեցաւ բանակավայր: Վրանները լարեցինք: Իրիկուն խարու-



Հ.Մ.Ը.Մ.ի Մերձուտ Արեւելքի Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներ: Ոսթի, ձախէն աջ՝ եղբայրներ Սուրէն Սուրատեան, Կարպիս Թելեան եւ Յակոբ Կարապետեան (Արելլա): Նստած՝ տոքթ. Յակոբ Պերպերեան:

կահանդէսին պատրաստութիւնները տեսանք: Գեղեցիկ տողանցքէ մը վերջ, գիւղին բազմութեան ներկայութեանը կրակ տուինք խարոյկին: ... Կիրակի բոլոր կազմով եկեղեցի գացինք: Իրիկուն հանդէս սարքեցինք: Մեր խոհանոցը իրաւաբան Հայկ Պալեանէն ոչխար մը նուէր ստացաւ:

«Օգոստոս 28-ին, ինքնաշարժով, մեր գոյքերն ու քանի մը անհանգիստ տղաք Աթըք ղրկեցինք: Մնացածներս Ալէքսանտրէթ իջանք: Գրկաբաց ընդունուեցանք Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան եւ անդամներուն կողմէ: Կատարեցինք տողանցք ու ծովային լոգանք: Մեծ հետաքրքրութիւն ստեղծեցինք մեր կազմակերպութեան շուրջ: Տեար Երէցեան կէսօրուան մեր հացը տրամադրեց, իսկ Գասպար Մենակ՝ ինքնաշարժ, որպէսզի հանգստանալէ ետք մեկնինք Աթըք: Իրիկուն երբ Աթըք հասանք, մեր վրանները պատրաստ գտանք: Հոն ղրկուած անհանգիստ տղաքը, Գրրգ Խանէն եկած Հ.Մ.Ը.Մ.ի մեր սկաուտներուն հետ, ամէն բան կարգի դրած էին:

«Աթըք, զուտ հայաբնակ գիւղը, հաճելի ամարանոց մըն էր: Մեծ հաճոյք զգացինք ազատ բնութեան, առողջ բնութեան գիրկը: Հոս Խաչատուր աղա Գարապաճաքեան, Սուրէն Մ. Ագիրեան այժ ու ոչխար նուիրեցին մեր խոհանոցին, իսկ Գրրգ Խանէն Ստեփան Ֆարաճեան՝ ուլ մը:

«Այս այնքան կրթիչ ու խանդավառ կեանքի օրերը համրուած էին ու մենք պէտք էր դառնայինք քաղաքին ժխորին, քաղաքին խիտ բնակչութեան գիրկը...»:

Ալէքսանտրէթի մասնաճիւղի կարգադրութեամբ, Ալէքսանտրէթի առջեւ խարսխած անգլիական զոյգ մարտանաւերուն - Սիւսէքս եւ Շրոպչայր- խուճբերուն հետ, Հալէպի առաջին խուճբը կը մրցի իրեն հետ ունենալով Դամասկոսի խուճբի երկու լաւ խաղացողները:

Այս խուճբը Միջերկրականի Ֆուլթպոլի



1948. Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆուլթպոլի խուճբը Կիպրոսի մէջ:

ախոյեանն է: Մրցումը տեղի ունեցավ Սեպտեմբեր 10-ին: Հ.Մ.Ը.Մ-ը փայլուն խաղարկութեամբ մը պարտութեան կը մատնէ Ալպիոնի ծովային զինուորները («Ազդակ», թիւ 970): Խաղէն ետք, խաղացողները կը հիւրասիրուին Ս. Քալէնտրեանի բնակարանին մէջ, ուր «Չերմ մթնոլորտի մէջ լսուեցաւ Անգլիոյ ազգային քայլերգը, որուն արձագանգը եղաւ մեր «Յառաջ նահատակ»ը:

«Ազատն Ալպիոնի եւ Արարատի հալածական ցեղին զաւակներուն այս գոյգ քայլերգներուն գոռ ալիքներուն մէջէն մենք անգամ մը եւս կը դառնանք աշխարհին թէ մեր ցեղը պիտի ապրի ու պիտի երթայ հայրենիքի գրկին մէջ շարունակելու իր յաղթական խոյանքները» (Ազդակ», թիւ 373):

Ֆուլթոնի եղանակի բացման առաջին գեղեցիկ յաղթանակն էր այս:

Հալէպի անմիջական կից հայաքաղաք Նոր Գիւղի մէջ սկսուածներու թիւին օր ըստ օրէ աւելնալը վարչութիւնը կը մղէ մտածելու հոն ահումբ բանալու կարելիութիւններու մասին: Նիւթական նեղ կացութիւնը ատեն մը ձգձգումի կ'ենթարկէ ծրագիրը, չ'ուշանար սակայն Յարութիւն Խաչատուրեանի գեղեցիկ ելոյթը՝ իր բնակարանին սենեակներէն մէկը տրամադրելու սկսուածներուն:

Որպէսզի գաղափար մը կազմուի այս կազմակերպութեան վարչական ժողովներուն նկատի առնուած օրակարգի խնդիրներուն մասին, ստորեւ կու տանք Հալէպի մասնաճիւղին վարչական նիստերէն մէկուն, 3 Հոկտեմբեր 1933-ի նիստին օրակարգը:

1. Նախորդ ատենագրութեան ընթերցում
2. Նամակ Շրջանային Վարչութեան
3. Նամակ Լաթաքիոյ քոյր մասնաճիւղին
4. Նամակ Տիգրանակերտի «Տիգրիս» Ֆուլթոնի խումբին
5. Դաշտի պահակի առաջարկները
6. Հաշուական տետրակներու կարգադրութիւն
7. Անգլիական Սուսէքսի մրցումին հաշիւը
8. Պիւտճէի հարց
9. Դաշտին նոր պայմանագրութիւնը
10. Ֆուլթոնի յանձնախումբը
11. Թենիսի յանձնախումբը
12. Դաշտի յանձնախումբը
13. Ֆանֆարի հարց
14. Օրացոյցի հարց
15. Սինեմայի հարց
16. Արաբ-Բողոքի Վարժ-ի թենիսի պայմանագրութիւն
17. Շրջանային Վարչութեան ղրկած ծրարը
18. Ակումբի բացում
19. Վարչութեան ժողովի օր

(Շար. 10)

ՍՓԻՒՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՐԵԱՆԻ...

Շարունակուած Բ. կողքէն

Սփիւռքի նախարարը գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը, որ, հակառակ մեր օրերու գանազան դժուարութիւններուն, կը յաջողի հայ մանուկն ու երիտասարդը դաստիարակել իբրեւ օրինակելի հայեր: Ան փոխանցեց, որ հպարտութեամբ կը վկայէ Հ.Մ.Ը.Մ-ականներու օրինակելի կեցածքին մասին բոլոր այն երկիրներուն մէջ, ուր այցելած է՝ նշելով, որ ինք վստահ է, որ միութեան վեհ առաքելութիւնը պիտի շարունակուի:

Իր խօսքին մէջ, նախարար Հրանոյշ Յակոբեան լուսարձակի տակ առաւ լիբանանահայ գաղութին կարեւորութիւնը՝ նշելով, որ ուժ կարելի է առնել անկէ, զօրանալ անոր մշակութային ու երիտասարդական աշխուժութեամբ: Ան յայտնեց, որ հպարտութեամբ լսած եւ ընդունած է Լիբանանի պետական անձնաւորութիւններուն կողմէ լիբանանահայ գաղութին մասին արտասանուած դրական խօսքերը:

Աւարտին, եղբ. Գառնիկ Մկրտիչեան նախարար Հրանոյշ Յակոբեանին յանձնեց յուշանուէր մը:



խարար Հրանոյշ Յակոբեան այցելեց Այնճար, ուր դիմաւորեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն մասնաճիւղի շեփորախումբին եւ սկսուած խանդավառ շարքերուն կողմէ:

Այնճարի մէջ, Յակոբեան հանդիպումներ ունեցաւ գիւղի պատասխանատուներուն եւ ժողովուրդին հետ: Այս առիթով, ան յարգանքի իր տուրքը մատուցեց Մուսա լեռան հերոսամարտի յուշարձանին՝ շրջապատուած Հ.Մ.Ը.Մ-ական սկսուածներով եւ վարչական անդամներով:

ՆԱԽԱՐԱՐ ՅԱԿՈՐԵԱՆ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնատեղի այցելութենէն օր մը ետք, նա-



ՈՐՊԵՍՁԻ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ՄԷՉ ՉԴԱՌՆԱՆՔ «ՉԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՏԳԻՏՈՒԹԵԱՆ» ՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՈՒՆ ՊԱՏԱՆԴԸ

Սարգիս Մահտերձեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հին թէ նոր ժամանակներուն, իւրաքանչիւր դարաշրջան յաճախ զինք կերտողները նետած է այնպիսի արագ զարգացումներու մէջ, որոնք մարդոց ըսել տուած են, թէ կ'ապրին «գլխապտոյտ պատճառող դէպքեր»:

Անցեալը ձգենք «անցեացի»ներուն, խօսինք մեր օրերուն մասին: Մենք ալ իրաւունք ունինք ըսելու, թէ կ'ապրինք գլխապտոյտ պատճառող, մինչեւ իսկ մեզ անխմիչք գինովութեան մատնող զարգացումներու ոլորապտոյտին մէջ: Երբեմն կ'ունենանք այն զգացումը, թէ զանգուածաբար իբրեւ մարդկութեան ամբողջ ընտանիք, թէ հայրութիւն՝ կը նաւարկենք յորձանուտի մը ալիքներուն վրայ, եւ ինչ ալ ըլլան նաւարկողներու ուժերը, ստեղծուած հոսանքները նաւը կը սահեցնեն այնպիսի ոլորտներու մէջէն, որոնք կրնան ամբողջապէս չհամապատասխանել կեանքի ճամբորդութիւնը կատարողներու բաղձանքին. աւելին, կրնանք մինչեւ իսկ չանդադառնալ թէ մատնուած ենք անբաղձալի վիճակի, որ ունի ողբերգական երես մը. նման վիճակի իրազեկութեան բացակայութիւնը զանգուածներս կը նետէ տարօրինակ երանութեան

մը գիրկը, կ'ապրինք խաբուսիկ երջանկութիւններ, մեր ստացած գլխապտոյտը պատճառ կ'ըլլայ, որ դաժան իրականութիւնները վրիպին մեր իմացական կալուածէն:

Նման վիճակ նաեւ կարելի է բնութագրել իբրեւ... երջանիկ տգիտութիւն:

Որպէսզի չմեղադրուինք իբրեւ վերացական փրկաստիպութիւն կատարող, թուենք գլխապտոյտ պատճառող մերօրեայ կարգ մը զարգացումներ:

Վերջին տարիներուն, տնտեսական-եղեմտական աշխարհակու տաքնապը ունի գլխապտոյտ պատճառող իր ընթացքն ու ազդեցութիւնները:

Աշխարհի տարբեր ցամաքամասերուն մէջ, յաճախ զինուորական աստուոր իրազարծութիւններով ներկայացուող ողբերգութիւնները, «Արաբա-

կան գարուն» կոչեցեալ խաբկանքէն մինչեւ ասիական, ասիական, եւրոպական ու ամերիկեան երկիրներու իրազարծութիւնները կը կազմեն յորձանուտին մէկ այլ մոլորեցնող ալիքը:

Ասանձներու, Մենինկներու, Մոտորներու ծանօթ բացառատուներով վերցրած վարագոյրները նմանապէս սպառնական ալիքներ ստեղծած են մէկ կողմէ՝ միջ-պետական յարաբերութիւններու, եւ միւս կողմէ՝ մարդոց տարրական իրաւունքներու պաշտպանութեան դաշտերուն մէջ, պատճառելով այլ տեսակի գինովութիւն մը:

Ճարտարարուեստի աշխարհին մէջ, այլ բնով իսկ վազք մը իր աստուոր ներգործութիւնը կ'ունենայ կենսոլորտին վրայ, տարուէ տարի կը բարձրացնէ բնական աղէտներու «սակարանը», եւ անտեսելով երկիրներու ու ցամաքամասերու սահմանները՝ իր իւրապատու գլխապտոյտը կը պարգեւէ երկրագունդի բնակչութեան:

Եթէ նման երեւոյթներու եւ իրական զարգացումներու թուարկումը շարունակենք, ուրուագծած կ'ըլլանք համայնապատկեր մը, որ ցոյց պիտի տայ թէ աշխարհը կ'ապրի աննախընթաց յեղաշրջումներու դարաշրջան մը (ընդունինք նաեւ, որ որեւէ յեղաշրջում կրնայ ինքզինք կոչել աննախընթաց). այժմու ոլորապտոյտը մոռացութեան մատնած է եւ լուսանցքայնացուցած՝ հազիւ 30 տարիներ առաջ աշխարհը այլապէս փոթորկած՝ կլազնոսթն ու անոր «ձագուկները», սկսելով խորհրդային Միութեան փլուզումէն, անցնելով Եւրոպային նոր աշխարհագրութիւն մը պարզեցող արիւնալի ու անարիւն զարգացումներէն, հասնելով մինչեւ Միջին Արեւելք ու Կեդրոնական Ասիա. զարգացումներ, որոնք նոր ձեւաւորում տուին հին աշխարհին ու մարդկութիւնը յուզող՝ չհինցող էական հարցերուն:

Յիշեալ իրավիճակներուն թուարկումով կը բաւականանք, առանց այստեղ մտնելու անոնց վերլուծումներու ոլորտին մէջ:



այս էջերով: Խօսքը կը վերաբերի ԱՐԴԻ ԱՐ ՀԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ապրած զարգացումին, որ մարդկութեան հսկայական բարիքներ բերելով հանդերձ, աշխարհը դրած է նաեւ անտեսանելի պատճառներու դիմաց, եւ սակայն, կարծէք թէ ուժը, տրամադրութիւնն ու կամքը-կամեցողութիւնը չունինք մենք զմեզ ձեռքազատելու ստեղծուած ալիքներուն պատանդի վիճակէն: Եւ այս տաքնապը, համամարդկային ըլլալով հանդերձ, իր իւրապատու ներգործութիւնը ունի մեր՝ հայրութեան դիտանկիւնէն:

Նախ կատարենք հիմնական հաստատում մը: Արհեստագիտութիւն բառը իր մէջ ունի գիտութիւն եզրագիտութիւնը, որեւէ դարաշրջանի, նոյնպէս եւ այսօր, ըստ ամենայնի լաւ բան է, բարիք է աշխարհին, մղիչ ուժ է եւ ցուցանիչ՝ մարդուն զարգացման ու քաղաքակրթութեան: Այս մասին վէճ չի կրնար ըլլալ, որքան ալ որ գիտութիւնը երբեմն չարաչառութիւն ենթարկուի եւ ստեղծէ անբաղձալի հետեւանքներ: Հետեւաբար, մեր ներկայացնելիք մտահոգութիւնները պէտք է ընկալել գիտութեան բարիքները ընդունողի դիրքէն անդին անցնող մօտեցումով, նոյնինքն գիտութեան հանդէպ պաշտամունքի հասնող սիրոյ ու յարգանքի տեսանկիւնէն:

Արդի արհեստագիտութիւնը մէկն է այն գործոններէն, որ իր ստեղծած գլխապտոյտներով կը գինովցնէ մարդկութիւնը, անվիճելի բարիքներու կողքին, մարդկութիւնը դրած է ընդհանրապէս անտեսանելի յորձանուտի մը մէջ եւ դժուար տեսանելի վտանգներ կը սպառնայ աշխարհին, նոյնինքն գանգուածային քաղաքակրթութեան: Փաստօրէն, մարդկութիւնը գերին դարձած է տարօրինակ ախտի մը, որուն ամէնէն մօտիկ նախընթացը արձանագրուած էր ճարտարարուեստի Յեղափոխութեան առիթով, սակայն նուազ վտանգաւոր կերպով, վտանգ՝ որուն խորքին չենք ալ անդադառնար երբեմն:



Կարելի է մեզ մտահոգող ախտը կոչել տարբեր անուններով, բայց եկէք պահ մը բաւարարուինք «զանգուածային տգիտութիւն» եզրով:

Հաւանաբար տարօրինակ ու անընդունելի նկատուի «զանգուածային տգիտութիւն» բացատրութիւնը, երբ գիտական նորութիւնները ու մանաւանդ անոնց պտուղները այսօր այնքա՛ն մատչելի են մարդուն, մեծին ու պզտիկին: Մեր խօսքը կը վերաբերի գիտական նորութիւններու յորձանուտին բացասական ազդեցութիւններուն, որոնց բնական, ակամայ եւ երբեմն ալ առանց անդրադառնալու գերին դարձած են զանգուածները, առանց տարիքի ու սեռի խտրութեան: Մարդկութիւնը սարգոստայնի մէջ հետզհետէ աւելի՛ ամուր կերպով ներգրաւող բացասական իրականութիւնը խորքին մէջ ժխտումն է տուեալ նորարարութեան խոստացած բարիքներուն: Բաւականանանք քանի մը օրինակով, որովհետեւ այդ քանի մը օրինակն ալ բաւարար են բացատրելու, թէ ինչ ըսել կ'ուզենք արդի արհեստագիտութեան չարաշահումով ստեղծուող «զանգուածային տգիտութիւն»ով:

Տասնամեակներ առաջ, մարդկութեան առօրեան չէր արձանագրած համակարգիչ եւ բլոգային հեռաձայն անունով հրաշալիքներն ու անոնց միջոցով՝ աշխարհը սեղանիդ վրայ կամ ափիդ մէջ ունենալու կարողութիւնը: Տգիտութեան ու յետամնացութեան համազօր է վէճ յարուցել արհեստագիտութեան այս բարիքներուն դրական երեսին մասին, սակայն նաեւ պէտք է տեսնել, որ անոնք պատճառ կը դառնան... մտային կարճատեսութեան, մինչեւ իսկ ուղեղներու կուրուլթեան, եւ՝ ե՞րբ... գիտութիւններու ովկիանոս մերօրեայ աշխարհին մէջ:

Մանրամասներ: Պատանին, երիտասարդը, տարեցներ անգամ գերին դարձած են համացանցային հաղորդակցութիւններու «ոստայններուն»․ լայն ժամանակ եւ ճիգ կը մըսխուին, օրինակի համար, text messaging, facebook, skype ու նմանօրինակ միջոցներու գործածութեան ճամբով: Արտագրող ընկերութիւններ ամէն օր, ամէն շաբաթ եւ ամէն ամիս նոր հնարքով մը կ'օժտեն գնորդները, որոնք խուսափում չունին արդիականութեան հետ քայլ պահելու պարտադրանքին: Մսխում ըսելով, ի մտի չունինք միայն նիւթական երեսը, այլ մարդուն համար ամէնէն սուղ բանը (առողջութենէ ետք), այսինքն՝ ժամանակը: «Այսօրուան աշխարհը այս է, այսպէս կը պահանջէ» մտածելով՝ կը խուսափինք դառն իրականութիւններէ, կը մոռնանք, որ կեանքի ընթացքն ու գիտութեան պտուղները նախ եւ առաջ ՄԱՐԴՈՒՆ ձեռքին մէջ են, ենթակայ՝ ՄԱՐԴՈՒՆ տիրապետութեան, եւ ո՛չ թէ հակառակը: Այս ճշմարտութիւնը մարդուն ընկերացած է այն օրէն, երբ Միտք կոչուող կալուածը սկսաւ զարգանալ, մարդը ինքզինք ազատագրեց նախապաշարումներու, խաւարամտութեան, եւ ի վերուստ դասաւորումները առանց ուղեղի բովէն անցընելու՝ զանոնք հալած իւղի պէս ընդունելու վիճակէն:

Մերօրեայ յորձանուտը ստեղծած է գլխապ-

տոյտ առթող այնպիսի վիճակ, ուր մարդը իրողապէս դարձած է արդիական գործիքներուն կամաւոր պատանդը, անոնց տուրք կու տայ անտեղի ու անհարկի համեմատութեամբ: Հաճելի ժամանակ անցընելու նպատակով ի մի եկած խմբակներ, բնակարաններու, զբօսավայրերու եւ երեւակայելի ու աներեւակայելի վայրերու մէջ իրենց գլուխները կը կախեն փոքր սարքերուն վրայ: Տակաւին, ոչ հազուադէպօրէն կ'արձանագրուին այնպիսի ծայրայեղութիւններ, ուր մինչեւ իսկ նոյն յարկը բաժնեկցողներ իրարու հետ կը հաղորդակցին... facebook-ի կամ համազօր ալիքներու միջոցով:

* * *

Ի՞նչ են այս յորձանուտին հետեւանքները, որոնք քիչ առաջ տեղադրեցինք «զանգուածային տգիտութիւն» ընդհանուր խորագիրին տակ, կացութիւն՝ ուր գիտութեան տիրապետութիւնը պատճառ կ'ըլլայ... գիտելիքի նահանջին: Միայն որոշ գիծի մը վրայ գիտելիքի կուտակում իմաստութեան ցուցանիչ չէ: Քիչ ետք կ'անդրադառնանք նաեւ այս ընդհանուր ախտին «ձագուկներուն», այսինքն անկէ ծնունդ առնող ենթաախտերու, որոնք ունին աւելի ծանօթ անուանումներ:

Համակարգչային հաղորդակցութեան արդի միջոցները, անփոխարինելի բարիքներու կողքին, զանգուածները դրած են իրենց ժամանակն ու ճիգը մակերեսային ոլորտներու մէջ վատնելու տարօրինակ հարկադրանքին տակ: Հարց տանք՝ պատանին ու երիտասարդը արդեօք օրական քանի՞ ժամ կը տրամադրեն համակարգչային զբաղումներու, որոնք կը կոչւին համակարգչային հաղորդակցութիւն (texting, skype, facebook եւ այլն) եւ խաղեր, եւ որոնք «հնադարեան» դարձուցած են ե-նամակն ու նմանակները, թուայնացած արհեստագիտութիւնը օգտագործող խաղալիքները, հնարքներ, որոնք նորարարութիւն էին ու յեղաշրջումներ յառաջ բերին հազիւ 15-20 տարի առաջ, ինչպէս որ իր արագ յեղաշրջումները ապրեցաւ ու կը շարունակէ ապրիլ բլոգային հեռաձայնը:



Պատանի թէ երէց՝ ճիգ կ'ընեն ամէն վայրկեան ըլլալու «լուրերու աշխարհ»ին մէջ, քայլ պահել հասկանալի մատուցող նորութիւններու էջին վրայ, երկար ժամեր «խօսակցութիւններ» ստեղծել բարեկամներու-ընկերներու հետ, լուսանկարներ, իրենց առօրեան արձանագրող ժապաւէններու պատառիկներ փոխանակել, տեսնել, թէ այսինչը ո՞ր ճաշարանին մէջ ի՞նչ ուտեստեղէն ճաշակելու վրայ է, այնինչին նորածինը ինչպիսի՞ շարժումներ կ'ընէ, ինչպէ՞ս կը ժպտի, կու լայ, իբրեւ թէ նման բաներ չնաշխարհիկ նորութիւններ ըլլային: (Չենք ուզեր մտնել չափազանցութեան հասնող հաղորդակցութեանց պատճառած արկածներուն մրցանիչներու ոլորտին մէջ):



Կ'անդրադառնա՞նք արդեօք, որ մեր ձեռքերուն մէջ բաւող հաղորդակցութեան տիպիկները՝ «խելացի հեռաձայնները» (smart phone), պաստառով օժտուած տախտակներն (iPad) ու անոնց ընտանիքին միւս անդամները ինչպիսի՞ ժամանակ եւ ճիգ կը խլեն ու կը վատնեն յումայէտս:

Կարելի է բազմացնել այս մտահոգութեան տուն տուն ու շուրջներն ու օրինակները, սակայն կը կարծենք, որ վերոյիշեալները բաւարար են քողազերծելու, թէ արդի արհեստագիտութեան բարիքներուն մակերեսային օգտագործումը ինչպիսի՞ նահանջներու պատճառ կ'ըլլայ: Այս օրինակները նաեւ ըստ բաւականին կը բացատրեն, թէ ուրկէ կը բխի «զանգուածային տգիտութիւն» ախտաճանաչումը:

Քիչ մըն ալ խօսինք գլխաւոր ախտին ենթաբաժանումներուն մասին ու զանոնք կոչենք իրենց անուններով:

Ախտին «ձագուկները» բազմաթիւ են. առաջին հերթին՝ **ԻՍԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻ ՆԱՀԱՆՁԸ**, որ պատճառ կ'ըլլայ թերթ ու գիրք կոչուող արժէքներու սակարանին անկման, գրատուններու փակման, տպագրանակներու ճղճիմացման, գիտելիքներէ, մշակութային արժէքներէ եւ տակաւին՝ անցեալի գանձերէն զանգուածներու անջատման ու մեկուսացման, անհատներու անզգալաբար փոքր օղակի մը մէջ բնատարկումի:

Կրնայ առարկուիլ, թէ յիշեալ գործիքները աննախընթացօրէն հարստացուցած են ընթերցումի նիւթերը, մարդիկ այս գործիքներուն ճամբով շատ աւելի բան կը կարդան, շատ աւելի արագ ու անմիջականօրէն կապի մէջ կ'ըլլան աշխարհին հետ, քան ինչ որ կ'ընէին անցեալի սերունդները: Հոս կայ ճշմարտութեան բաժին մը, սակայն նաեւ կայ շատ կարեւոր հարցում մը. **Ի՞նչ է ԱՅՍՕՐՈՒԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻ ՆԻԻԹԵՐՈՒՆ ՄԵԾԱՄԱՄՆՈՒԹԻՒՆԸ**, եթէ ոչ՝ աղբանոց թափուե-

լիք տեղեկութիւններ, միտքի ու հոգիի աճումը կաշկանդող ծանօթութիւններ (ի դէպ, պատկերասփիւռային «գրաւիչ» մրցումներ ալ քաջալեր կը հանդիսանան մարդու համար ոչ կենսական եւ օգտակար տեղեկութեանց կուտակման...):

Միշտ ալ եղած է դասագիրքերու սեղմ օղակէն անդին անցնող ընթերցելի նիւթերու ովկիանոս մը, որուն հետ հաղորդակցութիւնը արագօրէն կը նահանջէ յիշեալ պայմաններուն բերումով, մարդիկ իրողապէս կ'անջատուին անցեալէն, տարածք ունեցող (եւ ոչ թէ սեղմ-սեղմող) ներկայէն, ապագան կը դիտեն նեղ խողովակի մը մէջէն, նման այն աստղադիտակին, որ կրնայ մարդու աչքերը սեւեռել դէպի հեռաւոր անջրպետները, սակայն խափանել անմիջական տեսողութիւնը եւ թոյլ չտալ, որ աստղերը դիտողը տեսնէ զինք գրկող սենեակը, որ կրնայ օժտուած ըլլալ գեղանկարներով ու ակնահաճոյ այլ իրերով:

Նշեցինք արդէն, որ նման ախտէ մեր վարակումը կ'արդարացնենք՝ ըսելով, որ այսօրուան աշխարհը այսպէս է, չենք կրնար նման յորձանուտներու դէմ նաւարկել, լաւագոյն պարագային, պէտք է նաւարկել այս հոսանքին հետ, հոսանքն ի վար, ինչ որ ալ ըլլան անոր անմիջական ու հեռակայ հետեւանքները:

Հոս ալ ճշմարտութեան բաժին կայ, սակայն պահ մը հարցը դիտենք ազգային մտահոգութեանց անկիւնէն, առանց աչքաթող ընելու աշխարհին ու ամբողջ մարդկութեան պարտադրուած կացութեան առթած ցաւը, որ կրնայ նոր տեսակի մեկնաբանութեան տանիլ բանաստեղծին «սիրտս կ'արիւնի աշխարհի ցաւով» տողը...

Աւելի քան 20 տարի առաջ վերանկախացած մեր հայրենիքը եւ անոր սեւեռող աշխարհատարած հայութիւնը, գլխապըտոյտ պատճառող ապահովութեան-ընկերային-տնտեսական ոլորապտոյտներուն զուգահեռ, վարակուած է նաեւ «զանգուածային տգիտութեան» տանող այս ախտով:

Հետեւանքները թուենք ու անցնինք՝ առանց երկար մեկնաբանութեան ու վերլուծումի, որովհետեւ այս մանրամասնութիւնները իրենք զիրենք կը բացատրեն ըստ բաւականին:

Ստեղծուած յորձանուտին մէջ բռնուած սերունդներ, մասնաւորաբար պատանիներ ու երիտասարդներ կ'անջատուին անցեալէն ու ներկայի շատ մը իրականութիւններէն, ինչ որ կը մթագնէ, բնականաբար, ապագայի հորիզոնները: Ակամայ տգիտութիւնը իր «հովանին» կը տարածէ մշակոյթի ու ազգային բազում արժէքներու տարածքներէն ներս, հետե-

ւանքը կ'ըլլայ ազգային դիմագիծի նսեմացում, նօսրացում, հողի ու հայրենիքի արժեզրկում, մինչեւ իսկ «նոր աշխարհի բառամթերքով» վերասահմանում: Այլ խօսքով, երբ անիրական արժեքները կը գրաւեն իսկականին տեղը, գիտութեան զարգացման ու անոր բիւր բարիքներու այս դարուն՝ զանգուածային տգիտութիւնը կը դառնայ իրողական իշխան, բնական հետեւանքը կ'ըլլայ անժամանցելի գանձերու եւ արժեքներու իրողական կորուստ:



դեռ երէկի Հայ Դատի գործիչներու գործին ու ժառանգութեան, ու կը հարկադրուին ապրելու միայն այսօրը ու անոր ալ միայն... մէկ շուքը:

* * *

Արդեօք սահանքը անդառնալի՞ է եւ անյո՞յս:

Բնականաբար, ոչ: Կարելոր է սակայն, մեր լայնքով ու երկայնքով՝ հայրենիքով եւ Սփիւռքով, պետական թէ

այլ հեղինակութեանց մակարդակներուն վրայ, իւրաքանչիւր ընտանիքի՛ յարկին տակ անդրադառնալ ստեղծուած յորձանուտին ստեղծած գլխապտոյտին, որդեգրել դարմանումի ազդու միջոցները, առանց երբեք զրկուելու գիտութեան իսկական բարիքներէն, այլ զանոնք դնելով ի սպաս մեր ազգային շահերուն:

Ախտին անդրադառնալը, ինքնին, սկիզբն է դարմանումին, որ երբեք անկարելի չէ, պայմանաւ որ մարդը ըլլայ տիրապետողը իր հնարքներուն պտուղներուն, եւ թոյլ չտայ, որ իր ձեռակերտը դառնայ զինք պատանդ բռնող բռնակալ իշխան:

Ախտին անդրադառնալը, ինքնին, սկիզբն է դարմանումին, որ երբեք անկարելի չէ, պայմանաւ որ մարդը ըլլայ տիրապետողը իր հնարքներուն պտուղներուն, եւ թոյլ չտայ, որ իր ձեռակերտը դառնայ զինք պատանդ բռնող բռնակալ իշխան:

with the complements of

Restaurant Al-Mayass

ՀԻՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐՈՒՆ ՆԱՐՆՋԱԳՈՅՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Հրայր Եսայեան
ՊԷՅՐՈՒԹ

Վերջին երկու-երեք տարեշրջաններուն, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքը Ֆուլթայոլի եւ պասքեթպոլի տղոց ներկայացուցչական իր խումբերով զգալի զարթոնք մը կ'ապրի: Պասքեթպոլի պարագային, մօտ տասը տարի երկրորդ դասակարգի մէջ լուսարձակներէ հեռու մնալէ ետք, խումբը առաջին դասակարգ բարձրացաւ, իսկ Ֆուլթայոլի պարագային՝ վեց տարի երրորդ դասակարգի մէջ խաղալէ ետք, նախանցեալ տարի խումբը երկրորդ դասակարգ բարձրացաւ եւ այժմ երկրորդ դասակարգի պարագլուխի դիրքին համար կը պայքարի՝ առաջին դասակարգ բարձրանալու նպատակով:

Անշուշտ, ժողովրդային մարզախաղերու այս նուաճումները արձագանգներ կը ձգեն մարզադաշտերէն անդին:

Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի եւ Ֆուլթայոլի խումբերու վերազարթնումով, անոնց ճշդած նպատակներու եւ տարեկան ելեւմտացոյցի գուզահեռ բարձրացումով՝ լիբանանահայ գաղութը, որ տնտեսական, քաղաքական եւ ժողովրդագրական դժուար պայմաններու մէջ կը գտնուի, ձեռով մը թթուածին կը ստանայ, երբ իր նարնջագոյն խումբերը դաշտ կը ներկայանան: Նորածինէն մինչեւ ալեհեր ծերունին, հայախօս թէ արաբախօս, հայուլթեան մօտ թէ հեռու, հայուլթեան բոլոր շերտերէն եւ երբեմն հայուլթեանէն ալ դուրս մարդիկ մարզադաշտերէն ներս թէ պատկերասփիւռներուն առջեւ, մեծ ոգեւորութեամբ կը հետեւին խաղերուն ու կը քաջալերեն Հ.Մ.Ը.Մ.ը:

Երիտասարդներէն շատեր փոխանակ կլկլակի նիստերով, Ֆուլթայոլի գրաւախաղով եւ այլ ժամանցներով զբաղեցնելու իրենք զիրենք, իրենց ժամանակէն շաբաթը քանի մը ժամ Ֆուլթայոլի կամ պասքեթպոլի խումբին կը տրամադրեն:

Միաժամանակ, երեխաները, խանդավառուած այս մթնոլորտէն, իրենց համակրած խումբի մարզիկներուն մէջ հերոսներ կը տեսնեն, կ'ուզեն անոնց պէս ըլլալ ապագային: Անոնք կ'ուզեն Սեւակ Քէթէնճեանին կամ Ճոնի Կոնճեանին պէս մարզիկներ ըլլալ:

Հ.Մ.Ը.Մ.ի մարզական յաջողութիւններուն թնդիւնը ո՛չ միայն հայուլթեան մէջ կ'արձագանգէ, այլեւ՝ ամբողջ Լիբանանի մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի երկրպագուներու ոգին վարակիչ կը դառնայ այլ խումբերու, որոնք կը փորձեն Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն ստեղծած մթնոլորտին նմանը ունենալ: Բնականաբար, պատկառելի է Հ.Մ.Ը.Մ.ի մրցումներուն ընթացքին թրիպիւններուն վրայ զգացուող թրթռացումը:

Երբ երկրի քաղաքական գլխաւոր ուժերը մարզախաղերով ալ իրարու հետ կը մրցին՝ միլիոններ թափելով իրենց հո-

վանաւորած խումբերուն վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի մարզական իւրաքանչիւր նուաճումը անգամ մը եւս կը փաստէ հայուլթեան ներկայութիւնը լիբանանեան հրապարակին վրայ:

Այսուհանդերձ, վերազարթնումը ունի իր բացասական կողմերը: Հսկայ ելեւմտացոյցները, շնորհիւ նուիրատու հովանաւորներու, որեւէ ատեն կրնան կրճատումի ենթարկուիլ: Ասիկա ժողովուրդին մէջ կրնայ մեծ յուսախաբուութիւն յառաջացնել: Ոմանք դիտել կուտան, որ պասքեթպոլի եւ Ֆուլթայոլի խումբերուն վրայ ծախսուած գումարները կարելի է օգտագործել աւելի օգտակար եւ անհրաժեշտ նպատակներու:


Տեսակէտներու տարբերութիւնը յաճախ պատճառ կը դառնայ, որ ընկերային ցանցերու վրայ անհեթեթ անհամուլթիւններ ի յայտ գան Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն միջեւ, երբեմն ալ՝ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն եւ այլ խումբերու համակիրներուն միջեւ: Ի դէպ, պասքեթպոլի խումբին հովանաւորութեան շուրջ հարցի մը պատճառով բաւական տհաճ արտայայտութիւններ եւ հակառակութիւններ եղան, այն աստիճան, որ շատեր մոռցան խումբին վնասը շահէն զանազանել:

Ցաւօք, քանի որ դիմատետրը թոյլ կու տայ, որ ամէն մարդ իր կարծիքը արտայայտէ ամենայն ազատութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի կարգ մը համակիրներ իրենց դիրքորոշումները, տեղի թէ անտեղի կարծիքները, պատշաճ թէ անպատշաճ կերպով ցեխարձակումներն ու վերլուծումները կը ներկայացնեն միութեան վարչական բարձրագոյն պատասխանատուէն մինչեւ պահեստի կրտսերագոյն մարզիկին նկատմամբ: Ի վերջոյ, համացանցը հասանելի է ամէն մարդու, եւ քննադատութեան ենթարկուողները զգացում ունին, արժանապատուութիւն ունին: Ուստի, ի՞նչ օգուտ կրնան բերել պասքեթպոլի թէ Ֆուլթայոլի խումբերու մարզիկներուն դէմ կատարուած անհիմն եւ անմակարդակ քննադատութիւնները, Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուներու հանդէպ վարկաբեկիչ մեկնաբանութիւնները:

Վերջին երկու տարիներուն Հ.Մ.Ը.Մ.ի մարզական խումբերուն ապրած զարթոնքը մարզական յեղափոխութիւն մըն է իր դրական եւ ժխտական կողմերով:

Վարձքը կատար՝ անձ առ անձ բոլոր անոնց, որոնք տքնցան, ծրագրեցին, իրենց լուծման չխնայեցին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ը վերստին բարձրանայ, իր կարօտաբաղձ փառքի օրերը վերագտնէ եւ Հ.Մ.Ը.Մ.ի թիկունքին կանգնող հանրութեան բարոյահոգեբանական տրամադրութիւնը բարձրանայ:





«ԵՈՒՐՕ 2016»Ի ԶՏՈՒՄԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒՄՆԸ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

«ԵՈՒՐՕ 2016»ի գտնումի մրցումներուն ազդանը շանը տրուեցաւ 7 Սեպտեմբեր 2014-ին: Ինը խմբակներու բաժնուած 53 խումբեր մինչեւ Նոյեմբեր 2015 պիտի պայքարին ապահովելու համար 2016-ին Ֆրանսայի մէջ տեղի ունենալիք Եւրոպայի ամենէն կարեւոր մրցաշարքերէն մէկուն տոմար:

Ա. ԽՄԲԱԿԻՆ մէջ չե-խները իրենք գիրենք ապահով կը զգան: Անոնք չորս մրցումէ ապահոված են առաւելագոյն 12 կէտերը: Խմբակին երկրորդ դիրքին վրայ անակնկալօրէն բազմած է Իսլանտայի կազմը, մինչդեռ վերջին Մոնտիալին երրորդ դիրքը գրաւած Հոլանտա յաջողական երկու պարտութիւններէ ետք նոր սթափած է եւ երկու յաղթանակներ արձանագրած:



Ան տակաւին իր վերջին խօսքը չէ ըսած: Թուրքերը կրնան անակնկալներ ստեղծել, մինչ Լաթվիա եւ մանաւանդ Ղազախստան ոչինչ կրնան ընել մեծերուն հաշիւները խանգարելու համար: Այս խմբակին մէջ տակաւին ամէն ինչ անորոշ է:

Բ. ԽՄԲԱԿԻՆ մէջ Իսրայէլ եւ Կալէս յաջողած են գրաւել առաջին երկու դիրքերը: Իսրայէլ երեք մրցումներն ալ աւարտած է յաղթանակով: Կալէսի կազմը եւս դրական արդիւնքներ արձանագրած է: Կիպրոս կը հետեւի այս երկուքին եւ կը փորձէ խմբակին առաջին երկու դիրքերէն մէկը գրաւել:

Մինչ պեղծիքացիք, որոնք վերջին Մոնտիալին տպաւորիչ խաղ ներկայացուցին, տակաւին չեն յաջողած իրենք գիրենք փաստել: Երեք մրցումներէ անոնք հաւաքած են միայն հինգ կէտ: Պոնտիա եւ մանաւանդ Անտորա կորսնցուցած են մրցաշարքին տոմս ապահովելու իրենց յոյսերը:

Գ. ԽՄԲԱԿԻ առաջին երկու դիրքերու տիրացման համար կը մրցին

երեք կազմեր. Սլովաքիա, Սպանիա եւ Ուքրաինա: Սլովաքիա հաւաքած է առաւելագոյն կէտերը: Սպանիա եւ Ուքրաինա 9 կէտով կրնակալու կը հետեւին անոր: Պայքարը բուռն պիտի ըլլայ այս երեքին միջեւ: Մակեդոնիա մէկ մրցում յաղթելով չի մտահոգեր վերոնշեալ երեքը, իսկ Պիերոուսիա եւ Լիբանան մտադրած են իրագործած եւ մրցակցութենէ հեռու են ամբողջովին:

Դ. ԽՄԲԱԿԻՆ մէջ ամէն ինչ անորոշ է: Աշխարհի ախտիան Գերմանիա եօթը կէտով կը գրաւէ երկրորդ դիրքը: Լեհաստան տասը կէտով կը բազմի առաջին դիրքին վրայ: Սկովտիա եւ Ալբի ունին նոյնպէս եօթը կէտ եւ յաջողաբար կը գրաւեն երրորդ եւ չորրորդ դիրքերը: Վերոնշեալ չորս կազմերը բուռն պայքար պիտի մղեն գրաւելու խմբակին առաջին երկու դիրքերը եւ «ԵՈՒՐՕ 2016»ի տոմս մը ապահովելու համար: Վստահաբար, գերմանացիք առիթ պիտի չտան որ իրենց մրցակիցները գերազանցեն զիրենք: Անոնք նման մրցաշարքերու երբեմն կաղալով հանդերձ յաջողած են շրջանցել դժուար հանգրուանը: Վրաստան եւ մասնաւորաբար Ճիպրոթացիք, որ առաջին անգամ ըլլալով կը մասնակցի այս մրցաշարքին, հեռու են մրցակցութենէ:

Ե. ԽՄԲԱԿԻՆ մէջ անգլիացիք կը թուին ինքնավստահ ըլլալ: Անոնք հաւաքած են առաւելագոյն կէտերը: Երեք խումբեր՝ Սլովենիա, Զուիցերիա եւ Լիթվանիա նոյնքան կէտեր ունին եւ յաւաստի մրցումները անոնց համար պիտի ըլլան վճռական: Նուագագոյն սխալ մը առիթ պիտի տայ միւս մրցակիցներուն: Այս երեքին կը հետեւի Էսթոնիա, որ կրնայ անսխալակաւ ըլլալ եւ անակնկալ մը ստեղծել: Միակ անյոյս կազմը Սան Մարինոյի կազմն է:

Զ. ԽՄԲԱԿԻՆ մէջ Ռումանիա եւ Հիւսիսային Իրլանտա բաւական լաւ դիրքերու վրայ են: Ռումանիա արդէն յաջողած է ապահովել տասը կէտ եւ դժուար թէ իր առաջին դիրքը գրիչի: Հունգարիա եւ Ֆինլանտա կրնան պայքարել առնուազն երկրորդ դիրքին համար եւ խլել զայն Իրլանտայէն: Ֆարօ կղզիները հեռու են պայքարէն: Անակնկալը Յունաստանի կազմն է, որ միայն մէկ կէտ ապահոված ըլլալով գրեթէ յոյ-

սերը կորսնցուցած է յաջորդ հանգրուան անցնելու: Ե. ԽՄԲԱԿԻՆ մէջ աւստրիացիք յաջողած են գերազանցել Շուէտի եւ Ռուսիոյ կազմերը եւ ապահով կերպով գրաւած են խմբակին առաջին դիրքը: Երկրորդ դիրքին համար բուռն պայքար պիտի մղեն շուէտներն ու ռուսները: Մոնթենեգրո եւ Լիխթենշթայն եւս յոյսեր ունին գրաւելու երկրորդ դիրքը եւ Ֆրանսա մեկնելու տոմս մը ապահովել: Մինչ Մոլտաւիա իր յոյսերը կորսնցուցած է: Բնականաբար, Ռուսիա եւ Շուէտ պիտի փորձեն այդ երկիրներուն առիթ չտալ եւ անակնկալի առջեւ չգտնուել:

Ը. ԽՄԲԱԿԻՆ մէջ Խրուաթիա եւ Իտալիա հանգիստ չեն թուիր ըլլալ: Խրուաթները կը գրաւեն առաջին դիրքը, իսկ Իտալացիք մէկ կէտով կը գրիչին անոնց: Այս երկու կազմերուն ետին կը գտնուի Նորվեգիան, որ Իտալացիներէն մէկ կէտ պակաս ունենալով կրնայ բոլորին հաշիւները խանգարել եւ դառնալ առաջին երկու դիրքերը գրաւող կազմերէն մէկը: Պուլիարացիք չորս կէտ ունին միայն եւ դժուար թէ կարենան իրագործում մը կատարել: Անոնք կրնան խանգարել այս կամ այն խումբին հաշիւները: Մալթայի եւ Ազրպէյճանի մասնակցութիւնը աւելի ձեւակաւ է. անոնք դրական ո՛չ մէկ արդիւնք յաջողած են արձանագրել ցարդ:

Թ. ԽՄԲԱԿԻՆ մէջ Դանիա եւ Փորթուգալ ամէնէն վճռական ու ինքնավստահ կազմերն են: Ճիշդ է որ անոնք կէտեր կորսնցուցած են, սակայն անոնց մրցակիցները այնքան ալ կայուն կազմեր չեն եւ դժուար թէ կարենան գրաւել անոնց դիրքերը: Արպանիա չորս կէտով կը գտնուի երրորդ դիրքի վրայ եւ դժուար թէ կարենայ անախորժ անակնկալներ ստեղծել: Սերպերը յուսալից ըլլին իրենց համակիրները եւ ունին միայն մէկ կէտ: Անոնք լաւագոյն պարագային կրնան մեծե-



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի 25-ԱՄԵԱԿԻ ՀԱՆՌԻՍՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

Երեւանի Պատանի Հանդիսատեսի Թատրոնին մէջ հայ սկաուտները ուրախութեամբ եւ հպարտութեամբ նշեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Հայաստանի մէջ վերստեղծման եւ Երեւանի մասնաճիւղի գործունէութեան 25-ամեակը, ներկայութեամբ Երեւանի փոխ քաղաքապետ Արամ Սուքիասեանի:

«Մենք կը հաւատանք, որ սկաուտութիւնը 21-րդ դարու երիտասարդութեան ու հասարակութեան ղեկավար կը պատրաստէ: Սկաուտութեան մէջ մտնելով երիտասարդը կը պատրաստուի իր քաղաքացիական ապագայ կոչումին՝ իբրեւ պարտաճանաչ, իբրեւ կարգապահ քաղաքացի: Ան կը դաստիարակուի բնութեան գիրկը», ըսաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հիմնադիր-անդամ, Համաշխարհային Սկաուտական Շարժումի Բիւրոյի անդամ եղբ. Բագրատ Եսայեան:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Յովհաննիսեան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը տարբեր կառույցներու հետ գործակցելով, հիմնադրութեան օրէն ի վեր ու յատկապէս վերջին տարիներուն աշխուժօրէն կը մասնակցի հասարակական բազմաբնոյթ գործունէութեան:

«Ազգային զարթոնքի օրերուն, 25 տարի առաջ, սփիւռքահայ եւ տեղացի խումբ մը ուսանողներ, սերունդի հայեցի դաստիարակութիւնը կարեւոր նկատելով, հայրենիքի մէջ վերստեղծեցին 70 տարի առաջ Հայաստանէն տարագրուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը: Վերստեղծումը սկսաւ համայն հայութեան մայրաքաղաք Երեւանէն: Երեւանի մասնաճիւղը կը գործակցի տարբեր կառույցներու հետ, աշխուժօրէն կը մասնակցի հասարակական բազմաբնոյթ միջո-

ցառումներու եւ պատրաստ է մաս կազմելու հայրենանուէր իւրաքանչիւր նախաձեռնութեան: Այս իմաստով խորին երախտագիտութիւն կը յայտնենք Երեւանի քաղաքապետարանին, անձամբ Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանին՝ մեր ծրագիրները կեանքի կոչելու գործին սատարելու համար: Հ.Մ.Ը.Մ.ի Երեւանի վարչութիւնը խորհրդանշական անուանական յուշանուէրով կը յայտնէ իր երախտագիտութիւնը Տարօն Մարգարեանին այդ նշանակալի աւանդին համար», շնորհակատեց Վիգէն Յովհաննիսեան եւ յուշանուէր մը յանձնեց Երեւանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասեանին:

«Այսպիսի արմատներ ունեցող կազմակերպութեան հետ մեր համագործակցութիւնը արդիւնաւէտ է եւ պատուաբեր: Կը շնորհաւորեմ յոբելենական այս առիթին համար եւ մեր գոհունակութիւնը կը յայտնեմ հայնպատ աշխոյժ գործունէութեան համար՝ խոստանալով որ կը շարունակենք աւելի արդիւնաւէտ համագործակցութեամբ», յայտնեց Արամ Սուքիասեան:

Հայկական առաջին սկաուտական խումբերը կազմուած են 1908 թուականին: Երկար տարիներ սփիւռքահայ գաղութներու մէջ գործելով՝ միութիւնը նաեւ եղած է հայապահպանման գաղափարը տարածողը: «Սկաուտութիւնը իր հիմնադրութենէն սկսեալ Սփիւռքի մէջ ունեցած է մեծ դեր, ան պահած է բոլոր սերունդները, դաստիարակած է զանոնք հայապահպանման, հայրենասիրական ոգիով», ղիտել տուած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի մասնաճիւղի փոխ ատենապետ եղբ. Պերճ Թիւֆէնքեան:

Հանդիսութեան ընթացքին տասնեակ սկաուտներ երդում տուած են հաւատարիմ մնալու Աստուծոյ եւ ծառայելու հայրենիքին, միշտ օգնելու ուրիշներուն եւ գործելու իբրեւ պարտականութեան գիտակից, արի եւ վեհանձն մարդ, հնազանդելու հայ սկաուտի դաւանանքին:

Հ.Մ.Ը.Մ.

Հ.Ա.Ս.Կ.Ի 15-ՐԴ

ՀԱՄԱԺՈՂՈՎՐ



Թղթակից ԵՐԵՒԱՆ

28 Մարտին, Երեւանի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.-Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի 15-րդ համաժողովը, ներկայութեամբ բարձրաստիճան հիւրերու, Հ.Ա.Ս.Կ.Ի անդամ քոյրերու եւ եղբայրներու:

Ներկաներուն ուղղուած ողջոյնի իր խօսքին մէջ, Սփիւռքի փոխ նախարար Սերժ Սրապիոնեան մեծապէս գնահատեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ներդրումը՝ պատասխանատու եւ հայրենասէր քաղաքացիներու պատրաստութեան գործին մէջ: Այս առիթով, Հայաստանի մարմնամարզի եւ երիտասարդութեան հարցերու նախարարին անունով աջակցութեան պատրաստակամութիւն յայտնեց մարզական կազմակերպութիւններու, մարզական բժշկութեան եւ գիտամեթոտական աշխատանքներու համակարգումի բաժնի պետ Նարեկ Վանեսեան: Համաժողովին արդիւնաւէտ ընթացք եւ շօշափելի յաջողութիւններ մաղթեց սկաուտական Եւրասիական բաժնի գրասենեակի տնօրէն Եուրի Եմիլիան:

Պաշտօնական մասին յաջորդեց համաժողովին բնորոշ աշխատանքային բաժինը, որուն ընթացքին ընթացաւարտ վարչութիւնը ներկայացուց իր երկամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Կանոնադրային սկզբունքներու եւ պահանջներու համապատասխան, ժողովին մասնա-

կիցները յառաջիկայ երկամեակի գործունէութեան համար ներկայացուցին առաջարկներ եւ ընտրեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի նոր վարչութիւն եւ ներկայացուցիչներ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի յառաջիկայ Պատգամաւորական ժողովին:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան անդամ ընտրուեցան Հրաչեայ Շմաւոնեան, Գէորգ Գասպարեան, Վիգէն Նազարեան, Պերճ Թիւֆէնկճեան, Արթիւր Խաչատրեան, Լիլիթ Զաքարեան եւ Ռուզան Թամրազեան: Համաժողովէն անմիջապէս ետք նորընտիր վարչութիւնը գումարեց իր անդրանիկ նիստը:



ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԸՆԴԱՌԱՋ

15 Փետրուարին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Երեւանի կեդրոնական գրասենեակին մէջ, Խմբապետական Խորհուրդը հանդիպում մը կատարեց միութեան աստիճանաւորական կազմին հետ: Միաւորներէն ներկայ աստիճանաւոր քոյրերն ու եղբայրները ամփոփեցին ընթացիկ տարուան իրենց աշխատանքները, խօսեցան իրագոր-



ծումներով, անկատար ծրագիրներով եւ յառաջիկային կատարուելիք աշխատանքներով մասին:

Այս առիթով, Սկաուտական Խորհուրդը ներկայացուց այն բոլոր ծրագիրներն ու ձեռնարկները, որոնք տարուան ընթացքին կատարուած կամ իրագործուած են իր կողմէ: Յատուկ անդրադարձ կատարուեցաւ «Խաղաղութեան սուրհանդակներ» ծրագրին եւ նշուեցաւ զայն աւելի ընդարձակելու եւ զարգացնելու գաղափարը:

Հանդիպումին ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անդամ եղբ. Ռոմանոս Պետրոսեան: Ան կեդրո-

նական վարչութեան անունով ողջունեց ներկաները եւ արդիւնաւէտ աշխատանք մաղթեց բոլորին: Եղբ. Պետրոսեան միաւորներու ներկայացուցիչներուն թելադրեց լաւապէս պատրաստուիլ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի համաժողովին:

Հանդիպումին փոխանցուեցաւ Սկաուտական Խորհուրդի 2015 տարուան գործունէութեան ժամանակացոյցը: Աստիճանաւոր քոյրերն ու եղբայրները պատրաստակամութիւն յայտնեցին շարունակելու միաւորներու հզօրացման աշխատանքը:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԵՐԵՒԱՆԻ ՄԱՄՆԱՃԻՒԴԻ ԱՍՏԻՃԱՆԱԲՈՐԱԿԱՆ ԵՌՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ

Թղթակից
ԵՐԵՒԱՆ

27 Փետրուարէն 1 Մարտ 2015, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնական գրասենեակին մէջ տեղի ունեցաւ Երեւանի մասնաճիւղի վարչութեան սեմինարը՝

աստիճանաւորներու համար: Սեմինարին մասնակցեցան Երեւանի մասնաճիւղի 23 աստիճանաւորներ: Անոնք լսեցին Ա. կարգի գիտելիքներու մասին սկաուտական գիտելիքներ, ընդհանուր զարգացման եւ հոգեբանական նիւթերով դասախօսութիւններ:

Դասախօսներու շարքին էին Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեան, Երեւանի

քաղաքապետի օգնական Սամուէլ Մերթարճեան, «Աշխոյժ Երիտասարդ» քաղաքացիական նախաձեռնութեան փոխ նախագահ Մարինէ Եղոյեան, Մեծն Բրիտանիոյ Միացեալ Թագաւորութեան հոգեբանական գիտութիւններու դոկտ. Արմինէ Մանուկեան, եղբ. Հրաչ Շմաւոնեան եւ քոյր Լիլիթ Վարդանեան:





ՄԻԱՄԻՆ ԴԷՊԻ ԱՐՅԱԽ

Սումկայիթի 1988-ի եղեռնագործութեան անմեղ զոհերուն յիշատակը յարգելու համար, 27-28 Փետրուարին, Հայաստանէն Արցախ այցելեցին շուրջ հա-

զար հայորդիներ, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի յիսուն սկաուտներ:

Հիւրընկալ Արցախը ջերմօրէն ընդունեց ուխտաւորները, որոնք խորհրդանշական երթով եւ մոմավառութեամբ ոգեկոչեցին եղեռնագործութեան զոհերուն յիշատակը: Անոնք իրենց միասնականութեամբ փաստեցին, որ անկարելի է լռեցնել ու բնաջնջել հայ ժողովուրդի գոյութեան իրաւունքը:

Արցախ կատարուած երկօրեայ այցելութիւնը նպաստեց սկաուտներու հայրենասիրական ոգիի ամրապնդման ու զօրացման:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ՝

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ՓԱՌԱՀԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ


Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

նական հիւրերը: Խանդավառ մթնոլորտ մը կը տիրէր ամէնուրեք. բոլոր տարիքի սկաուտներու ներկայութիւնը բերկրանքով ու հպարտութեամբ կը լեցընէր բոլորին սրտերը: Մուտքին տեղադրուած էին Հայոց Յեղասպանու-

Ազգային ինքնութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի պատկանելիութեամբ հպարտանալու առիթ մը եղաւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած «Հայ սկաուտի օր»ը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 14 Մարտ 2015-ի երեկոյեան ժամը 7.30-ին, «Էմիլ Լահուտ» սրահին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի եւ խմբապետական կազմի կազմակերպութեամբ:

Սրահին մուտքին հպարտ եւ աշխոյժ կանգնած էր Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը, որ կը դիմաւորէր օրուան պաշտօ-





Թեան եւ ազգային պահանջատիրու-
թեան նուիրուած սկաուտական ձեռա-
յին աշխատանքներ, սկաուտական կա-
պերով պատրաստուած գործեր ու
պաստառներ:

Հանդիսութեան բացումը կատարեց
Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը՝ հնչեցնելով
Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները:

Բացման խօսքով հանդէս եկաւ քոյր
Ալին Լիպարեան-Քէչէպաշեան, որ հրա-
ւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտըն-
կայս լուծեամբ յարգելու Մեծ Եղեռնի
զոհերուն յիշատակը: Ան ըսաւ, որ Հա-
յոց Յեղասպանութեան նուիրուած այս
հանդիսութիւնը կ'ենթադրէ հաւատա-

րիմ մնալ ազգին ու անձնուրաց կերպով
գործել անոր երազներու իրականաց-
ման ի խնդիր, միաժամանակ յարգել ու
մեր սրտին մէջ անթեղուած պահել Յե-
ղասպանութեան զոհերուն յիշատակը:
Ան յիշեց, թէ ինչպէ՛ս Շաւարշ Քրիսեա-
նի, Յովհաննէս Հինդլեանի եւ Գրիգոր
Յակոբեանի հիմնած սկաուտական
շարժումը դար մը ամբողջ ներշնչած է
իրերայաջորդ սերունդներ, որոնք մին-
չեւ այսօր հաւատարիմ կը մնան սկաու-
տական շարժումին եւ անքակտելի մէկ
մասնիկը կը հանդիսանան հայ ժողո-
վուրդին:

Քոյրը իր խօսքը եզրափակեց ըսելով,

որ Հ.Մ.Ը.Մ-ականը այն պահանջատէր
հայն է, որ իր խօսքով ու գործով պիտի
շարունակէ մեր դատն ու իրաւունքնե-
րը յիշել, յիշեցնել եւ պահանջել:

Ապա հրաւիրուեցաւ Լիբանանի ըս-
կաուտական Ֆետերասիոնի նախագահ,
խմբապետ Ժոզէֆ Խալիլ: Ան իր խօսքին
մէջ նախ անդրադարձաւ, թէ ինչպէ՛ս
100 տարի առաջ Պէյրութի Փաուրլի հիմնեց
սկաուտական շարժումը, որ շուտով
տարածուեցաւ աշխարհով մէկ եւ դար-
ձաւ դաստիարակչական, կրթական այն
դպրոցը, որուն նպատակը եղաւ դաստի-
արակել հայրենիքն ու հայրենի տունը
պահող ու սիրող սերունդներ:

Ան յայտնեց, որ հանդիսութիւնը ու-
նի երկու առիթ. մէկը Հայոց Յեղասպա-
նութեան 100-ամեակի ոգեկոչումն է,
իսկ միւսը՝ «Հայ սկաուտի օր»-ուան
նշումը: Ան յիշեց, թէ ինչպէ՛ս 100 տարի
առաջ հայութիւնը ենթարկուեցաւ ան-
մարդկային վայրագութիւններու, ար-
մատախիլ եղաւ իր պապենական հողե-
րէն եւ դարձաւ գաղթական: Ան ըսաւ,
որ ներկայիս պատմութիւնը ինքզինք կը
կրկնէ, որովհետեւ այսօր ալ կը հանդի-
պինք մարդկային իրաւունքներու
բռնաբարման, փոքրամասնութիւններ
կ'ենթարկուին հալածանքի ու եղեռնա-
գործութեան, եւ տարիներով իրենց
կերտած մշակոյթն ու քաղաքակրթու-
թիւնը կը բնաջնջուին:





«Հայ սկաուտի օր»ուան նշումին անդրադառնալով՝ Լիբանանի սկաուտական ֆեստերասիոնի նախագահը դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը Լիբանանի սկաուտական ֆեստերասիոնի լիիրաւ անդամ է, ունի իւրայատուկ ներկայութիւն եւ ազդու դերակատարութիւն: Ան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը լիբանանեան իրականութեան տիրական բաղադրիչներէն է, որ մեծ ներդրում ունի խաղաղասիրութեան, համերաշխութեան եւ եղբայրասիրութեան ոգիի տարածման մէջ:

Նախի նկատել տուաւ, որ չարն ու բարին միասնաբար գոյութիւն ունին

մեր առօրեային մէջ եւ ամէնուրեք: ԸՄԿաուտական դպրոցը բարին ցանելու կոչուած այն կառույցն է, որ կը սնուցանէ եղբայրական ոգին եւ կը կերտէ կարգապահ մարդը:

Ժողէֆ Նախի կոչ ուղղեց բոլորին, որպէսզի վերանորոգեն հաւատքը իրենց հայրենիքին, եղբայրութեան, սկաուտական սկզբունքներուն եւ նպատակներուն նկատմամբ, միասնաբար աշխատին ընդդէմ չարին՝ յանուն երիտասարդներու լուսաւոր ապագայի կերտման, որպէսզի անոնք ըլլան բարութեան թիթմորը այս աշխարհին մէջ:

Այնուհետեւ բեմը յանձնուեցաւ


Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի եօթը մասնաճիւղերու՝ Պէյրութի, Պուրճ Համուտի, Այնճարի, Անթիլիասի, Ժրէյտէի, Պաուլիէի եւ Ռաուտայի սկաուտներուն: Յատկանշական էր, որ բոլոր պատկերներուն զուգընթաց ցուցադրուեցան համապատասխան նկարներ եւ տեսանիւթեր:

Առաջին բաժինով սկաուտները կենդանի պատկերներով յաջողեցան ո՛չ միայն ներկայացնել Հայոց Յեղասպանութեան տեսարանները, այլեւ՝ ներկաները մղեցին վերապրելու Եղեռնի սահմուկեցուցիչ ցաւը, հայ ժողովուրդին կրած արհաւիրքները: Կենդանի

պատկերները տեղի կ'ունենային ամուսնի եւ պատմողներու կատարողութեամբ: Ողբի տեսարաններուն անմիջապէս յաջորդեցին մահուան դէմ յաղթանակի պատկերները, եւ այս անգամ սկաուտները ներկայացուցին այն իրականութիւնը, թէ՛ ինչպէ՛ս ցիրուցան եղած հայերը կեանքին կառչած աշխատեցան, ապրեցան ու ապրեցուցին հայ արհեստները, մշակոյթն ու արուեստը, երզն ու պարը: Ու երբ հնչեց «Եարիտուտա», սրահի բոլոր անկիւններէն շարքերով ներս մտան սկաուտները՝ շուրջպար բռնած: Ապա բուրգեր կազմելով սկաուտները ներկայացուցին հայ ժողովուրդի քրիստոնէութեան ու հաւատքի աղբիւրը՝ եկեղեցին, ու մեր ինքնութեան խորհրդանիշը՝ Արարատը:

Իսկոյն շեփորախումբի նուագը թրնդացուց սրահը, տողանցեցին սկաուտները, որոնք իրենց շարքերով բարձրացան բեմ՝ ներկայացնելով Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութիւնը: Յիշուեցաւ նաեւ «Նեմեսիս»ի գործողութիւնը, եւ այս մասին ցուցադրուեցաւ վաւերագրական տեսանիւթ: Ապա նկարներով ցուցադրուեցաւ հայերուն եւ Հ.Մ.Ը.Մ-ին ներկայութիւնը Լիբանանի մէջ:

Վերջին պատկերով շեփորախումբն ու սկաուտները կրկին տողանցելով իրենց տեղերը գրաւեցին բեմին վրայ: Կոչ ուղղուեցաւ ներկաներուն՝ ոտքի կանգնելու: Սկաուտները իրենց պատուով վրայ խոստացան պահանջել հայ ժողովուրդի իրաւունքները եւ հաւա-



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովը, համախորհուրդ Սփիւռքում գործող տարածաշրջանային յանձնախմբերի հետ՝

- արտայայտելով հայ ժողովրդի միասնական կամքը,

- յենուելով 1990 թուականի Օգոստոսի 23-ի՝ Հայաստանի անկախութեան մասին հռչակագրի եւ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան վրայ,

- վկայակոչելով ՄԱԿ-ի 1948 թուականի Դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագիրը, որի համաձայն «Մարդկութեան ընտանիքի բոլոր անդամներին յատուկ արժանապատւութեան եւ հաւասար ու անօտարելի իրաւունքների ճանաչումն աշխարհի ազատութեան, արդարութեան եւ խաղաղութեան հիմքն է»,

- ղեկավարուելով ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 1946 թուականի Դեկտեմբերի 11-ի 96 (1) բանաձեւի, 1948 թուականի Դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին» ՄԱԿ-ի ուխտի, 1968 թուականի Նոյեմբերի 26-ի «Պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների նկատմամբ վաղեմութեան ժամկետ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի ուխտի, ինչպէս նաեւ 1966 թուականի Դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների մասին» միջազգային դաշնագրի եւ մարդու իրաւունքների վերաբերեալ բոլոր այլ միջազգային ակտերի համապատասխան սկզբունքներով եւ դրոյթներով,

- հաշուի առնելով, որ «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին» ուխտը ընդունելիս ՄԱԿ-ը յատուկ կարելորել է այդ յանցատեսակի դէմ պայքարում միջազգային համագործակցութիւնը,

- շեշտելով ցեղասպանութեան յանցակազմում պարունակուող արարքների համար անպատիժ մնալու անթոյլատրելիութիւնն ու այդ յանցագործութեան վաղեմութեան ժամկետ չունենալու հանգամանքը,

- դատապարտելով 1894-1923 թուականներին Օսմանեան կայսրութեան եւ Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրուած ու հայ ժողովրդի դէմ շարունակաբար իրականացուած ցեղասպանա-

կան քայլերը, հայրենագրկումը, հայութեան ոչնչացմանն ուղղուած զանգուածային կոտորածները, ցեղային զտումները, հայկական ժառանգութեան ոչնչացումը, ինչպէս նաեւ ցեղասպանութեան ժխտումը, պատասխանատուութիւնից խուսափելու, կատարուած յանցագործութիւններն ու դրանց հետեւանքները լռութեան մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպէս յանցագործութեան շարունակութիւն եւ նոր ցեղասպանութիւններ իրականացնելու քաջալերանք,

- համարելով նաեւ 1919-1921 թուականներին օսմանեան ռազմական արտակարգ ատեանների կողմից «Իրաւական եւ մարդկային օրէնքների դէմ» այդ ծանր ոճրի ուղղութեամբ կայացուած դատավճիռները եղելութեան իրաւական գնահատական,

- արժեւորելով 1915 թուականին միջազգային հանրութեան կողմից Անտանտի պետութիւնների Մայիսի 24-ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դէմ իրականացուած ծանրագոյն յանցագործութիւնը պատմութեան մէջ առաջին անգամ որպէս «Մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ իրականացուած յանցագործութիւն» որակումը եւ օսմանեան իշխանութիւններին պատասխանատուութեան կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպէս նաեւ 1920 թուականի Օգոստոսի 10-ի Սելի հաշտութեան պայմանագրի եւ 1920 թուականի Նոյեմբերի 22-ի՝ Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահ Վուտրօ Ուիլսոնի Իրաւարար վճռի դերը եւ նշանակութիւնը Հայոց Ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հարցում.

1. Ոգեկոչում է Հայոց Ցեղասպանութեան մէկուկէս միլիոն անմեղ զոհերի յիշատակը եւ երախտագիտութեամբ խոնարհուում կեանքի ու մարդկային արժանապատուութեան համար պայքար մղած նահատակ եւ վերապրած հերոսների առջեւ:

2. Վերահաստատում է Հայաստանի եւ հայ ժողովրդի յանձնառութիւնը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանութիւնների կանխարգելման, ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդների իրաւունքների վերականգնման եւ պատմական արդարութեան հաստատման համար:

3. Շնորհակալութիւն է յայտնում այն պետութիւններին, միջազգային, կրօնական եւ հասարակական կազմակերպութիւններին, որոնք քաղաքական խիզախութիւն ունեցան ճանաչելու եւ դատապարտելու

Հայոց ցեղասպանութիւնը՝ որպէս մարդկութեան դէմ ուղղուած սոսկալի ոճրագործութիւն, եւ այսօր էլ շարունակում են այդ ուղղութեամբ իրաւական քայլեր ձեռնարկել, նաեւ կանխել ժխտողականութեան վրտանգաւոր դրսեւորումները:

4. Երախտագիտութիւն է յայտնում այն ազգերին, կառոյցներին եւ անհատներին, ովքեր յաճախ իրենց վտանգելով՝ մարդասիրական տարաբնոյթ օգնութիւն ցուցաբերեցին, փրկեցին լիակատար ոչնչացման վտանգի առջեւ կանգնած բազմաթիւ հայերի, ապահով եւ խաղաղ պայմաններ ստեղծեցին ցեղասպանութիւնից վերապրած հայութեան համար՝ մեծ թափ հաղորդելով որբախնամ գործունեութեանը եւ միջազգային հայասիրական շարժմանը:

5. Դիմում է ՄԱԿ-ի անդամ պետութիւններին, միջազգային կազմակերպութիւններին, բարի կամքի տէր բոլոր մարդկանց՝ անկախ ազգային եւ կրօնական պատկանելիութիւնից, միաւորել իրենց ջանքերը պատմական արդարութիւնը վերականգնելու եւ Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու համար:

6. Արտայայտում է Հայաստանի եւ հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց Ցեղասպանութեան փաստի համաշխարհային ճանաչման հասնելու եւ ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրաւական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային եւ համազգային իրաւունքների եւ օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

7. Դատապարտում է Թուրքիայի Հանրապետութեան կողմից Հայաստանի Հանրապետութեան ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերուող հակահայկական կեցուածքը եւ միջպետական յարաբերութիւնների կարգաւորման համար նախապայմանների առաջադրումը՝ դրանք գնահատելով որպէս Հայոց Ցեղասպանութեան, Մեծ Եղեռնի մինչ օրս անպատիժ մնալու հետեւանք:

8. Կոչ է անում Թուրքիայի Հանրապետութեանը՝ ճանաչել եւ դատապարտել Օսմանեան կայսրութեան կողմից իրականացուած Հայոց Ցեղասպանութիւնը եւ մարդկութեան դէմ իրագործուած այդ սոսկալի ոճրի զոհերի յիշատակը ոգեկոչելու միջոցով առերեսուել սեփական պատմութեան ու յիշողութեան հետ՝ հրաժարուելով կեղծարարութեան, անհերքելի իրողութեան ժխտման եւ յարաբերականացման քաղաքականութիւնից:

Զօրակցում է Թուրքիայի քաղաքացիական հասարակութեան այն հատուածին, որի ներկայացու-



ցիչներն այսօր արդէն համարձակութիւն են դրսեւորում այդ հարցում՝ ի հակադրութիւն իշխանութիւնների պաշտօնական դիրքորոշման:

9. Յոյս է յայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը եւ դատապարտումը կարելի է մեկնակէտ կը դառնան հայ եւ թուրք ժողովուրդների պատմական

հաշտեցման գործընթացի համար:

10. Հպարտութեամբ է արձանագրում, որ Ցեղասպանութիւնից վերապրած հայ ժողովուրդը վերջին հարիւրամեակի ընթացքում՝

- դրսեւորեց անկոտրում կամք ու ազգային ինքնագիտակցութիւն, վերականգնեց դարեր առաջ կորցրած ինքնիշխան պետականութիւնը,

- պահպանեց եւ զարգացրեց ազգային արժէքները, հասաւ ազգային մշակոյթի, գիտութեան եւ կրթութեան վերածննդի՝ ուրոյն ներդրում ունենալով համաշխարհային ժառանգութեան զարգացման գործում,

- ստեղծեց հայկական Սփիւռքի հոգեւոր եւ աշխարհիկ կառոյցների հզօր եւ արդիւնաւէտ ցանց, ինչը նպաստեց աշխարհասփիւռ հայ համայնքներում հայապահպանութեան, հայի՝ յարգանք եւ համակրանք վայելող կերպարի կերտմանը, հայ ժողովրդի արդար իրաւունքների պաշտպանութեանը,

- համազգային գործակցութեան եւ հայրենադարձութեան ընդարձակ ծրագրով համախմբեց եւ վերըստեղծեց ցեղասպանութեան հետեւանքով վերացման վտանգի առջեւ յայտնուած ազգային գենոֆոնդը,

- Առաջին եւ երկրորդ աշխարհամարտերում բերեց իր արժանի ներդրումը միջազգային անվտանգութեան եւ խաղաղութեան հաստատման գործում, փառաւոր յաղթանակներ տարաւ Սարդարապատի եւ Արցախեան հերոսամարտերում:

11. Դիտարկում է Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը որպէս կարելի հանգրուան պատմական արդարութեան համար մղուող պայքարը «Յիշում եմ եւ պահանջում» կարգախօսով շարունակելու գործընթացում:


12. Կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին՝ հայրենասէր, գիտակից եւ ուսեալ կեցուածքով պաշտպան կանգնել հայրենի սրբազան ժառանգութեանը, աննահանջ պայքարով ծառայել յանուն՝

- առաւել հզօր հայրենիքի՝ ազատ եւ ժողովրդավար Հայաստանի Հանրապետութեան,

- անկախ Արցախի առաջընթացի ու զօրացման,

- աշխարհասփիւռ հայութեան գործուն համախմբման,

- համայն հայութեան դարաւոր նուիրական նպատակների իրականացման:




տարիմ մնալ մեր ազգային արժեքներուն:

Հանդիսութեան աւարտին ներկաները դուրս եկան սրահէն՝ իրենց ձեռքին ծաղիկներ անոնց շրջապատեցին սկաուտներուն կողմէ պատրաստուած Ծիծեռնակաբերդի մանրակերտը: Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան իր հայրական պատգամը փոխանցեց եւ ըսաւ, որ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը լաւագոյն առիթն է հայ սկաուտութեան համար վերակազմակերպելու իր շարքերը, ազգային, հոգեւոր եւ բարոյական արժեք-

ներով վերընձիւղելու մեր կեանքը: Ան ըսաւ, որ անցեալի մեր փորձառութեան ապաւինելով պիտի հասնինք մեր նպատակներուն եւ պիտի իրականացնենք

մեր ժողովուրդին երազները: Առաջնորդը իր խօսքը եզրափակեց ըսելով. «Թո՛ղ օրհնեալ ըլլայ մեր նահատակներուն յիշատակը, Թո՛ղ Աստուած պահէ հայ ժողովուրդը, ամրացնէ Հայաստան աշխարհի անկախութիւնը»: Ապա ներկաները մօտեցան ու ծաղիկներ զետեղեցին անմար մանրակերտ Ծիծեռնակաբերդի կրակին շուրջ եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին:





**Թղթակից
ՊԷՅՐՈՒԹ**

Նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանի եւ հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Կիրակի, 15 Մարտ 2015-ի յետմիջօրէի ժամը 5.00-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուլթի մասնաճիւղի հիմնադրութեան 90-ամեակի տօնակատարութիւնը, էշրէֆիէի «Ժամհուր» վարժարանի սրահին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան

ներկայ եւ նախկին անդամներու, Պուրճ Համուտի եւ Պէյրուլթի քաղաքապետական խորհուրդներու անդամներու եւ բազմաթիւ հրաւիրեալներու:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերդներուն ունկնդրութենէն ետք, բացման խօսքը արտասանեց մասնաճիւղի խումբապետուհի քոյր Ռուպինա Խայեաթ: Ան բարի գալուստ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուլթի մասնաճիւղի 90 տարիներու ծառայութեան ու վաստակի արժեւորման հանդիսութեան ներկաներուն: «Ամբողջ 90 տարիներ Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուլթի մասնաճիւղը, իր շուրջ հաւաքած տարազաւորը, մարզիկը, պատաս-





ՃԱՆՉՆԱՆՔ

ԱՐԺԱՆԵԱՅ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԵՂԲ. ՅԱԿՈՒՔ ՀԱՄԱՄՃԵԱՆ

Եղբ. Յակոբ Համամձեան մանկութենէն մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն, իբրեւ գայլիկ, արի եւ երէց: Մասնաճիւղային թէ Շրջանային մակարդակով ան եղած է սկաուտական աշխատանքներու պատասխանատու խմբապետ եւ մասնաճիւղի թէ Շրջանային Սկաուտական Խորհուրդներու երկարամեայ անդամ:



Սկաուտական աշխատանքներու կողքին, եղբ. Յակոբ Համամձեան 1960-ական թուականներուն եղած է Հ.Մ.Ը.Մ.ի աթլէթի մարզիկ եւ մասնակցած է միջ-մասնաճիւղային խաղերու:

Սկաուտական դաստիարակութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանին հաւատարմութեամբ, ան նուիրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վերելքին: 1962-էն սկսեալ եւ երկար տարիներ եղբ. Համամձեան մաս կազմած է մասնաճիւղային եւ Շրջանային Վարչութեան զանազան յանձնախումբերու, մասնաճիւղի վարչութեան եւ ապա՝ Շրջանային Վարչութեան:

1986-ին ան հրաւիրուած է ներկայ գտնուելու Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

ՅԵՏ ՄԱՀՈՒ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ



● ԵՂԲ. ԱՐԱ ՊԱՊԻԿԵԱՆ

Եղբ. Արա Պապիկեան Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին մաս կազմած է 1950-ական թուականներէն սկսեալ: Ան մասնաճիւղի վարչութեան եւ յաճախ դիւանի անդամ եղած է 1952, 1957, 1959, 1960, 1963, 1964 եւ 1968 տարիներուն:

Եղբ. Պապիկեան բարոյապէս եւ նիւթապէս սատար հանդիսացած է մասնաճիւղի զանազան մարզախաղերու զարգացումին: Իր վարչական տարիներուն կ'իրագործուի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի ակումբի երկյարկանի շէնքին շինութիւնը, ինչպէս

նաեւ՝ պասքէթպոլի աղջկանց խումբին Լիբանանի ախոյեանութեան տիրացումը:

խանատուն թէ պարզ անդամն ու համակիրը՝ խօսքով ու գործով նախ դաստիարակեց իբրեւ մարդ ու տիպար քաղաքացի, ապա՝ իբրեւ մտային ու հոգեկան բարձր արժանիքի տէր հայ: Նաեւ՝ անոր մէջ սերմանեց ազգասիրութիւն ու հայրենասիրութիւն», ըսաւ ան:

Յոբելեար մասնաճիւղին խօսքը փոխանցեց վարչութեան ատենապետ եղբ. Վահան Համամձեան, որ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի անաղմուկ ու անշուք ստեղծման: Ապա, ան նշեց, որ «Հաւատարմ խումբ մը երիտասարդներ, հաւատարիմ իրենց ուխտին, Հ.Մ.Ը.Մ.ի



Պէյրութի մասնաճիւղը շուտով վերածեցին հայութեան էութիւնը կազմաւորող, հայ հոգին անեղծ պահող, ֆիզիքականի կողքին մտային ներշնչում ու զարգացում տուող, ազգային աւանդութիւններուն եւ արժէքներուն պահպանը հանդիսացող հնոցի»:

Եղբ. Համամձեան դիտել տուաւ, որ Պէյրութի մասնաճիւղը եղաւ ու կը շարունակէ ըլլալ մանուկ, պարման եւ երիտասարդ հայորդիին աճման ու զարգացման, մարդկային ու ազգային առողջ ու հարազատ նկարագիրի տէր հայուն ձուլարանը՝ պատրաստ ծառայելու ազգին ու հայրենիքին:

Խօսքը եզրափակելով, եղբ. Վահան Համամձեան կոչ ուղղեց հաւատարիմ մնալու միութեան հիմնադիրներուն երազին, տեսլականին, կտակին, հաւաքաբար եւ միասնաբար բարձրացնելով Հ.Մ.Ը.Մ.ի անունը:

Գեղարուեստական յայտագրով հանդէս եկան սկաուտներ Նանար Ղարիպեան (Թաւջուլթակ), Փաթիլ Գէորգեան (Կիթառ), Լոռի Պիլալեան (Ֆլութ) եւ Արի Վարդանեան (դաշնակ եւ կիթառ):

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արաբերէնով փոխանցեց եղբ. Նազարէթ Հապիպեան: Ան հաստատեց, որ թուրքը չկարողացաւ իրականացնել իր ոճրային երազը՝ հայոց դէմ իրագործած Յեղասպանութեամբ, որովհետեւ, հակառակ ամէն տեսակի դժուարութեան եւ արհաւիրքի, Յեղասպանութենէն մազապուրծ ճողոպրած եւ օտար ափերու վրայ կայք հաստատած հայ ժողովուրդի զաւակները կարողացան կառուցել եկեղեցիներ, դպրոցներ եւ ակումբներ: Ան աւելցուց.



«Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը հոգեւոր եւ մտային կրթութիւնն ու դաստիարակութիւնը միացուց մարզականին եւ սկաուտականին»:

Ապա ցուցադրուեցաւ Պէյրութի մասնաճիւղի 90-ամեայ երթը ներկայացնող վաւերագրական տեսերիզ մը, որ պատմական լուսանկարներու կողքին ընդգրկեց վաստակաւոր միութենականներու վկայութիւններ՝ Հ.Մ.-Ը.Մ.-ի Լիբանանի ընտանիքին թէ համահայկական կառույցին յաջողութիւններուն մէջ մասնաճիւղին ունեցած տարիներու ներդրումին մասին:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցան Հ.Մ.-Ը.Մ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Մունջօղլեան եւ Պէյրութի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Վահան Համամճեան՝ կատարելու համար «Ծառայութեան» շքանշանի տուչութիւն՝ քոյր Մակի Խաչերեանի, եղբայրներ Նուպար Խանամիրեանի, Վահէ Չամիչեանի եւ Արա Պապիկեանի (յետ մահու), որոնք հարուստ ծառայութիւն ունեցած են միութեան մարդակերտումի եւ հայկերտումի աշխատանքներուն մէջ (պարգեւատրեալներուն մասին տեսնել առանձին):

Այս առիթով, Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը միութեան «Արժանեաց» շքանշանով պարգեւատրեց մասնաճիւղի վաստակաւոր անդամներէն եղբ. Յակոբ Համամճեանը: Պարգեւատրումը կատարեց եւ իր շնորհաւորանքի խօսքը փոխանցեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

ՃԱՆՉՆԱՆՔ

ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐ



●ԵՂԲ. ՆՈՒՊԱՐ ԽԱՆԱՄԻՐԵԱՆ

Եղբ. Նուպար Խանամիրեան Հ.Մ.-Ը.Մ.-ի Պէյրութի մասնաճիւղին մաս կազմած է 1950-ական թուականներէն սկսեալ: Ան մասնաճիւղի վարչական կազմերուն մէջ գործօն ներկայութիւն եղած է 1952, 1954, 1959 եւ 1961 տարիներուն:

Եղբ. Խանամիրեան 1975-ին կ'ընտրուի Շրջանային Վարչութեան անդամ: Ան մաս կազմած է Պէյրութի մասնաճիւղի եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան զանազան յանձնախումբերուն:

●ՔՈՅՐ ՄԱԿԻ ԽԱՉԵՐԵԱՆ

Քոյր Մակի Խաչերեանին Հ.Մ.-Ը.Մ.-ի անդամակցութիւնը կը սկսի Հ.Մ.-Ը.Մ.-ի Հալէպի պասքեթպոլի աղջկանց խումբին անդամակցութեամբ: 1970-ական թուականներու սկիզբէն ան գործօն անդամ եղած է Պէյրութի մասնաճիւղի զանազան յանձնախումբերուն մէջ: Մասնաճիւղի վարչութեան դիւանի անդամ եղած է 1988, 1989, 1996, 1997 եւ 1998 տարիներուն: Հ.Մ.-Ը.Մ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան դիւանին մաս կազմած է 1991-1992 երկամեակին:



Քոյր Մակի մասնակցած է Շրջանային Ներկայացուցչական ժողովներու եւ վարած է դիւանի քարտուղարութիւնը: 2008 թուականին ան մաս կը կազմէ Շրջանային Սկաուտական Խորհուրդին: 2011-2012 տարեշրջանին անդամ եղած է Շրջանային կազմակերպական յանձնախումբին:



●ԵՂԲ. ՎԱՅԷ ՉԱՄԻՉԵԱՆ

Եղբ. Վահէ Չամիչեանի Հ.Մ.-Ը.Մ.-ական կեանքը կը սկսի սկաուտական շարքերու անդամակցութեամբ, 1960-1965: Ֆութպոլիստ, ապա 1977-1978 տարեշրջանին կրտսերներու «Մուրատ» խումբին մարզիչ: Եղբօր միութենական գործունէութիւնը կը յատկանշուի 1988 եւ 1989 տարեշրջաններուն մասնաճիւղի վարչութեան անդամակցութեամբ: Ան մաս կազմած է նաեւ Լիբանանի Շրջանային Վարչութեան զանազան կազմերու:

Աւարտին, իր պատգամը փոխանցեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան, որ շնորհաւորեց 90 տարի պատնէչի վրայ մնացած Հ.Մ.-Ը.Մ.-ի Պէյրութի մասնաճիւղը, որուն երզիքին տակ սերունդներ դաստիարակուեցան միութենական վեհ գաղա-

փարներով, առողջ միջավայրի մէջ, ազգային անշեղ սկզբունքներով:

Հանդիսութիւնը փակուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.-ի քայլերգին յոտնկայս երգեցողութեամբ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային Սկսողական Խորհուրդին կազմակերպութեամբ, Կիրակի, 25 Յունուար 2015-ին, Ճիւնիի ակումբին մէջ տեղի ունեցաւ Սկսողական Խորհուրդներու միօրեայ սեմինար մը, մասնակցութեամբ ՀՄԸՄ-ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Ժրտէյտէի, Ռաուտայի, Պաուշրիէի, Անթիլիասի եւ Այնճարի Սկսողական Խորհուրդներու անդամներու, վարչական կազմերու ներկայացուցիչներու, միաւորի եւ մասնաճիւղի խմբապետներու եւ շրջանային խմբապետներու:

Սեմինարին բացման խօսքը արտասանեց քոյր Ալին Լիպարեան-Քէչէպաշեան, որ նախ ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յօտնկայս լռութեամբ յարգելու յիշատակը Գիւմրիի սպանդին զոհ գացած Աւետիսեան ընտանիքի անդամներուն: Ապա ան յիշեցուց, որ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի սեմին գտնուելով մեծ ու ծանր աշխատանքներու դէմ յանդիման կը գտնուինք, ուստի պէտք է ձեռք-ձեռքի տալ, համագործակցիլ եւ միասնաբար արժանավայել կերպով իրականացնել նախատեսուած ծրագիրները:

Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ քոյր Թայլին Օրտոդլեան ներկայացուց առաջին նիւթը՝ «Ժողովական կեանք եւ արխիւային աշխատանքներ»՝ շեշտելով, որ Սկսողական Խորհուրդները իրենց կարեւոր դերը ունին ըսկսողական կեանքին մէջ, ուստի պէտք է լաւապէս գիտակցին իրենց պաշտօնին եւ լաւագոյնս կատարեն զայն:

Շրջանային ընդհանուր խմբապետ եղբ. Ժանօ Քէչէճեան սեմինարին մասնակիցները տեղեակ պահեց 2014-2015 տարեշրջանի ծրագիրներուն եւ տարւելիք աշխատանքներուն մասին՝ հաստատելով, որ Սկսողական Խորհուրդները պէտք է հետամուտ ըլլան անոնց հետապնդման:

Հոսկ, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վաչէ Նաճարեան խօսեցաւ Սկսողական Խորհուրդներու պարտականութեան, պարտաւորութեան, իրաւասութեան եւ փոխադարձ յարաբերութեան եւ գործակցութեան մասին:

Այնուհետեւ տեղի ունեցաւ միտքերու փոխանակում, քննարկում եւ զրոյց:

Յայտագիրը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:





ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿ ԵՒ ՄՈԿԼԻ ՃԻՒՂԵՐՈՒ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

Թղթակից
ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ

Կիրակի, 18 Յունուար 2015-ին, Համազգայինի Մեջլիսը և Հայկ Արսլանյանի ճեմարանի նորստանի մանկապարտեզին մեջ տեղի ունեցավ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային խմբապետական կազմի գալիկ-արծուիկ և մոկլի ճիւղերու գործնական սեմինարը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի, Պուրճ

Համուտի, Անթիլիասի, Ժրտէյտէի եւ Ռաուտայի մասնաճիւղներէն 32 պատասխանատու քոյր-եղբայրներու:

Սեմինարը կը նպատակադրէր Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի գալիկ վոհմակներու եւ արծուիկ երամներու պատասխանատու կազմերը եւ մոկլի վոհմակներու պատասխանատու կազմերը քով-քովի բերել միասնաբար պատրաստելու կիրակնօրեայ օրինակելի յայտագիրներ, տարբեր ձեւերով վերաորակաւորել պատասխանատուները, սորվեցնել ինչպէս հաճելի եւ հետաքրքրական ձեւերով գիտելիքներ փոխանցել, տարբեր մասնաճիւղերու կազմերու հետ աշխատիլ եւ պատասխանատու կազմերու միջեւ գաղափարներու փոխանակում կատարել:

Սեմինարը սկսաւ Շրջանային ընդհանուր խմբապետ եղբ. Ժանօ Քէչէճեանի բացման խօսքով եւ Շրջանային գալիկ-արծուիկ և մոկլի ճիւղերու խմբապետուհի քոյր Լենա Գրիգորեան-Ղուկասեանի սեմինարի յայտագրի փոխանցումով: Ապա, պատասխանատուները իրենց ճիւղի համաձայն վեցեակներու եւ հնգեակներու բաժնուելով ստացան հետեւեալ նիւթերը.-

- «Ժամանակի կազմակերպում», դասախօս՝ միջազգային խմբապետ Ուիսամ Զէյն:

- Գալիկ-արծուիկներու եւ մոկլիներու հոգեբանութիւնը, դասախօս՝ քոյր Նարօ Ալեքսանտրեան:

Նիւթերու ներկայացումէն ետք, գալիկ - արծուիկ պատասխանատուները Շրջանային խմբապետուհի քոյր Արտա Զէյթունլեանի հետ կատարեցին Մեծ Կանչ, իսկ մոկլիներու պատասխանատուները կատարեցին մոկլի վոհմակէ գալիկ վոհմակ - արծուիկ երամ փոխանցման արարողութիւն, Շրջանային խմբապետուհի քոյր Թամար Քէչիշեանի հետ:

Ճաշէն ետք տեղի ունեցաւ վեցեակային եւ հնգեակային աշխատանքներու պատրաստութիւն եւ ներկայացում: Աշխատանքները քննարկուեցան եւ արժեւորուեցան քոյրեր Ռուբինա Խայեթի, Իրմա Ճէրէճեանի, Թալին Պետրոսեանի եւ Փաթիլ Նսայեանի կողմէ:

Սեմինարը ընթացաւ հեզասահ, մասնակից քոյրերն ու եղբայրները խանդավառութեամբ եւ լրջութեամբ հետեւեցան աշխատանքներուն:



«ՄԱՍՆԱԾԻԲՂԻՍ ՀԵՏ, ՄԻՈՒԹԵԱՆՍ ՀԱՄԱՐ»

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի
Մասնաճիղի
Սկսուտական Խորհուրդ
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

Զիւնածածկ Լեւոնալիբանանի ցուրտ եղանակին, սակայն ջերմ ու խանդավառ մթնոլորտի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիղի Սկսուտական Խորհուրդը 10-11 Յունուար 2015-ին կազմակերպեց Խորհուրդ-խմբապետութիւն երկօրեայ սեմինար մը, որ տեղի ունեցաւ Պիքֆայայի «Նասս» պանդոկի սեմինարներու բաժինին մէջ, մասնակցութեամբ 28 քոյրերու եւ եղբայրներու, ներկայութեամբ մասնաճիղի վարչութեան սկսուտական ներկայացուցիչին: Սեմինարին նպատակն էր հանգամանօրէն քննել ու վերլուծել մասնաճիղին դիմագրաւած հարցերն ու դժուարութիւնները, համապատասխան լուծումներ որոնել, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջ. Սկսուտա-



կան Խորհուրդի եւ խմբապետութեան միամեայ ծրագիրին ու Պուրճ Համուտի մասնաճիղի վերջին ընդհանուր ժողովի որոշումներուն հիման վրայ մասնաճիղի սկսուտական շարքերուն միամեայ գործունէութեան ծրագիրը մշակել:

Սեմինարը սկիզբ առաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Ապա, ծանօթաց-

ման ժամանակակից խաղերով, նորանըջանակ Սկսուտ. Խորհուրդի անդամներն ու խմբապետութիւնը առիթը ունեցան զիրար աւելի ճանչնալու: Սեմինարին նպատակը իրականացնելու, քննարկումներուն ենթահող պատրաստելու եւ վերյիշեցումներ կատարելու համար, մասնակիցներուն ներկայացուցան հետեւեալ նիւթերը-

- Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտութեան նպատակը:
- Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի ներքին կանոնագրի համապատասխան յօդուածներ:
- Ղեկավարութեան էութիւն:
- Հանրային վարքագիծ:
- Ի՞նչպէս վարուիլ մանուկներու հետ:

Արդիական միջոցներով ներկայացուած բոլոր նիւթերուն յաջորդեց հարցումներու եւ զրոյցի բաժին:

Երկրորդ հանգրուանով մասնակիցները մերթ խմբակային, մերթ հաւաքական դրութեամբ հանգամանօրէն քննեցին ու վերլուծեցին մասնաճիղին դիմագրաւած հարցերն ու խնդիրները, դը-



րական ու բացասական կողմերը, ձեռք-բերումներն ու բացթողումները, համապատասխան լուծումներ առաջարկեցին, ինչպես նաև ապագայի հեռանկարներ ճշդեցին: Այս բոլորէն ետք, նկատի ունենալով նախաբանին մէջ նշուած ուղեցոյցն ու Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման եւ Հ.Մ.Ը.Մ-ի Պոլրճ Համուտի մասնաճիւղի հիմնադրութեան 80-ամեակի աշխատանքները, մասնակիցները մշակեցին մասնաճիւղի սկաուտական շարքերուն 2015 թուականի միամեայ ծրագիրը:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդին ու խմբապետութեան ճշգած միամեայ ծրագիր-

րին եւ վերոնշեալ 100 եւ 80 ամեակներուն հետ կապուած աշխատանքներուն կողքին, ծրագիրը կ'ընդգրկէ սկաուտական, կազմակերպչական ու դաստիարակչական բնոյթի ներքին աշխատանքներ, ծնողներու հետ գործակցութեան եղանակներ, հանրային ծառայութեան բաժիններ, ընկերային հաղորդակցութեան միջոցներու արդիւնաւէտ օգտագործման եւ արդիական ծրագիրներու մշակման պատկերացումներ, արտաքին ու հասութեաբեր ձեռնարկներ:

Սեմինարի աւարտին, մասնաճիւղին խմբապետութիւնը Սկաուտ Խորհուրդին կողմէ ստացաւ մասնակցութեան հաստատագիրներ:

Սկաուտական Խորհուրդը կը հաւատայ, որ մշակուած միամեայ ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ են անկոտրում կամք, միասնակամ ոգի, զոհողութիւն ու այս գործին առնչուած բոլոր կողմերուն միջեւ համագործակցութիւն:

Մասնաճիւղին հիմնադրութեան 80-ամեակի կարգախօսէն՝ «Մասնաճիւղիս հետ, միութեանս համար»էն առաջնորդուած, 2015-ին, Պոլրճ Համուտի մասնաճիւղի սկաուտական շարքերը արժանավայել ձեւով պիտի շարունակեն իրենց աշխատանքները:

Հ.Մ.Ը.Մ-Ի ՊՈԼՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՏԱՐԵԿԱՆ ՉԻԲՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

Թղթակից
ՊՈԼՐԾ ՀԱՄՈՒՏ

Աւելի քան 225 անդամներու եւ ծնողներու մասնակցութեամբ, Հ.Մ.Ը.Մ-ի Պոլրճ Համուտի մասնաճիւղի սկաուտական բոլոր խմբաւորումները ձիւնազնացութիւն մը կատարեցին դէպի Ֆաքրա, ուր ապրեցան ձիւնածածկ լեռնալիբանանի լանջերուն «ձիւն խաղալու» հաճոյքը: Խաղերու կողքին, հանրութեան քարոզչութիւն կատարելու համար, խումբերուն միջեւ կազմակերպուեցաւ ձիւնէ ձեռային աշխատանքի մրցում, իբրեւ թեմա ունենալով մասնաճիւղի հիմնադրութեան 80-ամեակը: Մրցումին առաջին հանդիսացան արենոյններու եւ արծուիկներու խումբերը:

Յայտագրի յաջորդ բաժինով, մասնակիցները Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան Զմմառու վանքը այցելեցին եւ ծանօթացան վանքի դարաւոր պատմու-



թեան, մատրան, թանգարանին ու հոն պահուած անգնահատելի գանձերուն, ինչպէս օրինակ՝ հայ առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք»ը, հանրածանօթ ծովանկարիչ Այվազովսկիի մէկ գծանկարը եւ այլն: Ապա, արիններն ու արենոյնները ծանօթացան վանքի շրջափակին մէջ կանգնեցուած Յակոբ Մեղապարտի յուշարձանին եւ ծանօթացան այս մեծ հայուն տարած աշխա-

տանքներուն հայ գիրի ու տպագրութեան մարզին մէջ:

Նոյն միջոցին, ծնողներուն եւ անդամներուն միջեւ տեղի ունեցան խմբային խաղեր: Գործադրուեցաւ նաև սկաուտական կանչերու յայտագիր մը:

Օրը վերջ գտաւ բարձր տրամադրութեամբ:



«Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՓՐԻԿԷԻ ԿԱՏԱՐԻՆ...»

Զգայացունց այս վերնագիրը երեւցաւ ընկերային հաղորդակցութեան միջոցներու մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական Պետիկ Գասպարեանի մէկ գրառումին իբրեւ վերնագիր: Լեռնագնաց Պետիկ Գասպարեան քանի մը տարի առաջ բարձրացած էր Արարատ լեռը: Այս անգամ ան նուաճեց Ափրիկէի բարձրագոյն գագաթը՝ Քլեմանտարոն, որուն 5895 մետր կատարին պարզեց Հ.Մ.Ը.Մ.ի անունը եւ ոչ՝ դրօշը...

Իսկ թէ ինչո՞ւ ոչ դրօշը, եղբօր դիմատետրի գրառումին մէջ կը կարդանք հետեւեալը.-

«Անցնող տարիներուն, երբ լեռներ մագլցելու սկսայ, նպատակս էր Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը կոթողել աշխարհի բարձ-

ր ա գ ո յ ն կէտերուն վրայ, հոն ուր կրնայի հասնիլ:

«Այս անգամ, սակայն, օդակայանին մէջ կորսնցուցի մագլցելու պայուսակս, որուն մէջ կար նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը:

«Բայց... ո՛չ մէկ արգելք կրնար զիս ետ մղել երազս իրականացնելու եւ միութեանս անունը Ափրիկէի բարձրագոյն կէտին՝ Քլեմանտարոյի կատարին պարզելու վճռակամութենէս:

«Քանի այդ վճռակամութիւնը ունէի, ես գտա՛յ միջոցը... եւ յառաջիկային ալ պիտի գտնեմ միջոցները, այնքան ատեն որ երթս իր աւարտին չէ հասած դեռ...

«Բարձրացի՛ր-բարձրացուր»:



Արմէն Պալեոգեան եւ Վարդան Քարկոցեան ԹՈՐՈՆԹՕ

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանը առիթը ունեցաւ մասնակցելու Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի 10-րդ Շրջանային Բանակումին: Այս առիթը ստեղծուեցաւ շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան հրաւերին: Գանատայի շրջանը մասնակցեցաւ երեք եղբայրներով եւ երկու քոյրերով, որոնք մաս կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի խմբապետական կազմին: Բանակումը տեղի ունեցաւ Պարիլոչէ քաղաքին մէջ, որ կը գտնուի Արժանթին, 5-14 Յունուար 2015: Բանակումին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի, Գորտոպայի եւ Մոնթէվիտոյի մասնաճիւղերը եւ Գանատայի շրջանը, ընդհանուրը՝ 182 սկաուտներ:

Իբրեւ Գանատայի շրջանի սկաուտներ, մենք արդէն եղբայրական եւ միութենական լաւ կապեր ունէինք Հարաւային Ամերիկայի Հ.Մ.Ը.Մ.ական մեր քոյր-եղբայրներուն հետ: Այս յարաբերութիւնը ստեղծուեցաւ, երբ Պուէնոս Այրէսի եւ Գորտոպայի մասնաճիւղերէն քոյրեր ու եղբայրներ մասնակցեցան խմբապետներու վերաորակաւորման եւ Վկայեալ Կարգի միացեալ դասընթացքի բանակումին, որ 2013-ին տեղի ունեցաւ Գանատայի մէջ, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

Մեր մասնակցութիւնը ունէր զանազան նպատակներ.- ըմբռնել ու սորվիլ սկաուտական զանազան գիտելիքներ, ձեւեր եւ անոնց փոխանցման միջոցներ: Փոխանցել մեր սկաուտական գիտելիքները: Քաջալերել հայ լեզուի գործածութիւնը: Մենք պատրաստ էինք գործելու մեր նպատակներուն իրականացման համար: Հետեւաբար, մեզի խումբերու պատասխանատուներու օգնականներ նշանակեցին, այն տարիքի խումբերուն, որոնց պատասխանատուներն ենք Գանատայի մէջ: Խումբերու յայտագիրներուն ուղղակի մասնակցութիւն բերելով, խաղերով, դասախօսու-



ԵՂԲ. ՎԱԶԷ ՆԱԾԱՐԵԱՆ ԿԸ ՎԵՐԸՆՏՐՈՒԻ ԼԻՐԱՆԱՆԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԱՆԴԱՄ

30 Յունուար 2015-ին տեղի ունեցաւ Լիբանանի սկաուտական Ոոր ֆետերասիոնի ընտրութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նաճարեան երկու տարուան համար վերընտրուեցաւ սկաուտական ֆետերասիոնի անդամ՝ ստանձնելով հաշուապահի պաշտօնը:

«ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՀԱՐՑՆ Է, ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԻՋՈՑՆ Է»

(Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ 10-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ)

Թիւններով եւ դաշտային գործունէութեամբ կարողացանք նորութիւններով ճոխացնել բանակողներու փորձառութիւնները:

Հայ լեզուի գործածութիւնը առաջնահերթ կարեւորութիւն ստացաւ կարծես մեր ներկայութեամբ, որովհետեւ մենք հայերէն լեզուով կրնայինք հաղորդակցիլ իրենց հետ: Հարաւային Ամերիկայի քոյր-եղբայրները այս առիթէն օգտուելով ճիգ չխնայեցին որ բանակավայրէն ներս հայերէնը լսուի:

Մեր ուղղակի մասնակցութիւնը առիթ ստեղծեց, որ մենք ալ սորվինք եւ մեր կարգին սորվեցնենք: Սորվելու եւ փորձառութիւններու փոխանցման փոխադարձ առիթ մը ստեղծուեցաւ:

Բանակումին նշանաբանն էր՝ «Արդարութիւնը մեր հարցն է, սկստութիւնը մեր միջոցն է»: Նշանաբանը կեդրոնացած էր Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին շուրջ: Նշանաբանը կը փոխանցէր այն միտքը եւ յանձնառութիւնը, թէ սկստութեան միջոցով մենք կը պայքարինք հայօրէն ապրելու, օրէ օր աւելի հայանալու եւ մեր կարո-

ղականութեամբ ու կամքով հայոց արդար իրաւունքներուն ի խնդիր պայքարելու համար:

Յունուար 12-ին, բանակումին ամբողջ կազմը ուղղուեցաւ Պարիլոչէ քաղաքին հրապարակը եւ կատարեց ձեռնարկ մը՝ նուիրուած Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին: Հ.Մ.Ը.Մ.ը սկստութեան միջոցով այդ օր կարողացաւ Յեղասպանութեան յիշատակը յարգել եւ Հայ Դատի իմաստն ու կարեւորութիւնը փոխանցել տեղացի ժողովուրդին:

Մեր ճամբորդութիւնը դէպի Հարաւային Ամերիկա առիթ մը եղաւ մեզի ծանօթանալու եւ սորվելու շրջանի երկիրներու մասին, մանաւանդ մեզի հետաքրքրող հայկական գաղութներու մասին: Առաջին հայր Արժանթին հաստատուած է 1904 թուականին: Արդէն իսկ դար մը անցած է շրջանին մէջ հայկական ներկայութենէն: Ժամանակը եւ տարիները աւելի զօրացուցած են հայկական գաղութները, որոնք հայօրէն պայքարելով տոկացած են այս օտար ափերուն վրայ, ստեղծելով զօրաւոր իւրայատուկ ինքնութիւն եւ ուժ, որուն մէկ մասնիկն է Հ.Մ.Ը.Մ.ը:

Հ.Մ.Ը.Մ.ականները քոյրեր եւ եղբայրներ են: Այդպէս կը կանչեն զիրար: Հ.Մ.Ը.Մ.ին նպատակը եւ գործունէութիւնը մեզի կուտան



զիտելիքներ, փորձառութիւններ եւ յիշատակներ: Հ.Մ.Ը.Մ.ականները մէկ ընտանիք եղած են, բառին ամբողջական իմաստով, դարձած ենք քոյրերու եղբայրներ:

Մեր նպատակին հասանք, մենք եւ Հարաւային Ամերիկայի մեր քոյր-եղբայրները զգացինք մեր մասնակցութեան կարեւորութիւնը եւ ազդեցութիւնը, եւ բոլորս ալ իրարմէ սորվելով զօրացանք: Զօրացաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը:

Մեր մասնակցութիւնը այս անմոռանալի բանակումին կ'արտայայտէ մեր միութեան ուժը: Շրջաններու շփումը իրարու հետ, ձեռնարկներու, մարզախաղերու եւ բանակումներու միջոցներով իրարու կը մօտեցնէ եւ կը զօրացնէ շրջաններն ու Հ.Մ.Ը.Մ.ը: Անդամներուն մտերմիկ յարաբերութիւնները կը շարունակուին եւ կը զարգանան շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիրներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական երթը կը շարունակուի: Յառա՛ջ, դէպի յաղթանակ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԲՍՏՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԻ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 46-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Յովհաննէս Մարտոյեան
ՍԻՏՆԻ

Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ շրջանի միջ-մասնաճիւղային Նաւասարդեան 46-րդ մարզախաղերը մեծ յաջողութեամբ կատարուեցան 25-28 Դեկտեմբեր 2014-ին, Սիտնիի մէջ:

Տարբեր տարիքի աւելի քան 3500 հայորդիներ դաշտէ դաշտ շրջեցան խանդավառ կանչերով, քաջալերեցին Հ.Մ.Ը.Մ.ի պատրաստած սերունդը, որ այսօր, կէս դարէ ի վեր, Խաղաղականի հայակուլ ափերուն, մարզական եւ սկստական հայաշունչ գործունէութեամբ նախորդներուն գոյապայքարի ջանք բոցավառ կը պահէ:

Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Շրջանային մարզական յանձնախումբին կազմակերպութեամբ, մարզախաղերը ընդգրկեցին պասքեթպոլի, սրահի ֆուլթպոլի, մեծ դաշտի ֆուլթպոլի եւ փինկ-փոնկի 96 երկսեռ մրցումներ, որոնց Հ.Մ.Ը.Մ.ական «համն ու հոտ»ը տուին «Անդրանիկ», «Արաքս», «Արարատ» եւ «Նաւասարդ» մասնաճիւղերու շուրջ 400 երկսեռ մարզիկներ, մարզիչներ, պատաս-

խանատուներ, սկստական խումբեր եւ «Մէնթ Ճոնզ» շտապ օգնութեան անդամներ, որոնք մնայուն ներկայութիւն եղան մրցումներու ընթացքին:

Չորս օրերու վրայ երկարող մարզական ու ընկերային յայտագիրը մեր անման տղաքն ու աղջիկները բարձր մակարդակով իրենց լրումին հասցուցին Հ.Մ.Ը.Մ.ականի գիտակցութեամբ ու համագործակցութեամբ:

Նաւասարդեան 46-րդ մարզախաղերուն ազդանշանը տրուեցաւ Հինգչաբ-

թի, 25 Դեկտեմբեր 2014-ի յետմիջօրէի ժամը 2.30-ին, «Ռուֆթոփ պասքեթպոլ սէնթըր»ի չորս դաշտերուն վրայ կատարուած պասքեթպոլի եւ սրահի ֆուլթպոլի երկսեռ մրցումներով, որոնք շարունակուեցան Ուրբաթ, 26 Դեկտեմբերին, «YMCA նորթ ռայտ» մարզահամալիրին մէջ: Միաժամանակ տեղի ունեցան փինկ-փոնկի խաղերու զտումներն ու աւարտականները: Կէսօրէ ետք, նոյն վայրին մէջ տեղի ունեցաւ երէց տղոց ֆուլթպոլի մրցումը: Չափազանց





հետաքրքրական ու բարձրորակ մրցումը «Արարատ» եւ «Նաւասարդ» խումբերուն միջեւ վերջ գտաւ ի նպաստ «Նաւասարդ»ին՝ 3-1 արդիւնքով: Ախոյեանը արժանացաւ «Թորոս Գարամեանի շրջուն բաժակ»ին:

ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Նաւասարդեան 46-րդ մարզախաղերուն բացման պաշտօնական հանդիսութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը: «YMCA նորթ ռայտ»ի հսկայ մարզադաշտը ողողուած էր Հ.Մ.Ը.Մ.ականներով եւ մարզասէր հասարակութեամբ: Որոշեալ ժամուն ժամանեց թեմի Առաջնորդ Հայկազուն Եպս. Նաճարեան, ընկե-

րակցութեամբ թեմական խորհուրդի ատենապետ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեանի եւ Աւետիս Քհնյ. Համբարձումեանի: Յարգարժան հիւրերը դիմաւորեցին Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Իվանեան եւ մասնաճիւղերու ատենապետներ:

Բարի գալուստի խօսքով ելոյթ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենադպիր եղբ. Րաֆֆի Պոչնագեան: Եղբայրը ողջունեց հրաւիրեալները՝ Առաջնորդ Սրբազանը, Քահանայ Հայրը, Հ.Յ.Դ. «Դրօ» կոմիտէի անդամ Հերոս Գրիգորեանը, Հայ Առաքելական եկեղեցոյ թեմական խորհուր-

դի ատենապետ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեանը, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Իվանեանը, մասնաճիւղերու ատենապետներն ու վարչական ներկայացուցիչները, «Արմենիա» մամլոյ եւ տեղեկատուական ընկերակցութեան անձնակազմը:

Եղբայր Պոչնագեան յետադարձ ակնարկով մը արժեւորեց ցարդ կազմակերպուած Նաւասարդեան հանդիպումներուն երիտասարդական խանդավառ մթնոլորտը, ապա փոխան բացման խօսքի ընթերցեց «Մարզիկ»ի Բ. տարուան թիւ 23-ի «Միւս Դպրոցը» խմբագրականը, որ կը նշէր թէ՛ «Հ.Մ.Ը.Մ. սորվեցուց կարգապահութիւն, բնութեան սէր, նկարագրի մաքրութիւն, սորվեցուց մարդ ու հայ մնալու արո՛ւ կեցւածք, Հ.Մ.Ը.Մ. այս միւս դպրոցը»:

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Վիգէն Քորթեան: Ան մեծապէս գնահատեց Նաւասարդեան 46-րդ մարզախաղերու աշխատանքները, յատկապէս բազմամարդ ներկայութիւնը: Ան ամփոփ ձեւով անդրադարձաւ կեդրոնական Վարչութեան աշխատանքներուն մասին, յատկապէս միութեան ռազմավարական ծրագրին եւ 2015-ին Երեւանի մէջ տեղի ունենալիք համահայկական մարզախաղերուն Հ.Մ.Ը.Մ.ի մասնակցութեան եւ Հայկական Յեղասպանութեան





100-ամեակի ոգեկոչումներուն Հ.Մ.-Ը.Մ-ի վերապահուած աշխատանքներուն:

Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Իվանեան: Ան բարձր գնահատեց մարզական յանձնախումբին եւ մասնաճիւղերու վարչութիւններուն համագործակցութիւնը Նաւասարդեան մարզախաղերուն ու անոր հետ կապուած տքնաջան պարտաւորութիւնները՝ միասնաբար դասաւորելու եւ յաջողութեամբ պսակելու ճիգերը: Եղբայր Իվանեան Շրջանային Վարչութեան անունով խորին շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց այս առիթով յառաջացած բոլոր յանձնախումբերուն: Եղբայր Իվանեան Նաւասարդեան 46-րդ մարզախաղերը բացուած յայտարարեց:

ՏՈՂԱՆՑՔԸ

Խօսքերէն ետք սկսաւ խումբերու ըսպասուած տողանցքը: Աւստրալիոյ, Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ մասնաճիւղերու դրօշակները բարձր բռնած, թմբկահարները ազգային եղանակներու կշռոյթով առաջնորդեցին չորս մասնաճիւղերու մարզական եւ սկաուտական խումբերը, որոնք իրենց տեղերը գրաւեցին մարզադաշտին կեդրոնը: Հնչեցին Աւստրալիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները: Եղբայր Անդանիկ Բանոյեանի մասնակցութեամբ, իւրաքանչիւր մասնաճիւղէ մարզիկ մը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկի երգումը: Ապա, եղբայր Պոչնագեան հրաւիրեց Սրբազան Հայրը փոխանցելու իր պատգամը:

Առաջնորդ Սրբազանը ի տես սրահը ամբողջութեամբ լեցնող նոր սերունդին ըսաւ. «Սիրելի՛ տղաք եւ աղջիկներ, ուրախութեամբ եւ յուզումի թաց աչքերով կ'ողջունեմ ձեզ: Ինձի համար բացառիկ առիթ ու հպարտանքի պահ է ձեզի հետ ըլլալ Հ.Մ.Ը.Մ-ի միջ-մասնաճիւղային Նաւասարդեան 46-րդ մարզախաղերուն: Բնական ու անխուսափելի իրողութիւն է, որ մրցումներու ընթացքին պիտի ըլլան յաղթողներ եւ անբախտներ, սակայն նկատի ունեցէք, որ վերջնական յաղթողը պիտի ըլլայ ձեզի ծնող հայ ժողովուրդը, ապա այս յաղ-

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 46-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՊԱՍՔԵԹՊՈԼ

8 տարեկան եւ վար տղաք

- «Անդրանիկ» 11
- «Արարատ» 9

10 տարեկան եւ վար

- «Անդրանիկ» 12
- «Արարատ» 4

12 տարեկան եւ վար

- «Արաքս» 26
- «Անդրանիկ» 17

14 տարեկան եւ վար երկսեռ

- «Արաքս» 24
- «Նաւասարդ» 23

14 տարեկան եւ վար աղջիկներ

- «Անդրանիկ» 39
- «Արարատ» 20

14 տարեկան եւ վար տղաք

- «Անդրանիկ» 46
- «Արարատ» 18

16 տարեկան եւ վար աղջիկներ

- «Անդրանիկ» 34
- «Արարատ» 18

16 տարեկան եւ վար տղաք

- «Անդրանիկ» 61
- «Արարատ» 30

18 տարեկան եւ վար տղաք

- «Անդրանիկ» 34
- «Արարատ» 16

20 տարեկան եւ վար աղջիկներ

- «Անդրանիկ» 15
- «Արաքս» 10

Երէց տղաք Բ. կարգ

- «Նաւասարդ» 57
- «Արարատ» 54

Երէց աղջիկներ Ա. կարգ

- «Անդրանիկ» 31
- «Արաքս» 28

Երէց տղաք Ա. կարգ

- «Արարատ» 49
- «Արաքս» 37

ՍՐԱՅԻ ՖՈՒԹՊՈԼ

6 տարեկան եւ վար

- «Արարատ» 11
- «Անդրանիկ» 3

7 տարեկան եւ վար

- «Արարատ» 3
- «Անդրանիկ» 2

9 տարեկան եւ վար

- «Արարատ» 5
- «Անդրանիկ» 1

14 տարեկան եւ վար

- «Նաւասարդ» 4
- «Անդրանիկ» 2

Երէց աղջիկներ

- «Նաւասարդ» 8
- «Անդրանիկ» 1

Երէց տղաք

- «Արարատ» (Ա) 9
- «Անդրանիկ» (Բ) 4

ՖՈՒԹՊՈԼ

- «Նաւասարդ» 3
- «Արարատ» 1

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

- «Արարատ»
- «Արարատ»



Թանակին ձեզ առաջնորդող Հ.Մ.Ը.Մ-ը: Սրտանց կ'աղօթեմ, որ Աստուած պահէ ու պահպանէ բոլորդ եւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան վարչական կազմերը»:

Իր խօսքին աւարտին, Սրբազան Հայրը ըսաւ. «Կը գտնուինք Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին, ազգովին պահանջատէր ենք մեր անմահ նահատակներու արդար դատին: Բոլորս, անխտիր, դեր մը ունինք ստանձնելիք: Մաղթանքս է, որ միահամուռ ճիգերով հասնինք մեր ազգային նպատակներուն: Կը շնորհաւորեմ ձեզ եւ կը մաղթեմ որ Նաւասարդեան յառաջիկայ հանդիպումները եւս կը պսակուին յաջողութեամբ»:

Նաւասարդեան 46-րդ մարզախաղերը շարունակուեցան երիտասարդական խանդավառութեան ու ազգային ոգեւորութեան մթնոլորտի մէջ: Մարզախաղերուն եզրափակիչ երէց տղոց պասքեթպոլի աւարտականը՝ «Արարատ» եւ «Արաքս» խումբերուն միջեւ եղաւ շատ տաք ու հետաքրքրական, եւ վերջ գտաւ 49-37 արդիւնքով՝ ի նպաստ «Արարատ»ի:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՐԵԿՈՆԵՐԸ

Նախորդ տարիներու նման, Նաւասարդեան մարզախաղերը «համեմուռ էին» ընկերային շարք մը ձեռնարկներով: 26 Դեկտեմբերի երեկոյեան, «Պլէք Պըրտ» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ

18 տարեկանէն վեր երիտասարդներու ուրախ երեկոն: 27 Դեկտեմբերին, Հայ Մշակութային Կեդրոնին մէջ կատարուեցաւ 13-18 տարեկաններու յատուկ խրախճանքը: Յաղթանակի պարահանդէսը եզրափակեց Նաւասարդեան մարզախաղերու յայտագիրը:

Պարահանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 28 Դեկտեմբերին, «Տը Ռընեսանս» պարասրահին մէջ: Այս առիթով իր արտասանած խօսքին մէջ, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Իվանեան բարձր գնահատեց եւ երախտագիտական շնորհակալութիւն յայտնեց Նաւասարդեան 46-րդ մարզախաղերուն օժանդակող քոյրերուն ու եղբայրներուն, յատկապէս այս առիթով յառաջացած յանձնախումբերուն եւ մասնաճիւղերու վարչութիւններուն: Եղբայր Իվանեան իր խօսքը եզրափակեց նշելով, որ Նաւասարդեան 46-րդ մարզախաղերուն Հ.Մ.Ը.Մ-ական ոգիով տիպար մասնաճիւղը կը հանդիսանայ «Արաքս» մասնաճիւղը:

Խօսքին յաջորդեց երգն ու պարը: Աւելի քան 600 ներկաները յիշատակելի պահեր անցուցին Բաֆֆի Ատուրեանի ու Լիլիանի երգերով եւ «Պլէք Պըրտ» նուագախումբին եղանակներով:





ՔԱՀԱՄ-Ի ԵԶՐԱՓԱԿՈՒՄՆ ՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ի 40-ՐԴ ՆԱԽԱՍԱՐԳԻԵԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԲԱՑՈՒՄԸ

Մարո Քեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Կիրակի, 15 Մարտ 2015-ի յետմիջօրէին, փակման յատուկ արարողութեամբ մը իրենց աւարտին հասան Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղերը (ՔԱՀԱՄը): Նոյն հանդիսութեամբ պաշտօնական բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 40-րդ մարզախաղերուն:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ կէսօրէ ետք ժամը 4:30-ին, «Պրըմիէնկհամ Հայ Աքոլ»ի ֆուլթայոլի մարզադաշտին վրայ, բազմահարիւր ծնողներու մասնակցութեամբ: Մարզադաշտ ներկայացած էին նաեւ Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ներկայացուցիչ Վազգէն Քհնյ. Աթմաճեան, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 39-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Պետիկ Ֆերմանեան, Նաւասարդեան նորագոյն՝ 40-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Վարանդ եւ Հոլրի Մելքոնեաններ, շրջանի ֆուլթայոլի «Կալաքսի» նշանաւոր խումբի հայազգի աստղ Լի Նշանեան եւ պատասխանատու Անտրու, ինչպէս նաեւ անցեալի պատուոյ նախագահներ եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ՔԱՀԱՄ-ի մասնակից վարժարաններու տնօրէններ, ուսուցիչներ, ծնողներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Հանդիսութեան խօսնակներն էին քոյր Նորա Չափարեան եւ եղբ. Նարեկ Մեծաչեան: Անոնք ներկաները հրաւի-



րեցին վայրկեան մը յոտնկայս լռութեամբ յարգելու յիշատակը Հայոց Յեղասպանութեան զոհ գացած մէկ ու կէս միլիոն անմեղ զոհերուն: Ապա, բարի գալուստի խօսքերէ ետք, անոնք ներկայացուցին օրուան պաշտօնական հիւրերը եւ հակիրճ պատմականը կատարեցին շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին:

Հանդիսութեան դրօշակի արարողութիւնը կատարեցին Հ.Մ.Ը.Մ.ի Պրըպէնքի «Սիփան» եւ Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղերու արիարենոյճները, գլխաւորութեամբ «Սիփան» մասնաճիւղի խմբապետուհի քոյր Դալար Գալստեանի: Անոնք Շրջանային Վարչութեան նորակազմ շեփորախումբի թմբուկներու հարուածներուն կը ռոյթով հաստատակամութեամբ քալեցին, բարեկեցին ներկաները եւ դրօշակները տեղադրեցին բեմին վրայ: Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները մեներգեց «Արարատ»

մասնաճիւղի արենոյճ խմբապետուհիներէն քոյր Իվանա Գրիգորեան:

ԽՕՍՔԵՐԸ

Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի օրհնութիւնները փոխանցեց Կլէնտէյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւներէն Վազգէն Քհնյ. Աթմաճեան, որ հպարտանքով ընդգծեց. «Այսօր մեր աշակերտութիւնը երկրորդ եւ երրորդ կարգի բաժակներ չունի: Այսօր մեր աշակերտութիւնը, մեր մարզիկները բոլորն ալ առաջին կարգի են, որովհետեւ 100 տարի առաջ, ցեղասպանութեան չկարողացաւ իրագործել իր նպատակները: Վկայ՝ մեր աշակերտութիւնը այսօր, վկայ՝ մեր Հ.Մ.Ը.Մ.ը, թէ մենք կանգուն կը մնանք այսօր որպէս հայորդիներ»: Ապա, Տէրունական աղօթքը կատարելէ ետք, ան շնորհաւորեց եւ յաջողութիւն մաղթեց հայ աշակերտութեան ու Հ.Մ.Ը.Մ.ին:

Ռոզ Եւ Ալէք Փիլիպոս Ազգ. վարժարանի 6-րդ եւ 8-րդ դասարաններու աշակերտութիւնը մարզադաշտին վրայ գեղեցկօրէն կազմեց Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի խորհրդանիշ՝ Անմուռուկ ծաղիկը, միաժամանակ բացատրելով անոր իւրաքանչիւր թերթիկին իմաստը: Վճռակամութեամբ յիշեցրնելով «Կը յիշեմ եւ կը պահանջեմ» կարգախօսը՝ անոնք արտասանեցին Վահան Թէքէեանի «Պիտի իյնաս այս անգամ» բանաստեղծութիւնը:

ՔԱՀԱՄ-ի մասնակից վարժարաններու տնօրէններուն անունով պատգամ մը փոխանցեց Ազգային Շամլեան վարժարանի տնօրէնուհի դոկտ. Թալին Քարկոտորեան: Ան նշեց հայ ժողովուրդը բնաջնջելու թուրքին ձախողութիւնը եւ ըսաւ. «Դար մը առաջ թրքական մեծատիրութիւնը ուխտեց արմատախիլ ընել հայոց ազգը, բնաջնջել զայն: Իսկ այժմ՝ 100 տարի անց, հոս կանգնած ենք յաղթական: Միակամ կը տօնենք մեր լուսամիտ, տաղանդաւոր եւ խոստմնալից պատանիներու եւ պարմանուհիներու պայծառ յաջողութիւնները: Մենք ներկայ ենք, մեծցող թիւերով ներկայ ենք ու հզօր քայլերով պիտի յառաջանանք»:

Ապա, դոկտ. Քարկոտորեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ին ՔԱՀԱՄ-ի բացառիկ եւ ազգօգուտ առիթը ստեղծելուն համար, ապա շնորհաւորեց մարզիկ աշակերտները՝ իրենց յաղթա-

նակներուն համար: Իր խօսքին մէջ ան գնահատեց ծնողներու զոհողութիւնը՝ իրենց զաւակները հայկական վարժարան ուղարկելու համար: «Այս հազար աշակերտները մեր ապագան են: Կը հաւատանք այս հաստատումին եւ անոր համար զանոնք նախանձախնդրութեամբ կը պատրաստենք, որպէս նոր առաջնորդներ, ղեկավարներ, կազմակերպիչներ, ազգային գործիչներ, ներկայացուցիչներ», շեշտեց ան:

Դոկտ. Քարկոտորեանի պատգամէն ետք, Ազգային Շամլեան վարժարանի 6-րդ դասարանի երգչախումբը, Նորա Պայրամեանի խմբավարութեամբ, երգեց «Ելէք հայեր պայքարի» եւ «Մենք ենք մեր սարերը» ազգային երգերը՝ մեծապէս ոգեւորելով ներկաները:

Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց մարզական խորհուրդին մօտ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արամ Թոմաս, որ հայկական պատկանելիութեան կարեւորութեան վրայ կեդրոնանալով ըսաւ. «Յաղթողներ կամ պարտուողներ չկան: Կայ միայն սերունդներու զօրութիւն եւ ան: Սերունդներ, որոնք կը գիտակցին իրենց ինքնութեան՝ ըլլալու արդիւնաւէտ եւ օրինակելի քաղաքացիներ, անմառ պահելով հայութեան յաւերժական ջանքը: Հ.Մ.Ը.Մ-ը այս նպատակով գոյատեւեց 97 տարի: Անիկա ապահովեց ու հզօրացուց այս ինքնութիւնը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր» կարգախօսով, եւ

այս նպատակին համար ալ առաջնորդի դեր կատարեց ո՛չ միայն Արեւմտեան Միացեալ Նահանգներու, այլ՝ համայն աշխարհի տարածքին»:

Եղբ. Թոմաս շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք հաւատք կ'ընծայեն Հ.Մ.Ը.Մ-ին եւ իրենց զաւակները կը վստահին անոր: Ան բարձր գնահատեց մեր սերունդները հայօրէն դաստիարակող, հայութիւնը պահպանող կրթական բոլոր օճախները, անոնց տնօրէններն ու ուսուցչական կազմերը, եւ վստահեցուց, որ Հ.Մ.Ը.Մ-ը անոնց թիկունքն է:

**ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ**

Օրուան երկրորդ գլխաւոր առանցքը հանդիսացող Նաւասարդեան 40-րդ մարզախաղերու բացման բաժինը գլխաւորեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, որ շնորհակալութիւն յայտնելով Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 39-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Ֆերմանեան զոյգին, հրաւիրեց Պետիկ Ֆերմանեանը՝ միասնաբար դիմաւորելու համար 40-րդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահը:

«Կ'ուզեմ ներկայացնել Հ.Մ.Ը.Մ-ական մը, որ Լոս Անճելըսի մասնաճիւղի շարքերէն անցնելով՝ կեանքի յաջողութիւններու հասաւ, սակայն երբեք չչլացաւ, այլ ընդհակառակը՝ իր նուաճումներուն բաժնեկից դարձուց իր ժողովուրդը՝ Իրաքէն մինչեւ Մ. Նահանգներ, Մ. Նահանգներէն մինչեւ մայր հայրենիք: Հ.Մ.Ը.Մ-ական մը, որ միշտ եղաւ իր սիրած կազմակերպութեան՝ Հ.Մ.Ը.Մ-ի կողքին: Հաւատաց անոր առաքելութեան, հետեւեցաւ անոր նպատակներուն, անոր շարքերուն ընդմէջէն սորվեցաւ կեանքի դժուարութիւնները յաղթահարել, եւ՝ յաջողեցաւ: Սակայն անձնասէր չեղաւ եւ իր յաջողութիւններուն բաժնեկից դարձուց իր շրջապատը ու մանաւանդ՝ Հ.Մ.Ը.Մ-ը, որուն միշտ իր զօրակցութիւնը ցուցաբերեց նիւթապէս եւ բարոյապէս», ըսաւ եղբ. Մարսէլեան եւ բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 40-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ տէր





եւ տիկ. Վարանդ եւ Հուրի Մելքոնեանները:

Վարանդ Մելքոնեան իր եւ կնոջ անունով շնորհակալութիւն յայտնեց իրենց ընծայուած պատիւին համար, ու Նաւասարդեան 40-րդ մարզախաղերը բացուած յայտարարեց: Այսպէս, Գառնիկ Սարգիսեանի «Հ.Մ.Ը.Մ. պանծալի» երգին ընկերակցութեամբ, խորհրդաւորապէս վեր բարձրացաւ Նաւասարդեանի խորհրդանիշը՝ խլելով ներկաներու երկարաշունչ ծափողջոյնները:

ՏՈՂԱՆՑՔԸ ԵՒ ԲԱԺԱԿԱՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ

Ոգեւորիչ այս միջնորդութիւն յաջորդեց անհամբերութեամբ սպասուած աշակերտական տողանցքը, որ անկեղծ արտայայտութիւնն էր երկար ամիսներու անոնց մարզական մաքուր մրցակցութեան: Փառահեղ տողանցքին յաջորդեց յաղթանակի բաժակներու յանձնումի պահը: Յայտարարուեցան պասքեթպոլի, ֆութպոլի, վոլիպոլի, փինկ-փոնկի եւ թեթեւ ատլետի մարզաձեւերու ախոյեանները:

Յաղթանակի 150 բաժակներ յանձնուեցան ՔԱՀԱՄ-ի մասնակից վարժա-



րաններուն (գլխաւոր մրցանակակիրներուն ցանկը տեսնել առանձին): Իւրաքանչիւր բաժակի յանձնումը ինքնին արարողութիւն մըն էր անոր արժանացող աշակերտներուն համար, որոնք խումբ առ խումբ, մեծ ոգեւորութեամբ կը ներկայանային առջեւ, հպարտութեամբ կը ստանձնէին իրենց ախոյեանութեան մրցանիշը արժեւորող բաժակները, ապա ներկաներու «հուռու՛»ներուն եւ խրախուսիչ ծափերուն արժանանալով՝ կը վերադառնային իրենց տեղերը:

Այս տարի, մարզական խորհուրդը գեղեցիկ գաղափարը յղացած էր յաղթանակի բաժակներ յանձնելու նաեւ այն վարժարաններուն, որոնք առաւելագոյն ջանքը թափած էին իրենց աշակերտներուն մէջ զարգացնելու համար ոգեւորութեան, մարզական եւ նուաճումի մաքրամաքուր ոգին: Այս բաժակները յանձնուեցան Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններուն ու Պետիկ Ֆերմանեանին կողմէ, ընկերակցութեամբ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանի: Այսպէս,

- Ոգեւորութեան բաժակին արժանացաւ (Spirit Trophy) Շարլոթ եւ էլիզ Մերտինեան վարժարանը:
- Մարզական ոգիի բաժակին (Sportsmanship Trophy)՝ Ազգային Արի Կիրակոս Մինասեան վարժարանը:
- Նուաճման բաժակին (Achievement Trophy)՝ Ազգ. Մեսրոպեան վարժարանը:

Այնուհետեւ, երեկոն խանդավառեց երգիչ Տիգրան Ասատրեան: Ան իր հրամցուցած երգերով պարի հանեց մարզադաշտին ամբողջ աշակերտութիւնը, որ առաւել խանդավառութեամբ ապրեցաւ իր յաղթանակը: Բացառիկ միջնորդութիւն մը մէջ հանդիսութիւնը վերջ գտաւ երեկոյեան ժամը 7-ին՝ գեղեցիկ յիշատակներ արձանագրելով աշակերտութեան ու զանոնք դաստիարակող պատասխանատուներու յիշողութեան մէջ:

ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ՎԱՐժԱՐԱՆՆԵՐԸ

- ՓԻՆԿ-ՓՈՆԿ**
Ա. Ազգ. Շամլեան վրժ.
Բ. Ազգ. Ֆերահեան վրժ.
Գ. Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տեմիրճեան վրժ.
- ԱԹԼԵԹ**
Ա. Ազգ. Ֆերահեան վրժ.
Բ. Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տեմիրճեան վրժ.
Գ. Ազգ. Ռոզ եւ Ալէք Փիլիպոս վրժ.
- ՎՈԼԻՊՈԼ**
Ա. Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տեմիրճեան վրժ.

- Բ. Ազգ. Ռոզ եւ Ալէք Փիլիպոս վրժ.
Գ. Ազգ. Ֆերահեան վրժ.
- ՖՈՒԹՊՈԼ**
Ա. Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տեմիրճեան վրժ.
Բ. Ազգ. Շամլեան վրժ.
Գ. Ազգ. Ֆերահեան վրժ.
- ՊԱՍՔԵԹՊՈԼ**
Ա. Ազգ. Շամլեան վրժ.
Բ. Ազգ. Ֆերահեան վրժ.
Գ. Ազգ. Ռոզ եւ Ալէք Փիլիպոս վրժ.

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԱՆԴ ԵՒ ՀՈՒՐԻ ՄԵԼՔՈՆԵԱՆՆԵՐ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 40-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀ

Թղթակից
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Առաջին անգամ ըլլալով, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Նաւասարդեան մարզախաղերը իրենց իրագործումէն վեց ամիս առաջ ունեցան իրենց պատուոյ նախագահը, յանձինս վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ տէր եւ տիկ. Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններու: Այս գեղեցիկ լուրը հաճելի անակնկալով մը յայտարարեց Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 39-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Պետիկ Ֆերմանեան, Ուրբաթ, 16 Յունուար 2014-ի երեկոյեան, Կլէնտէյլի «Ֆենիսիա» ճաշարանը կազմակերպուած Հ.Մ.Ը.Մ-ականներու հաւաքին ընթացքին:

Ձեռնարկին մասնակից անցեալի եւ ներկայի աւելի քան 220 Հ.Մ.Ը.Մ-ական պատասխանատուները մեծ ոգելորու-



թեամբ, յոտնկայս եւ երկարաչունչ ծափողջոյններով ընդունեցին օրուան գեղեցիկ անակնկալը: Ձեռնարկը նաեւ միութենական գեղեցիկ յուշերու երեկոյի մը վերածուեցաւ, միաժամանակ

ծանօթացման առիթ դարձաւ նորընտիր Շրջանային Վարչութեան կազմին ու անոր ծրագիրներուն:

Այս գեղեցիկ նախաձեռնութեան մտայղացումը ունեցած եւ անոր հովանաւորութիւնը ստանձնած էին Հ.Մ.Ը.Մ-ի 39-րդ եւ նորագոյն՝ 40-րդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահներ՝ տէր եւ տիկ. Պետիկ եւ Մարո Ֆերմանեաններն ու տէր եւ տիկ. Վարանդ եւ Հուրի Մելքոնեանները: Ձեռնակին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւթեան եւ Յակոբ Թիւֆէնքճեան: Ուրախալի էր տեսնել Գալիֆորնիոյ նահանգային խորհուրդի անդամ Խաչօ Աշճեանի ներկայութիւնը ձեռնարկին: Աշճեան փոքր տարիքէն, Լիբանանի մէջ անդամակցած ըլլալով Հ.Մ.Ը.Մ-ին, քաջածանօթ է անոր առաքելութեան եւ կը փափաքի մօտէն գործակցիլ Շրջանային Վարչութեան հետ:





Նորընտիր Շրջանային Վարչութեան անունով ներկաները ողջունեց ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, որ բարի գալուստ մաղթելով ներկաներուն, շնորհակալութիւն յայտնեց ըսելով. «Շնորհակալութիւն կը յայտնեմ բոլորիդ, որ ձեր ներկայութեամբ կը ծաղկեցնէք Հ.Մ.Ը.Մ.ականներու իւրայատուկ այս ձեռնարկը: Իւրայատուկ կ'ըսեմ, որովհետեւ, շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի եւ ներկայի Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատուները, Նաւասարդեանի պատուոյ նախագահներն ու «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ականներ»ը, Շրջանային եւ

մասնաճիւղերու վարչութեանց կազմերը հոս են: Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավար կազմերը համախմբուած տեսնելը բացառիկ երեւոյթ է շրջանի պատմութեան մէջ: Շնորհակալ ենք այս երեւոյթ ըստեղծելուն համար: Շնորհակալ ենք հրապարակային առաջին մեր այս քայլին ձեր քաջալերանքին համար, ինչոր կը յուսադրէ մեզ եւ կ'իմաստաւորէ Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-Բարձրացու՛ր» նշանաբանը»:

Ապա, յայտարարելէ ետք կեդրոնական Վարչութեան անդամներու ներկայութիւնը, եղբ. Մարսէլեան ներկայացուց Շրջանային Վարչութեան իր գործընկերները, խնդրելով ներկաներու զօրակցութիւնը շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի աշխուժացման ծրագիրներուն: Այնուհետեւ, ան յաջորդաբար ներկայացուց շրջանի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսին արժանացած քոյր-եղբայրներն ու Նաւասարդեան մարզախաղերուն փայլք ու քաջալերանք տրած պատուոյ նախագահները:



Այս առիթով իր սրտի խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 39-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Պետիկ Ֆերմանեան, որ առաջին հերթին, իր եւ կնոջ՝ Մարոյին անունով շնորհաւորեց ներկա-

ներուն Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, շնորհակալութիւն յայտնեց իրենց ընծայուած պատիւին համար եւ կոչ ուղղեց ներկաներուն, որ իբրեւ գիտակից Հ.Մ.Ը.Մ.ականներ ձեռք-ձեռքի տալով գործեն միութեան վերելքին ի նպաստ:

Մելքոնեանի ոգեւորիչ եւ յուսադրիչ պատգամէն ետք, եղբ. Մարսէլեան շնորհակալութիւն յայտնեց օրուան ձեռնարկը հովանաւորած Ֆերմանեան եւ Մելքոնեան ընտանիքներուն, Հ.Մ.Ը.Մ.ին յարատեւ օժանդակելու համար, ինչպէս նաեւ՝ ներկաներուն, որոնք իրենց թանկագին ժամանակը տրամադրեցին Հ.Մ.Ը.Մ.ական գեղեցիկ երեկոյին մասնակցելու համար: Ապա, ան բարի ժամանց մաղթեց բոլորին:

Ներկաները մեծապէս գնահատեցին երեկոյին կազմակերպումը, որ գեղեցիկ առիթ մը հանդիսացաւ տեսնելու միութենական իրենց վաղեմի քոյր-եղբայրները: Անոնք երկար ժամեր զրուցեցին, յիշատակի նկարներ նկարուեցան, Հ.Մ.Ը.Մ.ով աւելի գօտեպնդուեցան եւ հերթաբար իրենց նկարահանուած պատգամը փոխանցեցին, վերապրելով Հ.Մ.Ը.Մ.ականի իրենց գեղեցիկ յուշերը:

Անոնք ուշ գիշերին մեկնեցան սրահէն, Հ.Մ.Ը.Մ.ին միշտ զօրակցելու հաստատակամութեամբ:

40 ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇ ԱՍՏԻՃԱՆԱԲՈՐՆԵՐ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԿԸ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԻՆ ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ԿՈՂՄԷ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Ուրբաթ, 13 Փետրուարին, շրջանի աւելի քան 40 արի-արենոյշ աստիճանաւորներ եւ պատասխանատուներ Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մասնակից դարձան Մեծ Պահոց սկիզբը ազդանշող ժամերգութեան եւ Տեառնընդառաջի նախատօնակին: Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տպաւորիչ քարոզը ունկնդրելով հասկցան Տեառնընդառաջի խորհուրդը, որ «մեր հոգիները լուսաւորելու, մեր փրկչին՝ Աստուծոյ նուիրուելու, մեր արմատներուն, մեր մշակոյթին եւ մեր արժէքներուն երթալու ճանապարհն է»: Ժամերգութենէն ետք, անոնք մասնակցեցան աւանդական խարոյկը վառելու արարողութեան եւ խմբանրկար մը ունեցան իրենց ղեկավարներուն եւ հոգեւոր առաջնորդներուն հետ:

Այնուհետեւ, անոնք հիւրընկալուեցան Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Ընթրիքին մասնակից դարձան Ազգային Վարչութեան ատենապետ Վահէ Յովակիմեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան եւ անդամներ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Կարո Էշկիեան եւ անդամներ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ միաբան Պօղոս Աբեղայ Տինքեան, տիկնանց միութեան անդամներ եւ հոգեւոր հայրեր:

Ներկաներուն բարի գալուստ մաղթեց եւ ձեռնարկին



Photo by Berdj Djamdjian

հանդիսավարութիւնը կատարեց Վազգէն Քհնյ. Աթմաճեան: Ելոյթ ունեցան եւ համախմբող այս ընթրիքին կարեւորութիւնը շեշտեցին Շրջանային Սկաուտական Խորհուրդի կապեղբ. Արտաշէս Ղազարեան եւ Ազգային Վարչութեան ատենապետ Վահէ Յովակիմեան: Պօղոս Աբեղայ Տինքեան անդրադարձաւ Տեառնընդառաջի իմաստին եւ խորհուրդին:

Երեկոյին վերջին բաժինով հայրական իր պատգամը փոխանցեց Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ան առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց սկաուտներուն, որոնք ուշադրութեամբ կը հետեւէին կրօնական արարողութեան, ապա բացատրելէ ետք ձեռնարկին տուն տուող պատճառը, ուրախութեամբ փոխանցեց, թէ ամերիկեան սկաուտութեան կողմէ ընդունելի դարձած Հ.Մ.Ը.Մ.ի կրօնական շքանշանի գրքոյկի բովանդակութիւնը փոփոխութեան ենթարկուած ու այժմէականացած է: Առաջնորդ հայրը իբրեւ ապագայի յաջող ղեկավարներ խրախուսեց ներկայ արի-արենոյշները, որպէսզի իրենց տրուած Հ.Մ.Ը.Մ.ականի դաստիարակութիւնը ընդունին «արթուն մտքով, բաց սրտով եւ նաեւ ամբողջական հաւատքով»:

Խորհրդաւոր եւ իմաստալից «Սիրոյ սեղան»ի ընթրիքը վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգով: Առաջնորդ հայրը իւրաքանչիւր մասնակցի նուիրեց Ուիլիըմ Սարոյեանի հայ ժողովուրդի ապրելու կամքը արտացոլող նշանաւոր մէկ գրութիւնը:





Հ.Մ.Ը.Մ.Ի «ՇԱՆԹ» ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ

Մարո Քեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ



Հ.Մ.Ը.Մ.ը հարուստ է մարզական եւ սկաուտական իր ծրագիրներով: Եթէ սկաուտական կեանքէն ներս մտային զարգացումի եւ կեանքի դժուարութիւնները յաղթահարելու միջոցներու կը տիրապետեն, ապա՝ միւս կողմէ, մարզական կեանքէն ներս ֆիզիքական տոկունութեան կը ձգտին: Զոյգ մարզերէն ներս ալ առաջնահերթն ու հակա՛նը ստեղծումն է առողջ եւ մաքուր միջավայրի:

Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական կեանքէն ներս մեծ ժողովրդականութիւն կը վայելէ պասքեթպոլի մարզա՛ձեւը, որուն համար ալ մասնաճիւղերէն ներս կազմուած են զանազան դասակարգերու հարիւրաւոր երկսեռ խումբեր:

Հակառակ այս իրողութեան, մեծ ջանք կը թափուի նաեւ զարգացնելու մարզական այլ ճիւղեր, որոնց կարգին՝ ֆուտպոլ: Այս երեւոյթը լաւագոյնս դրոսելորուեցաւ յանձինն Հ.Մ.Ը.Մ.ի Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղին, որ գեղեցիկ գաղափարը ունեցաւ կազմակերպելու ֆուտպոլի փոքր դասակարգի ձմեռնային միջմասնաճիւղային մրցաշարք մը:

Մրցաշարքը տեղի ունեցաւ 24 եւ 25 Յունուար 2015-ի շաբաթավերջին, «Փետիֆիք քոմիունիթի սենթրը»ի ֆուտպոլի դաշտին վրայ: Մասնակցեցան 8, 10 եւ 12 տարեկան եւ նուազ դասակարգերէ 12 խումբեր, Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս», «Լոս Անճելըս», «Ազատամարտ» եւ «Շանթ» մասնաճիւղերէն:

Երկօրեայ այս մրցաշարքին, Հ.Մ.Ը.Մ.ական մարզասէր հասարակութեանէն բացի, մեծ հետաքրքրութիւն ցուցաբերեցին նաեւ ծնողները, որոնք լրջութեամբ հետեւեցան իրենց զաւակներու խաղարկութեան եւ յաճախ ծափողոյններով քաջալերեցին զանոնք: Հ.Մ.Ը.Մ.ասէր այս ծնողները նաեւ երկու օր ուտելիք եւ ըմպելիներ մատակարարեցին մրցող խումբերուն՝ յատուկ գուրգուրանք եւ հոգածութիւն ցուցաբերելով անոնց:



Մասնաճիւղի ատենապետուհի քոյր Մարալ Լիոն մարզական նման մրցաշարքերու կարեւորութիւնը ընդգծելով յայտնեց. «Հանգուցեալ հայրս՝ Կարպիս Էօլմէսէքեան ֆուտպոլի մեծ սիրահար մըն էր, որուն շնորհիւ ես անձնապէս յատուկ սէր ունիմ ֆուտպոլի մարզաձեւին նկատմամբ: Մեր փափաքն է, որ ֆուտպոլը եւս տիրական ներկայութիւն ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական կեանքէն ներս: Ուրախ եմ, որ այս գծով մասնաճիւղին մեծապէս օգտակար կը հանդիսանան մեր ծնողները, որոնք ամէն շաբաթ, առանց դժգոհելու, իրենց զաւակները փորձերու կը բերեն եւ մօտէն կը հետեւին անոնց մարզական կեանքին: Յատուկ շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել մեր ծնողներէն Ազնիւ եւ մասնաճիւղի մարզիչներէն Համլէթ Ղազանեաններուն, ինչպէս նաեւ վարչական քոյր Արփի Քերոբին, որոնք մեծապէս նպաստեցին մրցաշարքի կազմակերպման եւ մասնակիցներու հոգատարութեան աշխատանքին: Մասնաճիւղը պիտի շարունակէ ֆուտպոլին զարկ տալ՝ Հ.Մ.Ը.Մ.էն ներս»:

«Մեծ հրճուանք է ինծի համար տեսնել զաւակս Հ.Մ.Ը.Մ.ի մաքուր միջավայրին մէջ: Շնորհակալ ենք «Շանթ» մասնաճիւղի ղեկավարներուն, որ այս ուրախ միջնորդութիւնը կը ստեղծեն մեր երեխաներուն եւ ինչու չէ՛ նաեւ մեզի համար», ոգեւորութեամբ արտայայտուեցաւ մրցող մարզիկի մը մայրը:

Յայտնենք, թէ Հ.Մ.Ը.Մ.ի Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղը շրջանի աշխոյժ մասնաճիւղերէն մէկն է, որ կը գործէ 1993-էն ի վեր:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ

Թղթակից
ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ



27 Յունուարի երեկոյեան, Արեւմտեան Մ. Նահանգներու Թեմի Ազգային Առաջնորդարանի «Սիւլահեան» սրահին մէջ, Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի նորընտիր Շրջանային Վարչութեան կազմի ներկայացուցիչներուն՝ գլխաւորութեամբ ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանի: Շրջանային Վարչութեան կազմին ընկերակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւթեան եւ Յակոբ Թիւֆէնքեան:

Առաջնորդը ողջունեց ներկայացուցիչները, շնորհաւորեց Շրջանային Վարչութեան նոր կազմը եւ յաջողութիւն մաղթեց անոր սերնդակերտ աշխատանքին:

Հանդիպումը առիթ մը եղաւ խորհրդակցելու Առաջնորդարանին հետ Հ.Մ.Ը.Մ.ի գործակցութեան ծրագիրներուն մասին, որոնք տարիներու աւանդութիւն ունին: Նկատի առնուեցան Տեառնընդառաջի տօնակատարութիւնն ու այդ առիթով սկսուող սկսուող կազմին հետ Առաջնորդ Հօր հանդիպումը, նաեւ՝ սկսուող շքանշանի դաստիարակչական ծրագիրը եւ

Հ.Մ.Ը.Մ.ի հանգուցեալներու յիշատակի արարողութիւնը, որ կը նշուի Նոյեմբերին:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչները Առաջնորդը հրաւիրեցին միջ-դպրոցական մարզախաղերու փակման, Նաւասարդեան 40-րդ մարզախաղերու բացման հանդիսութեան, պարահանդէսին, փակման փառատօնին ու տողանցքին:

PINK
Kimberley
AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



Հ.Մ.Ը.Մ.Ի «ՍԵԻԱՆ» ՄԱՍՆԱՃԻԲՂԻՆ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻԲՂԱՅԻՆ 30-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԻՐԱԳՈՐԾՈՒԵՑԱՆ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու կեանքէն ներս, Միացեալ Նահանգներու Նախագահներու Օրուան նուիրուած երկար շաբաթավերջը միշտ վերապահուած է Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղին, որ այդ ընթացքին կը կազմակերպէ տարեկան իր մեծագոյն եւ միակ ձեռնարկը՝ բարձր դասակարգերու պասքեթպոլի եւ ֆուլթպոլի միջմասնաճիւղային մարզախաղերը:

Այս տարի այդ մարզախաղերուն 30-ամեակն էր, ինչ որ աւելի հետաքրքրական դարձուցած էր մրցաշարքը, որուն անհամբերութեամբ կը սպասէին շրջանի հայու թիւնն ու Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի մարզասէրները: Հոն էին Լոս Անճելըսէն մինչեւ Սան Ֆրանսիսքոյի եւ Լաս Վեկասի մասնաճիւղերէն ընտրուած պասքեթպոլի 65 եւ ֆուլթպոլի 4 խումբեր՝ մրցակցութեան շաբաթավերջ մը անցընելու, իրարու մօտէն ծանօթանալու եւ իրենց ուժերը չափելու զանազան դասակարգերու խումբերու հետ:

Եւ որեւէ այս մարզախաղերը տեղի ունեցան 14-16 Փետրուար 2015-ին, Սան Տիէկոյի «էլիթնիսթ ինթըրնէշնըլ իւնիվերսիթի»ի մարզադաշտերուն վրայ: Գեղեցիկ երեւոյթ էր համալսարանի հսկայական տարածքի վեց մարզադաշտերուն վրայ միաժամանակ հետեւիլ պասքեթպոլի մրցումներուն, որոնց բծախնդիր կազմակերպման եւ իրագործման մեծապէս նպաստեց Շրջանային մարզական խորհուրդի կազմը, որ երեք օրեր շարունակ հսկելով խաղերու ընթացքին՝ ապահովեց անոնց յաջող ու

հեզասահ աւարտը: Մարզական խորհուրդին առընթեր, եւ որեւէ մրցումներուն մօտէն հետեւեցան Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան եւ մարզական պատասխանատու եղբ. Արամ Թոմաս: Անուրանալի են նաեւ մասնաճիւղին թափած գնահատելի ջանքերը՝ մեծածաւալ այս մրցումներուն կազմակերպման մէջ:

Շաբաթ, 14 Փետրուարի կէսօրուան ժամը 1-ին, մարզադաշտերուն վրայ վայրկեան մը լռութեամբ յարգուեցաւ յիշատակը Հայոց Յեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակներուն, որոնց նահատակութեան 100-ամեակն է այս տարի: Ապա, եղբայրներ Սեւակ Կարապետեան՝ հայերէնով եւ Քուինթ Քեմփիթց՝ անգլերէնով ընթերցեցին այս առիթով պատրաստուած Շրջանային Վարչութեան պատգամը, որուն քար լռութեամբ հետեւեցան ներկաները: Պատգամը կ'ըսէր.

«Սիրելիներ, այս տարի Հայոց Յեղասպանութեան 100-ամեակն է, եւ այս տիրուր առիթով դարձեալ ոտքի է համայն հայ ժողովուրդը՝ նախ յարգելու յիշատակը իր մէկուկէս միլիոն զոհներուն եւ ապա՝ արդար պատիժը տալու անմարդկային այս արարքի հեղինակ ոճրագործ թուրքին: Թուրք պետութիւնը, պէտք է՝

«Ընդունի իր նախահայրերուն գործած ոճիրը,

«Վերադարձնէ իր գրաւած հողերը եւ՝

«Հատուցէ իր պատճառած կորուստներուն համար:

«Մենք երբեք պէտք չէ մոռնանք մեր



պատմութեան դաժանագին այս սեւ էջը, որ իրականացաւ 24 Ապրիլ 1915-ին, մարդասպան թուրքիկոզմէ, ոչնչացրելու համար մեր ստեղծագործ ժողովուրդը: Ան ջարդեց հայ ժողովուրդը, որպէսզի ոչնչացնէ մեզ, սակայն չյաջողեցաւ: Հայ ժողովուրդը ծլեցաւ ու ծաղկեցաւ, կերտեց սերունդներ, որոնց լաւագոյն օրինակները դուք էք: Հզօրացէ՛ք ֆիզիքապէս ու հոգեպէս: Լա՛ւ սորվեցէ՛ք մեր լեզուն եւ մշակոյթը, այցելեցէ՛ք Հայաստան, ազգասիրութեամբ լեցուցէ՛ք, որպէսզի յաւերժ ապրի մեր ազգը:

«Այս համոզումով ալ, Շրջանային Վարչութիւնը 2015 տարեշրջանի Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր ձեռնարկները՝ մարզական, սկստական թէ՛ այլ, նուիրած է Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին: Թող ձեր գնդակի իւրաքանչիւր

հարուածը ուղղուի մեր արդար Դատի լուծման ջանքերուն, ձեր նշանակած իւրաքանչիւր կողմ թող նոր յաղթանակ մը արձանագրէ այդ ջանքերու արդիւնաւորման մէջ:

Հ.Մ.Ը.Մ-ը մեր նահատակ սերունդի ժառանգորդներէն մէկն է, որ իրաւունք չունի մոռնալու իր անցեալը եւ պարտաւոր է իր առողջ սերունդներով երթալու միշտ առաջ, դէպի յաղթանակ:

«Յառա՛ջ նահատակ ցեղի անմահ-նե՛ր»:

Շաբաթ եւ կիրակի տեղի ունեցող մարզական առողջ պայքարէն ետք, մարզախաղերու աւարտական մրցումները տեղի ունեցան Երկուշաբթի, 16 Փետրուարին: Իւրաքանչիւր մրցումէ ետք, յաղթող խումբին յանձնուեցաւ իր դասակարգի ախոյեանութեան բաժակը:


Մրցաշարքը իր աւարտին հասաւ նոյն օրը, կէսօրէն ետք ժամը 2:30-ին: Հարիւրաւոր մարզիկներ եւ ծնողներ գոհունակութեամբ վերադարձան տուն՝ նաւասարդեան մարզախաղերուն նախապատրաստուելու եւ յաջորդ



տարի նոյն մրցումներուն դարձեալ մասնակցելու յոյսով:

«Իբրեւ մարզիկ, մարզիչ, մարզական պատասխանատու եւ այս տարի իբրեւ Շրջանային Վարչութեան կապ՝ մասնակցած եմ այս մարզախաղերուն եւ հոգեկան լայն բաւարարութիւն ըզգացած եմ: Պէտք է ընդունինք, որ իրենց կազմակերպման առաջին օրէն իսկ

այս մարզախաղերը մեծ խանդավառութեամբ ընկալուած են մեր մասնաճիւղերուն կողմէ, եւ այդ իսկ պատճառով անոնք միշտ յաջողութեամբ պսակուած են», գոհունակութեամբ շեշտեց եղբ. Արամ Թումաս, մրցաշարքի աւարտէն ետք:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

www.europehotel.am



Հ.Մ.Ը.Մ.- ՖՐԱՆՍԱԻ ՊԱՐԱՀԱՄՆՌԷՍԸ

Սեւան Նազարեան ՓԱՐԻՉ

Փարիզահայ կեանքին մէջ այլևս ընդունուած սովորութիւն դարձած է ու փնտռուած առիթ՝ Յունուար ամսու առաջին կիսուն Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի տարեկան պարահանդէսը:

Ընթացիկ խրախճանք մը չէ ան, ո՛չ ալ միութենական հաւաք, այլ՝ գաղութի հայկական տարբեր միջավայրերու եւ անձերու հանդիպում, հեռու քաղաքական թէ՛ այլ նկատառումներէ, հաւաք՝ հայկական միջնորդութի, երգի ու պարի շուրջ, պատրաստուած ամենայն բժախնդրութեամբ:

Շաբաթ, 17 Յունուար 2015-ի պարահանդէսը տեղի ունեցաւ «Մարիոթ, Ռիվ կոչ» պանդոկի վերանորոգուած շքեղ սրահին մէջ: 450 հոգիէ աւելի հայորդիներ ամբողջ երեկոն խանդավառ միջնորդութի մէջ իրենց ժամերը անցուցին հայրենի երգիչ Ռազմիկ Ամեանի երգերու շարքով: Պարահարթակը միշտ լեցուն էր, յատկապէս երիտասարդներով, որոնց համար ծանօթ էր բեմէն լսուող հայ երգը: Տեղ տրուած էր նաեւ



Եւրոպական երաժշտութեան, ձայնի հաղորդավարի միջոցով:

Մինչ իր ներկայութեամբ երեկոն յարգած էր Ֆրանսայի մօտ Հ.Հ. դեսպան Վահագն Աթաբէկեան:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Անտրէ Տատայեան, որ բարի գալուստէն ետք ընդգծեց 2015-ի կարեւորութիւնը, իբրեւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակ, ու աւելցուց, որ «Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքի մէջ կը պայքարի հայ երիտասարդութեան եւ մանուկ-

ներու այլասերման եւ հայութեան ճերմակ ջարդին դէմ ու պիտի շարունակէ իր ընթացքը, յուսալով որ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսա եւս 2015-ին կը յաջողի իրականացնել իր երազներէն մէկը՝ սեփական ահումբ շինելու ծրագիրը իր հողին վրայ»:

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անունով իր բարեմաղթութիւնները յայտնեց կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Սիսեռեան:

Երեկոն տեւեց մինչեւ առաւօտեան ժամեր: Դժուար էր սրահէն հեռացնել խանդավառութեամբ լեցուած ժողովուրդը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՐՄԱՆՌԷԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Թղթակից, Յ.Ա.Ս. ԱԹԵՆՔ

26 Յունուար 2015-ին, «Ձաւարեան» կեդրոնի «Ձաքարեան եւ Սարաճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան գաթայի հատման աւանդական արարողութիւնը, որուն ներկայ գտնուեցան մասնաճիւղերու վարչութիւններն ու մարմինները, սկառուտական եւ մարզական կազմերը, նաեւ՝ Թեմի Առաջնորդն ու կրօնական դասը:

Արարողութեան սկիզբը, ներկաները ողջունելով, Շրջանային Վարչութեան ատենապետը բարի գա-

լուստ յայտնեց եւ երազներու իրականացում մաղթեց բոլորին: Ապա, ան ներկայացուց Շրջանային Վարչութեան ամփոփ տեղեկագիրը՝ կատարուած աշխատանքներու մասին: Ան անդրադարձաւ նաեւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առիթով տեղի ունենալիք ծրագիրներուն, որոնք պիտի

երկարին շաբաթներու վրայ եւ ընդգրկեն 16-18 ձեռնարկներ:

Այնուհետեւ, կենսագրական ծանօթութիւններու փոխանցումէ ետք՝ պարգեւատրուեցան եղբայր Արա Ճանիկեան եւ մարզիչ Ջանդիոթիս Եորդոս:

Ներկաները դիտեցին համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ ընդհանուր բանակումին նկարները:

Աւարտին հրաւիրուեցաւ Թեմա-



կալ Առաջնորդ Խորհն Արք. Տողրամաճեան, որպէսզի փոխանցէ իր սրտի խօսքը: Առաջնորդը մեծապէս գնահատելով Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու կատարած աշխատանքները, ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ-ը Սփիւռքի տարածքին հայկական բանակի դերը կատարեց՝ իր լրջութեամբ եւ յատկապէս ծառայութեամբ: Հաւատարիմ մնաց իր նշանաբանին՝ «Բարձրացիր-Բարձրացուր» կարգախօսին, մէկդի դնելով անհատական փառասիրութիւնները եւ միշտ ծառայելով հաւաքական մեր շահերուն:

Ապա, Առաջնորդը լայնօրէն անդրադարձաւ 100-ամեակի ձեռնարկներուն եւ կոչ ուղղեց, որ այս տարի բոլորս ամբողջական մասնակցութիւն բերենք 100-ամեակի ծրագիրներուն, բոլորանուէր կերպով սատար հանդիսանալով գաղութային հաւաքական աշխատանքին:

Սրբազանը շարունակեց ըսելով, որմեր դարաւոր թշնամին՝ թուրքը եւ նորօրեայ թշնամին՝ ազերին, ձեռք-ձեռքի տուած, կը փորձեն խանգարել մեր միասնակամութիւնը, ուստի՝ արտօնելի չէ եւ ընդունելի չէ, որմենք բաժան-բաժան մնանք իրարմէ:

Ապա, Առաջնորդը օրհնեց Հ.Մ.Ը.Մ-ի գաթան՝ փոխանցելով իր մաղթանքները:

Ձեռնարկը փակուեցաւ «Յառաջ նահատակ»ով, որմէ ետք ներկաները շարունակեցին խանդավառ մթնոլորտը՝ շքասեղանով եւ բարեմաղթութիւններու փոխանակումով:

ՄԱՀԱՅԱԾ Հ.Մ.Ը.Մ-ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կիրակի, 15 Փետրուար 2015-ին, յաւարտ Ս. Պատարագի, Գոքինիոյ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ մահացած Հ.Մ.Ը.Մ-ականներու յիշատակին հոգեհանգիստ:

Պատարագը մատուցեց շրջանի հոգեւոր հովիւ Յովհաննէս Աբղ. Սաղտըճեան: Պատարագին ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ-ականներ, սկաուտական կազմի անդամներ եւ ծնողներ: Այս առթիւ արտասանած իր քարոզին մէջ, Հայր Սուրբը խօսեցաւ ծառայութեան մասին եւ ըսաւ. «Քրիստոսի օրինակով հայ ժողովուրդը սորվեցաւ ծառայել իր շրջապատին, եւ տալ լաւագոյնը, ինչպէս նաեւ՝ սորվեցաւ, թէ մարդուն կեանքը կ'իմաստաւորուի, երբ ան կ'ապրի ուրիշին կեանք պարգեւելով: Ծառայութեամբ եւ խոնարհութեամբ մարդ ինքզինք կը բարձրացնէ, ինչպէս նաեւ իր շրջանակը կը բարելաւէ ու կը բարեփոխէ»: Հայր Սուրբը իր խօսքը աւարտեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետի բառերով. «Հայ Եկեղեցին ինքզինք նոյնացուցած է մեր ժողովուրդի հաւաքական կեանքին հետ՝ դառնալով, Քրիստոսի օրինակով, անոր ծառան ու առաջնորդը»:

Յաւարտ Պատարագի, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան խնդրանքով, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ մահացած Հ.Մ.Ը.Մ-ական քոյրերու եւ եղբայրներու յիշատակին:

Հոգեհանգստեան արարողութեան նախագահեց Առաջնորդ Խորհն Արք. Տողրամաճեան:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՂԲ. ԲԱԳՐԱՏ ԵՍԱՅԵԱՆԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջ. Վարչութիւն ԱԹԵՆՔ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի Բիւրոյի անդամ եղբ. Բագրատ Եսայեանի Յունաստան այցելութեան առիթով, Հինգշաբթի, 19 Փետրուար 2015-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը իր հիւրին հետ այցելեց Ագգային Առաջնորդարան՝ Յունաստանի Թեմի Առաջնորդ Խորէն Արք. Տողրամաճեանի հետ հանդիպում մը ունենալու համար:



Հանդիպումին ընթացքին, Առաջնորդը շնորհաւորեց եղբ. Եսայեանի ընտրութիւնը: Տեղի ունեցաւ զրոյց մը՝ յունահայ գաղութի իրավիճակին, ընդհանուր առմամբ Համաշխարհային Սկաուտական Շարժումի աշխատանքներուն եւ 2015-ի ամառը Հայաստանի մէջ կայանալիք համահայկական խաղերուն մասին: Զրոյցը անդրադարձաւ նաեւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի ձեռնարկներուն:

Այնուհետեւ, եղբ. Բագրատ Եսայեան եւ Շրջանային Վարչութեան անդամները կարճ պտոյտ մը կատարեցին Աթէնքի եւ Բիրեայի պատմական վայրերուն մէջ:

Յետմիջօրէին, եղբ. Եսայեան «Ձաւարեան» կեդրոնին մէջ յաջորդական հանդիպումներ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային խմբապետութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդին հետ, լուսաբանութիւններ տալով սկաուտական զանազան հարցերու շուրջ:

Երեկոյեան, եղբ. Եսայեան այցելեց յունական սկաուտական ֆետերասիոնի Այ. Անտրեայի բանակավայրը, ուր մասնակցեցաւ Սկաուտական Համաշխարհային Շարժումի Բիւրոյի աշխատանքներուն:

Այդ աշխատանքներու աւարտին, Կիրակի, 20 Փետրուարի կէսօրէ ետք, Շրջանային Վարչութեան կարգ մը անդամները Նէա Մաքրիի մէջ դարձեալ կարճ հանդիպում մը ունեցան եղբ. Բագրատ Եսայեանի հետ, ապա եղբայրը հրաժեշտ տալով Յունաստանին վերադարձաւ Հայաստան:



Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՈՒԲԷԼԵԱՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՁԵՌՆԱՐԿԸ

Թղթակից
ԳԱՅԻՐԷ

ՀՄԸՄ-«Արարատ»ի հիմնադրույթեան 100-ամեայ յոբելեանը նշուեցաւ Ուրբաթ, 21 եւ Շաբաթ, 22 Նոյեմբեր 2014-ին, եգիպտահայ իրականութեան մէջ գործող երկրորդ ամէնէն երկարակեաց ակումբին՝ Հելիոպոլսոյ մարզադաշտին վրայ:

Երկօրեայ հանդիսութիւնը կը հովանաւորէր Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեան, կը նախագահէր միութեան երիցագոյն անդամ եղբ. Պետրոս Մխտիկեան, մինչ պատուոյ հիւրն էր Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Արմէն Մելքոնեան:

Քոյր ակումբի յոբելեանական տարեդարձին մասնակցելու համար Լիբանանէն հրաւիրուած էին ՀՄԸՄ-ի Անթիլիասի մասնաճիւղի երէց տղոց եւ աղջկանց խումբերը: Աղեքսանդրիայէն կը մասնակցէր ՀՄԸՄ-«Կամք»ի երէց տղոց խումբը, ՀՄԸՄ-«Արարատ»ի



Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի եւ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի ատենապետներ՝ եղբայրներ Վարդան Գազանձեան եւ Իշխան Եղիայեան:

տղոց եւ աղջկանց խումբերուն, ինչպէս նաեւ ՀՄԸՄ-«Արարատ»ի սկաուտներուն կողքին:

ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ, ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Յ ա յ տ ա գ ի ը ի ն առաջին օրը՝ Ուրբաթ, 21 Նոյեմբերի երեկոյեան ժամը 5:30-ին, հանդիսավար քոյր Սօսէ Կրպոյեան յանուն ՀՄԸՄ-«Արարատ»ի վարչութեան

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի ատենապետ եղբ. Վարդան Գազանձեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան քարտուղար քոյր Թալին Օրտողլեան:

բացուած յայտարարեց 100-ամեակի հանդիսութիւնը, հրաւիրելով ՀՄԸՄ-«Արարատ»ի գայլիկները, արծուիկները, արիններն ու արենոյնները՝ թիւով 57 տարազաւորներ, որպէսզի կատարեն սկաուտական տողանցք եւ երդման արարողութիւն, զոր ընդունեց խմբապետ եղբ. Արա Քէօհնէլեան:

Երդման արարողութեան աւարտին պարգեւատրուեցան վեթերան խմբապետ-խմբապետուհիներ՝ քոյրեր Սոնա Պայրամեան, Սոնա Շիկէցեան, Սոնա Ոսկերիչեան, Անժէլ Բիրանեան-Չոհրապեան, Ալին Գազանձեան, եղբայրներ Տրդատ Չոհրապեան, Յակոբ Սիմոնեան, Խեչօ Յակոբեան, Յակոբ Ոսկերիչեան, Պօղոս Սիմոնեան, Վահագն Դելիեան եւ Ռոպէր Թապաքեան (վերջին երեքը յետ մահու):

Սկաուտական տողանցքէն, երդման եւ պարգեւատրման արարողութիւններէն ետք, տողանցքով մարզադաշտ մուտք գործեցին ՀՄԸՄ-ի Անթիլիասի, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ-«Կամք»ի,



Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի պաս-
քեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերու
մարզիկներն ու Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի
սկաուտական կազմը:

Հանդիսաւոր այդ պահուն, յանուն
Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութեան,
ներկաները եւ մասնակից հիւր խումբե-
րը ողջունեց եղբ. Լեւոն Դելփեան:

Իր խօսքին մէջ ան ներկայացուց 100-
ամեայ մարզական միութեան կազմա-
կերպական ու մարզական գործունէու-
թեան գլխաւոր հանգրուանները: Եղբ.
Դելփեան նշեց, որ 1912-ին Աղեքսանդր-
իոյ Պօղոսեան Ազգային վարժարանին
մէջ կատարուած է հայկական անդրա-
նիկ երկսեռ մարզահանդէսը: Յաջորդ
տարի արձագանգած է նաեւ Գահիրէն
ու այդ նպատակով կազմուած է «Մար-
զասիրաց ընկերութիւն»ը: Մարզական
մնայուն գործունէութիւն ունենալու
գաղափարը զարգանալով, 1914-ին
խումբ մը մարզիկներ եւ մարզասէրներ,
գլխաւորութեամբ Ստեփան Խանճեա-
նի, կը կազմեն «Արարատ» մարզական
միութիւնը, սկզբնական շրջանին օգ-
տագործելով Գալուստեան Ազգային
վարժարանի դաշտը, իսկ ապա տեղա-
փոխուելով ներկայի Ռամսէս պողոտա-
յի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հո-
ղամասը: 1928-ին, միութիւնը այս ան-
գամ կը տեղափոխուի Շուպրա՝ Կարա-
պետեաններու ընդարձակ դաշտը, ուր
կը գործէ մինչեւ 1936, որմէ ետք մինչեւ
1962, արդի մարզադաշտ տեղափոխու-
թիւնը, կը գործէ Գահիրէի կեդրոնը:

Եղբ. Լեւոն Դելփեան անդրադար-

ձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի
եւ «Արարատ»ի միա-
ւորման պատմակա-
նին, երբ 1946-ին, Հ.Մ.-
Ը.Մ.-ի եւ «Արարատ»ի
վարիչները, գլխաւո-
րութեամբ Հայկ Ճիգ-
մէճեանի եւ Ստեփան
Ամիրայեանի, կայա-
ցուցած են այդ որո-
շումը: Այս ծիրին մէջ
ան յիշատակեց «Արա-
րատ»ի օրուան վարիչ-
ներու շարքին՝ Գրի-
գոր Նիզիպլեանի, Գա-
րեգին Շուշեանի, Թո-
րոս Խաչատուրեանի
եւ Վարդան Գազանճ-
եանի անունները, իսկ
յաջորդող սերունդնե-
րէն ան ոգեկոչեց եղբայրներ Վարուժան
Մինասեանի, Գարեգին Շամլեանի, Կա-
րօ Մոմճեանի, Նազարէթ Գալուստեա-
նի, Կարպիս Ֆրունճեանի, Պետրոս Ոս-
կերիչեանի, Հրանդ Կէօզիլպէյիլեանի,
Վարուժան Գազանճեանի, Վրէժ Քէօ՛՛-
նէլեանի, Խոսրով Զաքարեանի, էտ-
ուար եւ Անահիտ Թումայեանցներու եւ
Ճէքի Կէվրէկեանի յիշատակն ու վաս-
տակը:

Այս առթիւ ան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.-
«Արարատ» պասքեթպոլի կողքին հաս-
ցուցած է աթլետիկ մարզեր մարզա-
խաղերու (վազք, հեռաւորութիւն եւ
բարձրութիւն ցատկել, նիզակ, գունդ
եւ սկաւառակի արձակում եւ այլն),



Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի փոխ ատենա-
պետ եղբ. Զաւէն Լէյլէկեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի
մասնաճիւղի ատենապետ եղբ. Իշխան Եղիայեան:

Ֆութպոլի, կռփամարտի, հեծելարշա-
ւի, ծանրաբարձութեան բազմաթիւ
փայլուն մարզիկներ, որոնք յառաջա-
տար դիրքեր գրաւած են եգիպտական
մակարդակի վրայ եւ, վերջապէս, մար-
զական ակումբի անբաժանելի մասնի-
կը՝ հայ արիւններու շարժումը, որ հետա-
գային կազմակերպականօրէն միացաւ
Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքին:

Վերջապէս, ան երախտագիտութիւն
յայտնեց բոլոր անոնց, որոնք անսա-
կարկ ճիգով նպաստեցին Միութեան
կենսունակ ու գործունեայ պահպան-
ման, ըլլան անոնք վարչականներ, մար-
զիկներ, սկաուտներ, անդամներ, աջա-
կիցներ թէ համակիրներ, ու այդ ճամ-
բով սատարեցին հայապահպանման ու
ազգի կազմակերպման ջանքերուն:

Այնուհետեւ, յանուն 102-ամեայ
Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի, ողջոյնի խօսք ար-
տասանեց քոյր Արտա Զոհրապեան:
Քոյրը վստահութիւն յայտնեց, որ ինչ-
պէս նախորդ 100 տարիներուն, Հ.Մ.-
Ը.Մ.-«Արարատ»ը կարողացած է գոյա-
տելել եւ յառաջանալ, մարզասէր հասա-

Ակումբին մուտքին ցուցադր-
ւած հին ու նոր վարչական պա-
տասխանատուներու եւ մարզիկնե-
րու նկարներ:

(Նկարներու պատրաստութիւնը
եւ համադրումը՝ եղբ. տոքթ. Սուրէն
Պայրամեանի)





րակութեան եւ ընդհանրապէս եզրա-
տահայ հասարակութեան փոխանցել
մարզական եւ սկստական ոգի ու
դաստիարակութիւն, արձանագրել
տարբեր նուաճումներ, նոյնպէս ապա-
գային ալ իր կարեւոր ու հական դերը
պիտի շարունակէ ունենալ եւ Հ.Մ.-
Ը.Մ.ի վեհ դրօշին տակ յարատեւել ու իր
ծառայութիւնը շարունակել:

Ապա, յոբելեար մասնաճիւղին 100-
ամեակը ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնա-
կան վարչութեան ատենապետ եղբ.
Գառնիկ Մկրտիչեան (խօսքը տեսնել
էջ 5):

Երեկոյեան ժամը 8-ին տեղի ունեցաւ
Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի պասքեթպոլի
կրտսեր տղոց մրցումը էլ Տար ակումբի
իրենց տարեկիցներուն դէմ, որմէ յաղ-
թական դուրս եկան հիւր ակումբի
տղաքը եւ տիրացան տէր եւ տիկին Շե-
րիֆ Գոլոյեանի նուիրած բաժակին:

Օրուան երկրորդ մրցումը կատար-
ւեցաւ երեկոյեան ժամը 10-ին, Հ.Մ.-
Ը.Մ.-«Կամք»ի եւ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի
երէց տղոց միջեւ: Մրցումը ավարտեցաւ
Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի յաղթանակով:
Յաղթականը տիրացաւ տէր եւ տիկին
Վահրամ Կէվրէկեանի՝ իրենց հօր՝ Ճէքի
Կէվրէկեանի յիշատակին նուիրած բա-
ժակին:

**ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ. ՄՐՑՈՒՄՆԵՐ,
ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ
ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ**

Երկրորդ օրը, Շաբաթ, 22 Նոյեմբե-
րին, յայտագիրը սկսաւ երեկոյեան ժա-
մը 6-ին, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» եւ էլ
Նասր ակումբներու կրտսեր աղջկանց
խումբերու մրցումով, որ ավարտեցաւ
հիւրընկալ ակումբի խումբին յաղթա-
նակով: Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» տիրացաւ
տէր եւ տիկին Վարուժ Չիլինկիրեաննե-
րու նուիրած բաժակին:

Պասքեթպոլի յաջորդ մրցումը իրա-
րու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի
եւ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի երէց աղջկանց
խումբերը: Մրցումը ավարտեցաւ Հ.Մ.-
Ը.Մ. Անթիլիասի յաղթանակով, որ տի-
րացաւ տէր եւ տիկին Գառնիկ Կրպոյ-
եանի տրամադրած բաժակին:

Այնուհետեւ եղբայր Լեւոն Դելիեան
յայտարարեց, որ տեղի պիտի ունենան
վաստակաւոր եղբայրներու, վարչա-

կաններու, մարզիչներու եւ մարզիկնե-
րու պարգեւատրումներ:

Առաջին հերթին ան դաշտ հրաւիրեց
Առաջնորդ Սրբազանը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդ-
րոնական վարչութեան ատենապետ
եղբ. Գառնիկ Մկրտիչեանը եւ Հ.Մ.-
Ը.Մ.-«Արարատ»ի ատենապետ եղբ.
Վարդան Գազանճեանը պարգեւատ-
րումները կատարելու:

Գնահատուեցաւ աւագ եղբայրներ
տոքթ. Գէորգ Մազլումեանի, Պետրոս
Մխտիկեանի, տոքթ. Սուրէն Պայրամ-
եանի, Վաղարշ Զաքարեանի, Վարու-
ժան Տատուրեանի, Բարսեղ Գրըլեանի
եւ Յակոբ Ոսկերիչեանի վաստակը:

Այնուհետեւ, եղբայրներ Պետրոս
Մխտիկեան եւ տոքթ. Սուրէն Պայրամ-
եան հրաւիրուեցան պարգեւատրողնե-
րուն միանալու:

Պարգեւատրուեցան նախկին վարչա-
կաններ՝ եղբայրներ Խեչօ Յակոբեան,
էտի Գարակէօզեան, Յակոբ Աւետան-
եան, Պերճ Ասատուրեան, Ֆրէտի Գա-
րակէօզեան, Վաղարշ Զաքարեան, Զա-
ւէն Լիլլոզեան, Լորիս Քէօհնէլեան,
Հայկ Ասատուրեան, Լեւոն Դելիեան,
Արա Քէօհնէլեան, Յարութիւն Պալեան,
Վահրամ Կէվրէկեան, Յարօ Յովակիմ-
եան, Բենօ Իրատեան, Սարգիս Գրըլ-
եան, Ճորճ Թորոսեան, քոյրեր Արաքսի
Թումայեանց եւ Ծովիկ Աւետանեան:

Հանդիսավար քոյր Սօսէ Կրպոյեան
այս առիթով յիշատակեց 100-ամեակի
տօնակատարութիւններուն գլխաւոր
կազմակերպիչ ներկայ վարչութեան
հինգ անդամները՝ ատենապետ եղբ.
Վարդան Գազանճեան, փոխ ատենա-
պետ եղբ. Կարօ Թումայեանց, գանձա-
պահ եղբ. Րաֆֆի Դելիեան, քարտու-
ղար եղբ. Խաչիկ Աւետանեան եւ եղբ.
Յակոբ Սայեան, որոնք նոյնպէս եղած
են վարչականներ, խումբի պատասխա-
նատու, մարզիչ եւ մարզիկ:

Պարգեւատրուեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.-
«Արարատ»ի աւագ մարզիչը, խումբի
պատասխանատուն, մարզիկները եւ
սկստանները:

Պարգեւատրուողներու շարքին էին
նաեւ եղբ. Հերի Գազանճեան (նշանա-
ւութեան Եզրպտոսի հաւաքականի ան-
դամ եւ միջազգային ախոյեան), քոյր
Դալար Մազլումեան (համա-Հ.Մ.-
Ը.Մ.ական խաղերուն թենիսի ախոյ-

եան), բազմամեայ մարզիկ եւ մարզիչ
եղբ. Կարպիս Գալփաքեան (Տաուլի),
մարզիչ Արթօ Սրապեան (աղջկանց
խումբի պատասխանատու), մարզիչ
եղբ. Սարգիս Ժամկոչեան, մարզիչ Մո-
համէտ էլ Սահարթի եւ միջազգային
իրաւարար Մոհամմէտ էլ Ուարտանի:

Ապա յուշանուէրներ փոխանակե-
ցին՝ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի ատենապետ
եղբ. Վարդան Գազանճեան եւ Հ.Մ.-
Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչու-
թեան քարտուղար քոյր Թալին Օրտողլ-
եան, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի ատենա-
պետ եղբ. Վարդան Գազանճեան եւ
Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի
ատենապետ եղբ. Իշխան Եղիայեան,
Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի փոխ ատենապետ
եղբ. Զաւէն Լէյլէկեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լի-
բանանի Շրջանային վարչութեան քար-
տուղար քոյր Թալին Օրտողլեան, Հ.Մ.-
Ը.Մ.-«Կամք»ի փոխ ատենապետ Զաւէն
Լէյլէկեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի
ատենապետ եղբ. Իշխան Եղիայեան,
Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի ատենապետ
եղբ. Վարդան Գազանճեան եւ Հ.Մ.-
Ը.Մ.-«Կամք»ի փոխ ատենապետ եղբ.
Զաւէն Լէյլէկեան, Հ.Մ.Ը.Մ.-«Արա-
րատ»ի ատենապետ եղբ. Վարդան Գա-
զանճեան եւ Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի
ատենապետ եղբ. Ժիրայր Տեփոյեան,
Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի ատենապետ եղբ.
Վարդան Գազանճեան եւ Սրբուհի Թե-
րեզայի ներկայացուցիչ Գրիգոր Միքա-
յէլեան:

Երեկոյեան ժամը 11-ին սկսաւ Հ.Մ.-
Ը.Մ.-«Արարատ»ի եւ Հ.Մ.Ը.Մ. Անթի-
լիասի երէց տղոց մրցումը, որ ավարտե-
ցաւ հիւրընկալ ակումբի կազմին յաղ-
թանակով: Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» տիրա-
ցաւ տէր եւ տիկին Հերի Գազանճեաննե-
րու նուիրած բաժակին:

Կէս գիշերն անց էր, երբ սկսաւ ըն-
տանեկան խրախճանքը: Խանդավառ
մթնոլորտի մէջ, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի
ատենապետ եղբ. Վարդան Գազանճեան
յուշանուէր մը յանձնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդ-
րոնական վարչութեան ատենապետ
եղբ. Գառնիկ Մկրտիչեանին:

Խրախճանքը խանդավառ մթնոլոր-
տի մէջ շարունակուեցաւ մինչեւ առա-
ւօտեան առաջին ժամերը:



«ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»՝ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

22 Փետրուարին, Սուրիոյ Գամիշլի քաղաքի «Կիւլպէնկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Հայ սկաուտի օր», հովանաւորութեամբ Փառէն Ծ. Վրդ. Վարդանեանի եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին: «Սկաուտի օր»ուան մասնակցեցան 150 սկաուտներ: Ձեռնարկը նուիր-



ւեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին:

Ձեռնարկին ընթացքին սկաուտները հանդէս եկան գեղարուեստական յատուկ յայտագիրով՝ մեներգ, ասմունք, փոքրիկ ներկայացում: Անոնք կազմեցին

բուրգեր: Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը հնչեցուց ազգային երգերու երաժշտութիւն:

Հակառակ Սուրիոյ մէջ տիրող բազմաթիւ դժուարութիւններուն, Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղը երեք տարուան ընդմիջումէ ետք անգամ մը եւս փաստեց, որ հաւատարիմ կը մնայ «Կա՛նք, պիտի՛ լինենք ու դե՛ռ շատանանք» կարգախօսին:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱԾԻԷՂԻՆ ՉՄԵՌՆԱՅԻՆ ԵՌՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ

(ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ)

Անիթա Իշխանեան ՊԱՂՏԱՏ

Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղի 2015-ի ձմեռային բանակումը տեղի ունեցաւ 5-7 Փետրուար 2015-ին, Հ.Մ.Ը.Մ. Պաղտատի կեդրոնին մէջ, կազմակերպութեամբ մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին եւ աստիճանաւորական կազմին, մասնակցութեամբ երէց-պարմանուհի, արի-արեւոյշ դասակներու: 7 Փետրուարին, բանակողներուն միացան նաեւ գայլիկ-արծուիկները եւ մոկլիները:

Այս տարուան բանակումը նուիրուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին: Հետեւաբար, բանակումին յայտագիրը, զրոյցները եւ դասախօսութիւնները ընդգրկեցին 100-ամեակի վերաբերող նիւթեր:

Բանակումին առաջին օրը, 5 Փետրուարին, բացման արարողութեան ընթացքին, քանի մը քոյրեր եւ եղբայրներ իրենց տքնաջան աշխատանքին համար արժանացան աստիճաններու: Մասնաճիւղի ընդհանուր խմբապետ եղբ. Բաֆֆի Թովմասեանի կողմէ աստիճաններ տրուեցան հետեւեալ եղբայրներուն եւ քոյրերուն.- Արիս Մելքոնեան- Խմբապետ, Սարգիս Պէրէմեան- Խմբապետ, Մասիս Աւետիսեան- Փոխ Խմբապետ, Արա Պէրէմեան- Փոխ Խմբապետ, Մարալ Իհսան- Տասնապետուհի, Մարիամ Եղիազարեան- Վարիչ Առաջնորդ, Սաթիկ Օհաննէսեան- Վարիչ Վեցակապետուհի, Լալա Պէրէմեան- Փոխ Տասնապետուհի:

Երկրորդ օրը եղան ձեռնային աշխատանքներ, դասախօսութիւններ եւ խարուկահանդէսի պատրաստութիւններ:

7 Փետրուարին, կատարուեցաւ բանակումի հանդիսաւոր փակում եւ խարուկահանդէս, որուն ներկայ եղան մասնաճիւղին վարչութիւնը, քահանայ հայրեր, Ազգային Կեդրոնական վարչութեան ատենապետն ու անդամները, գաղութի միութիւններու վարչական անդամները, ծնողները եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Սկաուտական Խորհուրդի եւ խմբապետական կազմի անունով բարի գալուստի խօսք արտասանեց խմբապետուհի քոյր Անիթա Իշխանեան: Ան իր խօսքին մէջ նշեց, որ բանակումը նուիրուած է Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին: Ան յիշատակեց 100-ամեակի նշանաբանը՝ «Կը յիշեմ եւ կը պահանջեմ»ը, առաւել յայտնեց այս տարուան բանակումին բնաբանը՝ «1918-ին մանուկ մը ծնաւ հայոց ցաւէն, տառապանքէն: Ջարդին արիւնով մկրտեցին այս մանուկը եւ զայն կոչեցին Հ.Մ.Ը.Մ.: Իսկ այս մանուկին պարտականութիւն տուին ծառայել հայ ժողովուրդին» (Սամուէլ Մկրտիչեան): Քոյրը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնը Ցեղասպանութեան կարեւոր հետեւանքներէն մէկն է: Հ.Մ.Ը.Մ. հաւաքեց Ցեղասպանութենէն ճողոպրած մանուկները, երիտասարդները եւ զանոնք դաստիարակեց հայկական հոգիով:

(Շար.ը էջ 68)

ԵՂԲ. ԱՐԱ ՊԱՊԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յակոբ Քէշիշեան
ՊԷՅՐՈՒԹ



Պէյրուժի հայութենէն առ յաւէտ բաժնուեցաւ ազնիւ հայորդի մը եւ ընտանիքի բարի հայր մը, որ սիրուած էր ամբողջ շրջապատին կողմէ՝ յարգանք պարտադրելով իր անձին հանդէպ:

Եղբ. Արա Պապիկեանի մահուան գոյժը տխրեցուց զինք ճանչցողներն ու ծանօթները, որոնք կրնան վկայել անոր պարկեշտութեան, ծառայասիրութեան եւ ազգասիրութեան մասին:

Եղբ. Արա Պապիկեան ծնած է 1931-ին, Պէյրուժ: Նախնական ուսումը ստացած է Պէյրուժի իտալական վարժարանին մէջ, ապա բարձրագոյն ուսումը շարունակած՝ Փրէրներու դպրոցին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ...

Շարունակուած 67րդ էջէն

Այնուհետեւ, գեղարուեստական յայտագրով սկսողներ խարուկահանդէսին իրենց մասնակցութիւնը բերին արտասանութիւններով, ազգային երգերով, սկսողական բուրգերու եւ աշտարակներու կազմութեամբ: Այս առիթով, ներկաներուն բաժնուեցան Յեղասպանութեան 100-ամեակի յատուկ յուշանուէրներ:

Խարուկահանդէսի աւարտին, աւանդական ոսպապուրը օրհնուեցաւ քահանայ հայրերու կողմէ եւ բաշխուեցաւ ներկայ հայորդիներուն:

Արա Պապիկեան՝ կրտսեր եղբայրը մեթր Խաչիկ Պապիկեանի, քաղաքականութիւնը չէ սիրած, այլ նախընտրած է վաճառականութիւնն ու ճարտարարուեստը: Դպրոցէն շրջանաւարտ ըլլալէ անմիջապէս ետք նետուած է կեանքի ասպարէզ, երբ Պապիկեան ընտանիքը Պուրճ Համուտի Արագած շրջանին մէջ հիմը կը դնէ կերպընկալի գործարանի մը, ուր Արա կը նշանակուի տնօրէն՝ հսկելով աշխատանքներուն ու զարգացնելով գործարանին արդիւնաբերութիւնը:

Տարուէ տարի յառաջդիմութիւն արձանագրելէ ետք, գործարանին տարածքը նեղ նկատուելով, 1968-ին գործարանը կը փոխադրուի Տըքուէնէի շրջան, ուր կը գործէ մինչեւ օրս, կերպընկալի մարզին մէջ իր ուրոյն դիրքն ու մակարդակը ունենալով լիբանանեան շուկային վրայ:

Արա Պապիկեան երիտասարդ տարիքին մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուժի մասնաճիւղի շարքերուն:

1961-ին ան կը կազմէ հայկական աւանդութիւններու հաւատարիմ հայ ընտանիք՝ ամուսնանալէ ետք Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուժի պասքեթպոլի խումբի մարզիկուհիներէն Հուրի Շահինեանին հետ: Անոնք կը բախտաւորուին երկու մանչ գաւակներով՝ Հրայր եւ Տիրան:

Իր քաջալերանքով Հուրի կը գործէ հայկական բարեսիրական միութիւններուն մէջ, ինչպէս՝ Լէյլաւանի ժողովրդային բնակարաններու օժանդակ տիկնանց մարմինին, ԼՕԽ-ի յարբերական յանձնախումբին եւ վերջին տարիներուն «Hi Food»-ի յանձնախումբին մէջ, իբրեւ ատենապետուհի:

Արա Պապիկեան տեւաբար մտահոգուեցաւ հայութեամբ եւ ազգային ցաւերով: Ան ապրեցաւ հայրենիքի կարօտով ան իր աչքերը փակեց գոհունակ՝ տեսնելէ ետք Հայաստանի անկախացումն ու Արցախի ազատագրումը:

Արա Պապիկեան եղած է Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուժի վարչութեան անդամ՝ վարելով գանձապահի պաշտօն: Ան քանի մը

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Միհրան Շիմշիրեանի մահուան Ա. տարելիցին առիթով՝
Եղբ. Զրաչ Սիսեռեան (Փարիզ) Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կը նուիրէ 5000 \$
- Իրենց քրոջ՝ Թագուհի Պազգալեանի մահուան առիթով՝
Եղբ. Յարութ եւ քոյր Զեփիւռ Պազգալեան (Փարիզ) 150 եւրօ
- Յարութիւն Պալեանի յիշատակին՝
Տէր եւ Տիկ. տոքթ. Միհրան Երեմեան (Զուիցերիա) 500 \$

ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի մասնաճիւղի վարչութիւնը կը գուժէ իր անդամներէն՝

ԵՂԲ. ԳՕԳՕ ԳՊԸՃԵԱՆԸ

մահը, որ տեղի ունեցաւ 7 Փետրուար 2015-ին, Նոր Գիւղի շրջանը ինկած հրթիռներու պատճառով:

անգամ գլխաւորած է Պէյրուսի մար-
զական խումբերուն պատուիրակու-
թիւնները դէպի Հալէպ եւ Գահիրէ՝
Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն խումբերուն հետ
մրցումներ ունենալու համար:

Վարչութեան անդամ կամ ոչ՝
Արա Պապիկեան հետեւած է Հ.Մ.-
Ը.Մ.ի գործունէութեան ընդհանրա-
պէս, եւ յատուկ հետաքրքրութիւն
ցուցաբերած է Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի
ներկայացուցչական խումբին հան-
դէպ մասնաւորաբար:

Ան ներկայ կ'ըլլար Հ.Մ.Ը.Մ.ի ձեռնարկներուն ընկերային
հանդիպումներուն եւ մանաւանդ չէր բացակայեր Մայիսեան
փառատօններու տողանցքներէն, որովհետեւ փառատօնները
հպարտութեան անզուգական պահեր ստեղծող առիթներ էին
իրեն եւ հայութեան համար:



Առ ի գնահատանք միութենական
իր բեղուն վաստակին, Հ.Մ.Ը.Մ.ի Լի-
բանանի Շրջանային Վարչութիւնը
յետ մահու գինք պարգեւատրեց Հ.Մ.-
Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով:

Սիրելի՛ եղբայր Արա,

Այո՛, դաժան են մահն ու բաժա-
նումը:

Հրաժեշտ առիր մեր բոլորէն
անակնկալօրէն:

Քանի մը տողերով այս գրութիւնը
թող սփոփէ մեր ցաւն ու վիշտը, դո՛ւն
անմոռանալի ու լաւ յիշատակներ ձգած ես մեր հոգիներուն մէջ:

Հողը թեթեւ գայ վրադ:

Խունկ ու մոմ յիշատակիդ:

ՀԱՄԵՍՏ ԱԲՕՆ ԱԼ ԳՆԱՑ ...

Սգակիր Զ.Մ.Ը.Մ.ական մը
ՊՈՒՐԾ ԶԱՍՈՒՏ

Անողոք մահը, անակնկալօրէն, ինքնաշարժի
արկածի իբրեւ հետեւանք, գինք բաժնեց իր
սիրելի հարազատներէն՝ եղբօրմէն, քրոջմէն
եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքէն: Եղբ. Աբօ
Այնթապլեան համեստ անձնաւորութիւն մըն
էր, որուն ծանօթ էին գրեթէ բոլոր պուրճ համուտցիները:
Բոլորին բարեկամ էր, շրջանի խանութպաններուն եւ պաշ-
տօնեաներուն: Յաճախ մէկ առ մէկ կը մտնէր անոնց քով՝
բաժնելով իր հաճելի կատակները եւ ժողովրդածին առածնե-
րը՝ պահ մը ժպիտ ուրուագծելով անոնց դէմքին վրայ եւ
տրամադրութիւններ փոխելով:

Թաղապետի գործով զբաղող եղբօրը գործակից էր եղբ.
Աբօ, միշտ խոնարհ ու ծառայասէր: Ան կ'օգնէր ամէնուն,
ջերմօրէն կը մօտենար բոլորին, սկսելով Հ.Մ.Ը.Մ.ի աթլէթի
պատասխանատուներէն՝ Գէորգ Գարապոյաճեանէն, Վարու-
ժան Գէորգեանէն (երկուքն ալ հանգուցեալ), հասնելով միւս-
ներուն: Ան սիրայօժար կերպով կը մասնակցէր աթլէթի

ախոյեանական թէ ընթացիկ մըր-
ցումներուն, վիրաւոր կամ ար-
կածեալ մարզիկներէն իւրաքան-
չիւրին օգտակար դառնալով
մարձումի իր մասնագիտու-
թեամբ, մեղմացնելով անոնց ցա-
ւերը, նոր շունչ եւ առողջութիւն
ընծայելով անոնց:

Ամրան տաքին, արեւուն տակ թէ ձմրան ցուրտին, անձ-
րեւները անտեսելով, եղբ. Աբօ անդուլ կերպով եւ առանց
տրտունջի ներկայ եղաւ նոր սերունդի աթլէթի բոլոր մար-
զումներուն: Ան քաջալերեց բոլորը, որպէսզի արձանագրեն
ախոյեանական լաւագոյն արդիւնքներ եւ պատուաբեր մրցա-
նիշներ, նախանձելի մակարդակ ապահովելու համար իբրեւ
Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներ, ինչպէս՝ Ռոզիկ Չոպանեանը
(մէկ քայլ ոստում), Կարինէ Այնթապլեանը (վազք եւ մէկ քայլ
ոստում) եւ դեռ ուրիշներ: Հետեւեցաւ անոնց երթին մինչեւ
Հայաստան՝ համահայկական խաղերուն, պարգեւով եւ միշտ
բարձր պահելով Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը:

Միշտ ժպտացող եղբ. Աբօն օր մը կը պառկէր հիւանդանո-
ցին մէջ եւ գաղտնի կու լար, կ'ուզէր տուն փոխադրուիլ,
առողջանալ եւ ապրիլ, հիւանդապահուհին լացը զգալով կը
հարցնէր պատճառը: Երբեք չլացող Աբօն յուզումը պահելով
կը պատասխանէր. «Հիմա ես ցած ձայնով կ'երգեմ», եւ ան
մնաց յոյսով, մինչեւ որ արիւնահոսութիւնը գինք փոխադրեց
յաւիտենականութեան գոգը:

Կը մաղթենք, որ Աստուած վարձատրէ գինք իր կատարած
բոլոր ծառայութիւններուն համար, որոնցմով ան օգտակար
եղաւ շուրջիներուն, մանաւանդ բարձր պահելու Հ.Մ.Ը.Մ.ի
դրօշը:

Վարձքդ կատա՛ր, եղբայր Աբօ:



«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Սիհրան Շիմշիրեանի մահուան Ա. տա-
րելիցին առիթով՝
Եղբ. Վարուժան Սերոբեան (Մոնթրէալ) 100 \$
- Եղբ. Գրիգորիս Պողարեան (Պէյրուս) 300 \$
- Քոյր Գարմէն Տէր Կարապետեան (Լոս Անձե-
լոս) 100 \$

ՀԱԿԱԿԱԶԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներն էին: Գերմանական եւ աւստրո-հունգարական զորքերուն կը դիմադրէին դաշնակից եռեակի ուժերը, որուն մաս կը կազմէին Մեծն Բրիտանիան, Ֆրանսան եւ Ռուսաստանը: Պատերազմը դաժան էր ու երկար:

1915 թուականի Ապրիլ 22-ի յետմիջօրէին, գերմանական խրամատներու կողմէ յայտնուեցաւ կանաչ ամպ մը: Զինուորները հետաքրքրուեցան քննեցին զայն, սակայն ոչ ոք կռահեց, թէ ի՞նչ կրնար ըլլալ ան: Պատմութեան առաջին կազային յարձակումն էր ան:



Տասը վայրկեանի մէջ մահացաւ հինգ հազար մարդ: Կանաչ ամպը թունաւոր քլոր էր: Հովու համապատասխան ուղղութեան սպասելէ ետք, գերմանացիները բացած էին հողին մէջ թաղուած կազի խողովակները եւ կազը ուղղուած էր թշնամիի խրամատները: Կազային յարձակումին առաջը կարելի չեղաւ առնել:

Շ ու տ ո վ ,
Ֆ Ր ա ն ս ա ց ի ,
անգլիացի եւ
ռուս պատասխանատուներ հանդիպում մը




ունեցան եւ սկսան մտածել, թէ ինչպէ՞ս կրնան յաղթել գերմանացիներուն: Ամէն մէկը ներկայացուց իր առաջարկը, բայց բոլորն ալ մերժուեցան, որովհետեւ իւրաքանչիւր առաջարկ ունէր իր անպատեհութիւնը: Վերջապէս, բոլորը եզրակացուցին, որ կարելի չէ պայքարիլ կանաչ ամպի դէմ, այլ պէտք է միջոց մը գտնել անկէ պաշտպանուելու համար: Յարմար նկատուեցաւ պատրաստել գլխու յատուկ սարքեր, որոնք կրնային զինուորները պաշտպանել նման յարձակումներէ: Այսպէս ծնունդ առաւ հակակազի սարքեր պատրաստելու գաղափարը, որուն գլխաւոր հեղինակը հանդիսացաւ ռուս քիմիագէտ Նիքոլայ Զելինսկի:

Զելինսկի ուսումնասիրեց գերմանացիներու կողմէ օգտագործուող կազի տեսակները եւ ըստ այնմ պատրաստեց յատուկ սարքեր, որոնց մէջ ածուխի տեսակ մը կ'օգտագործուէր թունաւոր կազերը մաքրագտելու եւ զինուորները անոնց վտանգէն պաշտպանելու համար:

ՀԱԿԱԿԱԶԸ

Հակակազը մարդուն շնչառական օրկանները, աչքերն ու դէմքը թունաւոր նիւթերէ, փոշիէ եւ օդին մէջ կազի կամ գոլոշիի ձեւով գտնուող այլ նիւթերէ պաշտպանող սարք մըն է: Ան բաղկացած է գտող, կլանող տուփէն, որուն մէջ ածուխի փոշի է: Ան կը մաքրէ շնչող օդը եւ մաքուր օդը խողովակի միջոցով դէպի դիմակ կը բերէ, իսկ դիմակէն կը փոխանցէ դէպի թոքերը: Հա-





Ռուս քիմիագետ Նիքոլայ Չելիցնսկի



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:

Հ ս կ ա յ ա կ ա ն հնոցին մէջ պատրաստուած,

կաթայ մը կայ սիրուն, կլոր: Պատրաստողը որքան ծայրէն կտրէ,

Նորէն ան կը դառնայ կլոր:

(Հանելուկին հեղինակն է Ներսէս Շնորհալի: Նախորդ հանելուկին պատասխանն էր գիրք):



կակազը կազմուած է դիմակէն, ապակիներէն, հակակազի ամանէն եւ գտող, կլանող տուփէն: Որպէսզի հակակազը օգտագործման ժամանակ չքրտնի, ակնոցներու մէջը, ներսի կողմը գետեղուած են փոքր խողովակներ: Հակակազեր կան մեծերու (17 տարեկանէն վեր) եւ երեխաներու համար (5-17 տարեկաններ):

Հակակազերը պէտք է ըլլան ճիշդ ընտրուած, որպէսզի դէմքին վրայ լաւ հանգչին, այնպէս մը որ թունաւոր օդը չթափանցէ մարդու շնչառական օրկանները: Զանոնք գործածելէ ետք, պէտք է անպայման մաքրել եւ ապա գետեղել տուփի մէջ, որպէսզի թունաւոր նիւթերէ մաքրուին: Հակակազը կ'օգտագործուի այն ժամանակ, երբ արտակարգ վիճակ է եւ օդը թունաւորուած է: Հակակազը կը հանեն միայն այն պարագային, երբ վստահ ըլլան, որ օդը թունաւորուած չէ:

ԿԱԶԸ

Առօրեայ մեր կեանքին մէջ, կազ ըսելով կը հասկնանք մեթանը, որ կապոյտ բոցով կ'այրի խոհանոցի կազասալիկին այրիչին վրայ: Զայն կը ըստանանք կազի ստորգետնեայ հանքավայրերէն: Վնասակար խառնուրդներէ մաքրելէ ետք, զայն խողովակներով կամ յատուկ շիշերով կը մատուցեն գործարաններուն եւ բնակարաններուն: Կազ կարելի է ստանալ նաեւ այրուող հանածոները՝ ածուխը եւ թերթաքարերը յատուկ ձեւով մշակելով: Քիմիագէտները կազէն կը ստանան սինթետիք թելեր՝ հագուստներ պատրաստելու, փաթեթանիւթ՝ շուտ փճացող սննդամթերքները պահելու համար:

Բայց միայն մեթան կազի տեսակ չկայ: Կազեր են նաեւ թթուածինը, զոր մենք կը շնչենք, ածխաթթուական կազը եւ այլն: Կազերը շատ են: Օդը, օրինակ, քանի մը տեսակ կազի խառնուրդ է:



Տարբեր Հայեացքով



Fil Dunskey
<http://be.net/dunskey>

ՍՈՒՏՈՔՈՒ

		2		3		8		
	3			7			4	
7			4		6			5
		3	7		5	6		
6	4						5	3
		9	1		3	2		
2			8		7			9
	7			1			8	
		5		2		7		

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուելով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիինց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը


5	4	9	6	8	7	2	3	1
2	6	8	5	3	1	9	4	7
3	1	7	9	4	2	6	5	8
6	3	1	7	2	4	8	9	2
7	9	2	1	5	8	3	6	4
4	8	5	3	9	6	1	7	2
1	7	4	8	6	9	5	2	3
8	5	6	2	7	3	4	1	9
9	2	3	4	1	5	7	8	6

Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Գանատայի ֆուլթայոլի ազգային խումբին մարզիչը:
- Ընկոյզի կանաչ կեղեւ - Պատմական բերդաքաղաք՝ Վանայ լիճի ափին (հակ.):
- Իւրացուցի - Պառակտումի սերմ - Յետոյ:
- Զիթաղացի քար - Փափաքիլ:
- Պալթեան ոստան - Կրկնուած բաղաձայններ - Ծովեզերեայ շրջան՝ Հնդկաստանի մէջ:
- Որձակ - Այծի փոքր ձագ:
- Յովհաննէս Թումանեանի երկերէն - Ժխտական մասնիկ (հակ.):
- Ոտքի բթամատ - Դալարիք:
- Տիւ ու գիշեր - Տեղական մակբայ - Յուցական ածական:
- Աղեկատ - Ղազարոսի քոյրերէն:
- Հոմանի - Դրկից գիրեր - Երաշխիք:
- Կրկնուած բաղաձայններ - Զիու հեծանելիք - Որսի կենդանի:
- Կաթսայ - Երէց - Թաց, խոնաւ:
- Կլայեկ - Ընդարձակ:
- Զին թենիսվումըն - Նափոլէոն Ա.ի աքսորավայրերէն - Բիւզանդական շրջանին՝ կայսերական մակդիր:
- Իրերայաջորդ տառեր - Տերեփուկ - Սպասուած փրկիչ:
- Ծառի կոճղ - Վախկոտ - Զրային փոխադրամիջոց:
- 1988-ի ողիմպիականները հիւրընկալած քաղաքը - Ծառաշատ տարածք - Դրկից գիրեր:
- Մեծ մայր - Ընդունիր - Սարմէնի երկերէն՝ «... Ծայնով»:
- Դոնդող - Ողիմպիական դրօշին՝ Ովկիանիան խորհրդանշող օղակը - Տաղաւար:


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ՈՒՂԱՀԱՅԵԱՑ

- Սիլվեսթրը Սթալոնի ֆիլմերէն - Դիտուելու արժանի:
- Ամսանուն մը - Անձնական դերանուն - Գեղամ Սարեանի երկերէն:
- Յոյժ - Բաղնիք առնել - Դնդեր:
- Ափրիկեան մայրաքաղաք - Թիւ մը - Փոխարժէք - Անհատ:
- Աղաղակէ՛ - Մտածում - Վաղեմի:
- Բարձրաստիճան կղերական - Յորենի հատիկ:
- Տառի մը դրացիները - Նախաճաշիկ - Ռուսերէն՝ այո՛ - Կրկնուած բաղաձայններ:
- Արական օտար անուն - Նիւ Մեքսիքոյի մայրաքաղաքը - Կոճակի օղակ:
- Վազք - Ամբողջ, կատարեալ:
- Ծածկոց, սփռոց - Զեխ թենիսմէն:
- Կիպրական նաւահանգիստ - Իրերայաջորդ գիրեր - Ողիմպիական «դեղին» ցամաքամասը:
- Կրկնուած բաղաձայններ - Այբուբենէն - Դրկից տառեր:
- Քինաթաքոյց - Աստուածային - Կրկնուած բաղաձայններ:
- Հանքատեսակ (հակ.) - Հայաստանի լեռներէն - Վերտիի օփերաներէն:
- Փոթորկայոյց - Մանչեսթրը Եռնայթրտի մարզիկներէն (որոշիչ յօդով):

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 217





ARMENIAN
GENOCIDE
CENTENNIAL



UNLAWFUL

Support us Support the Armenian Cause #HOMENETMEN DAMASCUS